



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1984

1999

522

ՎՐԷԺ

ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ

ԵՒ


ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ



ԳՐԵՅ Տ. 1.

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Թ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆ




Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. ԹՕՂԵԱՆՅ

)(1871)(

ԱՐԷԺ




43955-4.2.




ՎՐԵՃ

ՎԷՊ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ



ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԹԱԴԷՈՍ Ա. ԱՆՏՕՆԵԱՆ



28010-629

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. ԹՕՂԼԵԱՆՑ.

((1871))



1984

THE UNIVERSITY OF




OF THE STATE OF

MISSISSIPPI

28 1990

1984-100



1984

THE UNIVERSITY OF

MISSISSIPPI

Ա.

Հ ԱԶՈՐ ՈՒԹ՛ՀԱՐԻԻՐ ՎՍԹՍՈՒՆՈՒՎՆԵՑ ապրիլի մէջն եմք. Պայծառ երեկոյ մը երկու երիտասարդ թեւ թեւի տուած Իւսկիւտար Պաղլար Պաշի մեծ փողոցը կպտտին : Հիմայ խումբ մը տարիքնին առած մարդիք զարմանալով պիտի հարցունեն. Իւսկիւտար ե՛րբ մարդացաւ, ե՛րբ չէնցաւ, ե՛րբ Պաղլար Պաշիի պէս պատուական ճեմելիք ունեցաւ : Մեր տղայութեան տոնն երբ այդ խեղճուկ դիւղին վրայ խօսք ըլլար, զայն Սաֆրանպօրուի պէս տեղ մը կհասկնաւ յինք : հիմակուանները Իւսկիւտար ըսած ատեննին բառը բերաննուն մէջ արձագանք կուտայ : — Իրաւունք ունիք Պարոնայք, իմ պապս ալ կպտտէր որ Եէնի մահալլէէն մինչեւ Պաղլար Պաշի ելնելու կվախնան եղեր սակէ վաթսուն տարի յառաջ, քանի մ'անգամ Ս. Կարապետ Եկեղեցւոյ ժամակոյժ մազ մնացեր գայլերու կեր պիտի ըլլայ եղեր Վանքին Պաղին մէջ՝ սաստիկ ճմռան գիշեր մը. բայց ի՛նչ փոփոխութիւն անկէց 'ի վեր. այսօր նաւամատոյցէն ե՛լ, նորաչէն քարայտակը բռնելով չիտակ գնա՛ մինչեւ Սլեմտաղի, ես երաշխաւոր եմ որ չե թէ գայլ, հապա կատու անգամ ճամբադ չպիտի խափանէ : — Հապա շուները՞. պիտի բսես : — Ա՛հ, այդ ուրիշ, ընթերցող չիտակը խօսելով աննց համար պատասխանատու չեմ կրօ-

Նար ըլլալ . քաղաքակրթութիւնը որչափ յառաջ կերթայ ,
այս անիծեալ կենդանիներն ալ այնչափ կշատնան մեր
երկրին մէջ : Վերջապէս Տաճկաստանի համար ժամանակը
պարապ չանցնիր բոլորովին . նա քիչ շատ շաւիղ-կճգէ հոն ,

Ներէ , ընթերցող եթէ խօտորումս երկարեցաւ . Յիշ-
եալ երկու անձինքն ազուր հազուած երիտասարդներ են .
մէկը որ կրնայ բարձրահասակ ըսուիլ , բարեկազմ է և
հազիւ կայ քսան տարեկան . Եւրոպական տարազով
կտրուած խարտեաչ մազերը ծածկուած են սովորականէն
քիչ մը փոքր ֆէսով , որ աւելի դէպ 'ի ճակատը միտած
ըլլալով , դլխուն ետեւի կողմը կէս գնտաձև կերպարանք
մ'է առած . յօնքն որ մազերուն գոյնն ունին , սակաւ
ինչ աւելի թուիս , աղեղի նման սլատած են ազու աչերն .
բերանը փոքր , չթունքը շառագոյն . բայց դէմքին վրայ
սակաւ ինչ գունատութիւն կայ . եթէ խնդայ՝ բերանը
քիչ մը կբացուի . և այն ատեն ձիւնի նման մարգարիտ-
ներու երկու շարք ամենէն անդութ օշիօրդներն իսկ փոք-
ճութեան մէջ կրնան ձգել : Ղէմքին սմբողութեանը
վրայ անանկ հանճարեղ լրջութիւն և սիրունութիւն կայ
որ տեսնողը զանի չկրնար չսիրել և չյարգել : Այս երի-
տասարդն է Չարեհ Ներսէսեանց :

Ընկերն է իրեն բազդատմամբ կարճահասակ թխադէմ ,
մազերն ու աչերը սև և իրմէ մէկ երկու տարեկան մեծ
երիտասարդ մը : Թէպէտ երեսի գիծերուն մէջ անկանոն
բան չիկայ . բայց անդամ մը երեսը նայողը անշուշտ ծի-
ծաղ մը պիտի իմանայ , առանց հասկնալու թէ ինչ ծի-
ծաղաչարժ բան կայ անոր վրայ : Այս անձը որոյ հետ
Չարեհ շատ ընտանի կերելի , կըսուէր Պարոն Մկրտիչ
Միշեանց . այս սնունը կրճատուելով բարեկամաց բերա-
նը Մկրտէր եղեր . ինքն ալ չէր ընդդիմացած անոնց կամ-
քին և այս կարճ ու կրճատ անունով կստորագրէր սովոր-
ութար , Այս երկու պարմներուն քայլածքէն , հա-

գուտանին կրելու կերպէն և ձևերէն յայտնի է որ դիւ-
րակեաց ընտանիքէ են , Հիմայ որ հեռուէն բաւական
ճանչեցինք զանոնք , մօտենանք քովերնին և խօսակցու-
թիւննին մտիկ ընեմք . փորձով հասկնալու համար թէ
ամէն ժամանակ երեւոյթը խաբեբայ կըլլայ :

— Այս երեկոյթին համար Տիկին Մաքրիկին խօսք
տալու չէիր , կըսէր Մկրր :

— Ա՛հ , չես գիտեր ինչ ցաւեր կան գլուխս , պա-
տասխանեց Չարեհ , այդ կնոջ ձեռքէն չեմ կրնար օձիքս
ազատել . տարին անցաւ որ գերի ըրած է զիս իրեն :

— Բա՛րեկամ , այդ խօսքիդ մէջ դէմքի սխալ կայ .
պէտք է ըսես , գերի ըրած ե՛ս զիս իրեն , Եւ այդ գե-
րութեան չափ անոյշ բան չիկար քեզի համար եթէ

— Եթէ ի՞նչ , հարցուց խստիւ մը Չարեհ :

— Կհասկնաս ա՛ . եթէ Օրիորդ Չարուհին տեսած
չըլլայիր Հա՛ , աղէ՛կ նշմարեցի , չարունակեց Մը-
կրր . ինչ աղւոր նմանաձայնութիւն կայ Չարեհ և Չա-
րուհի անուններուն մէջ . կարծեմ երկրորդը առաջինին
իգականն է . յարեց քմծիծաղով մը . գիտես որ հայե-
րենի մէջ ո՛հէ մասնիկը իգական կշինէ . մեր լեզուի հե-
ղինակները թէպէտ չեն ուզած լեզուն դժուարցնել քե-
րականութեան մէջ սեռ ընդունելով , սակայն հոգի ունե-
ցող բաներու համար այսչափ զոհողութիւն ըրեր են .
ինչպէս սուրբ , սրբուհի . վարժապետ , վարժուհի . Չա-
րեհ , Չարու :

— Կաղաչեմ քերականական դիտողութիւններդ ու-
րիշ ատենի թողուիր . իրաւ կըսեմ որ Օրիորդ Չարուհւոյն
համար չէր խօսքս . ըսաւ Չարեհ . թողումք սա կէտը որ
այդ կնոջմէն ամենեւին չնորհ մը չունիմ տեսած հակառակ
ամեն զոհողութեանց , դու ինէ աղէկ գիտես որ այդ կինը
գործերուս ալ արդեւք կըլլայ :

— Այո՛ , և քենէ ալ յառաջ գիտեմ որ Օրիորդ .

Զարուհին տեսած օրէդ 'ի վեր կնկատես այդ բանը :

— Եւ եթէ անոր հետ յորաբերութիւններս քիչ մ'ալ չկարեմ , միտիլի իրայ պիտի նստի խեղճ հայրս որ այս օրերս նորէն փոխառութիւն ըրած ըլլայս իմանալով սա նամակը գրերէ :

Զարեհ գրպանէն նամակը հանեց և կարդաց հետևեալ տողերը :

« Զաւակս ,

« Մահուան անդունդին եզրը հասած պիւտոր հայրդ
« աշխատութեամբ աչօք կպաղատի որ դու թ ունենաս վրան :
« Գիտես որ հաղիւ հինգ հազար ոսկոյ վաճառքի տէր ,
« ասոնք դրամի փոխեցի և տէրութեան արժէթուղթ
« առի որ հաղիւ յիտուն հազար զուրուշ կբերէ տարին :
« Ս.յս գումարէն քսան և չարս հազարը քեզի յատկա-
« ջուցի , և որպէս զի այս զոհողութենէս կբերիք նեղու-
« թիւնս շատ զգայի չըլլայ , Պօլիսէն հեռացեր և եկեր
« Պրուսայի մէկ անկիւնը առանձնացեր եմ : Ս.յս ամեն
« բան որի՞ համար . եթէ ոչ քեզի , դու որ միակ որդիս
« ես և միակ մխիթարութիւնս ես որպէս զի կարող ըլլաս
« առանց կարօտութիւն քաշելու բժշկականութեան պարա-
« սել որոյ համար այդչափ եռանդ ունիս : Եւ քանի որ
« ամառական երկու հազար զուրուշ անխախտ եկամուտինք-
« նին հարստութիւն ըսել է , գարձեալ փոխառութիւններ
« ալ կընես եղեր . գիտես որ զանոնք չպիտի կընամ վճա-
« րել իմ անձնական եկամուտէս որ հաղիւ կբաւէ ինձի
« պատիւս պահելու համար , կուզե՞ս որ դրամագլուխս ալ
« ձեռքէ հանեմ : Բայց լաւ մտածէ , սիրելիդ իմ Զարեհ ,
« այն ատեն միայն ես չեմ նեղութիւն կրեր , հասցա դու-
« ալ . իմ չքաւորութիւնս շատ չտուէր կվերջանայ բոլո-
« բովին , բայց դու որ դեռ նոր սկսար ապրիլ , ի՞նչ պիտի
« ըլլայ ասպաղայդ : Ս.յս օրերս երկու հարիւր վրայի փո-
« խանակաղիր մ'ալ ստորադրեր ես . հոդ չէ . բայց սիրելի

« զաւակս , խօսք տուր որ այս վերջինը ըլլայ :

« Գորովաիր մայրդ ալ իւր ճայնն իմինիս հետ կմխայք .
« նէ և կազաչէ որ ապագային մէջ աւելի կանոնաւորես
« ապրելու եղանակդ :

« Մերունի հայրդ »

« Յակոբ Աերսեսեանց »

Այս նամակը կարդացած ատեն Ջարեհ՝ արտասուքի մեծկակ կաթիլ մը չկրցաւ բռնել . և գրգռանէն թաշկիւն նակը հանելով ,

— Իբրաւունք ունի , ըսաւ . ժամացոյց կուղէ , կառնեմ , չհաւնիր . ուրիշ մը բերել կուտայ Անտրայէն , ոսկի շրջ-
թայ կուղէ . կարծեմ ամսը հատ եղաւ որ փոփոց . նոր մ'առնել կուտայ առանց առջինին վրայ խօսք ընելու .
Երջագրեալի դալով , ծորան չըմնցաւ , բարեկամ . գրե-
թէ ամեն շարթու նոր հազուամի ստակ տարու եմ . քան-
զի ամեն շարթու նոր ծորան կենէ եղեր , բաժնին նայելով :

— Աղէկ . դո՛նէ ամեն շարթու վրան նոր զգեստ կը տեսնե՛ս :

— Ի՞նչ գիտեմ . ուշագրութիւն չեմ ըներ որ . ո՛հ . քովը դացած ժամանակս զննելու այնչափ քաներ կան որ հագածը աչքիս անգամ չերեւար :

— Ահապիսամ . իբրև ապագայ բժիշկ , բնութիւնը մտէն կզննես . նոր գիւտ ընելու համար : Անդամազըն-
նութեան մէջ գլուխ մ'աւելցունելու չափ նիւթ պատրաս-
տեցիր դո՛նէ :

— Ա՛հ , չես գիտեր , Մկրր , երեսներէն լոյս կցուայ :

— Ուրեմն անոր համար ըլլալու է որ անոր սաւնը եղած երեկոյներդ սենեակին մէջ ճրագ չվառիր :

— Անպիտանը այնչափ խտապահանջ որ չըլլար , ի՞նչ աղէկ էր :

— Ջարեհ՝ ընդ արեգակամբ սակաւապէտ կին մը գանուած օրը ես ալ բոլոր անձս սիրահարութեան պիտի

աամ : Իգական սեռը անյատակ վիճէ . զանի գոհ ընելու համար որչափ հալիս մաշիս դարձեալ չես կրնար . ալ պահանջելիքն որ հատնի , գլխուդ միտը կուտէ , — ե՞րբ թագաւոր պիտի ըլլազ որ զիս թագուհի անուանեն կրտէ : Մանաւանդ հիմակուան նորահասները բարի յատկութիւն մ'ալ աւելի ունին . ինքզինքնին նորաձեւութեան տուած , Արեւելքցւոցս համար իգական սեռի վրայ նախամեծար սեպուած համեստութիւնը գլխովին մոռցած , ընկերութեան մէջ գտնուած ատեննին , քովէդ կառնեն կքալեն ըսելով . — Մէնի-Շուրի հետ Գորբէյլ պիտի խաղամ անկո՛ւտ եմ : Ալ որ կրնաս , համբերէ :

— Բայց ո՞րչափ տարբեր է , Չարուհին ըսաւ Չարեհ . ի՞նչ համեստ , ի՞նչ պարկեշտ աղջիկ :

— Հա՛ . հիմա բռնեցի . կրտէ Մկրտիչ վեր վեր ցատկելով . ալ ասկէ յետոյ բան չունիս նէ ուրացիր . նայիմ կրնաս կլլեցներ :

— Շատ կսխալիս , Մկրր , եթէ կարծես որ Չարուհւոյն համար ունեցած զգացումս բարեկամութեան և յարգանաց սահմանէն անդին անցնի . չգիտեմ ինչու համար այն աղջիկը ասկէ տարբեր զգացում չազդեր սրտիս :

— Ա՛հ , ա՛հ , ա՛հ . բրաւ Մկրր խնդալով . քսան տարեկան տղայ մը դեռափթիթ և հրաշատիպ աղջիկ մը չսիրեր , այլ կյարգէ եղեր : Այդ սկզբունքին խելքս չհասաւ . մարդ չսիրած մէկը ինչպէ՞ս կյարգէ , բարեկամ :

— Հասկցայ կրտէ Չարեհ . այսօր դու հոետոր կտրեր ես . քիչ մը յառաջ քերականութիւն դաս կուտայիր . հիմայ տրամաբանութեան ցատկեցիր :

Չարեհ խօսքը փոխեց և ,

— Խեղճ հայրս , ըսաւ , գործին ճամարիտ վիճակը չը գիտեր . կկարծէ որ բժիշկ պիտի ըլլամ . քանի որ վեց ամիս եղաւ որ բժշկական դպրոցէն ելեր եմ : Ի՞նչ ընեմ . հոն ճշդութիւն կուզէ . եթէ ոչ քննութիւն չեմ կրնար

տալ . սաղին գործերը չեն ներեր ամեն դասերու ներկայ գտնուելու :

— Անտարակոյս . բայց կարծեմ այդ երկու գործերը խիստ առնչութիւն ունէին իրարու հետ . դպրոց կերթալիւր անդամազննութեան տեսականը սովբելու , և սաղին գործնականին կրթութիւն կնէիր : . . .

— Ես հիմայ միտքս փոխեցի . մասնաւոր դասատու բռներ եմ , իրաւագիտութիւն կտորվիմ . որ օրմը քաղաքական սուպարէզը մտնեմ , ուր աւելի փառք կայ , քան թէ բժշկականութեան մէջ : Ինչ անմտութիւն է ըրածս . պէտք չէ՞ր որ վիճակիս փոփոխութիւնը մինչեւ հիմա հօրս իմացունէի : Տուն դառնալուս պէս առաջին գործս պիտի ըլլայ նամակ գրել իրեն :

— Յետոյ :


— Յետոյ գիտես ընելիքս . Տ . Մաքրիկին խօսք տըւեր եմ , կերակուր ուտելուս պէս պիտի երթամ . քանի որ դու ալ ինձ հիւր ես , իրաւասութեանս ներքե կհամարիս . զքեզ ալ հետս պիտի տանիմ :

— Կհնազանդիմ սա պայմանաւ որ տիկնանց վրայ ունեցած դիտողութիւններս բանձրաձայն պիտի ըսեմ . մէկ եր'լրորդ՝ կատակաբանութիւններուս համար յանդիմանութիւն պիտի չլսեմ :

— Սա պայմանաւ որ դիտողութիւններդ կանանց նըպատուար պիտի ըլլան , կատակներդ կ'ծու պիտի չըլլան :

— Ս,յս պայմանները փորս չեն կշտացնէր . ըսաւ Մըկըր . երթանք հաց ուտենք :

Եւ քայլերնին դէպ ի տուն ուղղեցին :



պոյնքն անոնք ք մնա քոյնքն մնէ քոյնքն ք մի քոյն ք
 քոյնքն ք մնա քոյնքն մնէ քոյնքն ք մի քոյն ք
 քոյնքն ք մնա քոյնքն մնէ քոյնքն ք մի քոյն ք
 քոյնքն ք մնա քոյնքն մնէ քոյնքն ք մի քոյն ք
 քոյնքն ք մնա քոյնքն մնէ քոյնքն ք մի քոյն ք

Բ

Սէլամիյէ մեծ փողոցը փառաշէն տուն մը ապակիճե-
 րուն վրայէն ճաճանչաւոր լոյս մը ցոլանալով դիմացի կար-
 դի շէնքերուն ճակատը կլուսաւորէ : Ժամը գիշերուան
 երեքն է :

Ս,յս տան ամեն յարկերը ճրագներ կվառին , և հոն
 եղած շարժումներէն կերեւի որ մեծ ուրախութիւն կը
 տիրէ այս գիշեր . — այս գիշեր ըսի , վասն զի անկարելի է
 որ մաղդկային բնութեան մէջ ամեն օր և ամեն ժամ
 ուրախութիւն ըլլայ : Եթէ կարելի ըլլար այս , այն տոնն
 այնչափ հաճոյական բան չհամարիր . արտաութիւնն է որ
 ուրախութիւնը փնտռել կուտայ մեզի . ինչպէս խաւօքը
 գիտնալով է որ լոյսէն այնչափ կախորժիմք . — թէպէտ
 ոչ ամեն ատեն :

Ընթերցող , բունէ ձեռքէս . քեզի հետ մտնենք այս
 տան մէջ , և եղածն ու պատահածը այնչափ համարձակ
 զննեմք , որչափ որ վախ չունիմք որ մէկն զմեզ տեսնէ :
 Դունէն ներս մտնելով : քառակուսի թուխ մարմարիննե-
 րով հարթուած բակ մը կդանուիմք , զոր կլուսաւորէ կա-
 ղի կանթեղ մը . աջ կողմի դիմացնիս օձապտոյտ սան-
 դուղք մը կայ որոց աստիճանները ծաղիկ բանուած դոր-
 դերով ծածկուած են : Ս,յս սանդուղքն զմեզ կհանէ
 սրահ մը , ընդարձակ , լուսաւորեալ իրրեւ ի տուրնջեան ,
 երկու ընտիր բաղնաօտեղն աշտանակներով որ ամեն մէկը

հինդ ճրագ կկրէ . և երկու մեծահատոր կանթեղներով
որք աչք շլացնող կազի լոյս մը կարձակեն : Քամասկոյով
զարդարուած նստարաններ և թիկնաթուռներ սրահին ճա-
կատն ու երկու կողմը շարուած են . պատերը զարդար-
ուած են գեղեցիկ նկարներով : Մեծ հայելիի մը ստորոտը
կկենայ ընտիր դաշնակ մը որոյ վրայ ցրուած են ճայ-
նադրութեան քանի մը սետրեր : Պիմացէ դիմաց երկու
սենեակ կայ աւելի ընտիր կարասեօք . բոլոր գեոթինները
թանկագին դորդով ծածկուած են :

Հոս ժողոված ընկերութիւնը ընտիր հագուած երի-
տասարդներէ , օրիորդներէ և տիկիներէ կբազկանայ :
Տիկին մը , երեսունն անցած , ամեն եկողին պատիւ ը-
նեղէն կհասկցուի որ տանտիրուհին ըլլալու է . այս ման-
կամարդ կինը գեղեցկութեան մէկ սքանչելի տիպարը
կրնայ համարուիլ . բնութիւնն ամենէն հաղուադիւտ նու-
էրներովն օժտած էր զանի . բարձր հասակ մը , սև մա-
զեր , սիրուն և վառվռուն աչեր , փոքրիկ և վայելուչ բե-
րան մը ուր ժպիտը պակաս չէր . այս ամեն յատկութեանց
հետ երեւակայէ լոյսի նման սպիտակութիւն մը : Արուես-
տական զարդերը զոր ամենայն վայելչութեամբ կկրէ ,
կատարելապէս զանի բնութեան մէկ հրաշակերտը կը
դործեն : Աուրժքն 'ի վար վարդածև կոճակներով զար-
դարուած ո՛նգւլն շրջազգեստը բաց կթողու այնպիսի վիզ
մը , այնպիսի մարմարեայ կուրծքի ծայր մը որ մարդոյս
միտքն ու սիրտը մէկէն կյափշտակէ : Պլուխը պսակ ունի
որոյ երկու կողմը մէյ մէկ կապոյտ ժապաւէն կիջնայ , ա-
սոնց՝ արուեստական լուսով որոշել կարելի չեղած գոյնը
սովորականէ մանր ականջները կախուած օղբրուն մեծաղին
քարերուն վրայ կը խաղայ : Տիկին Մաքրիկ էր նա ,
գեղանի և հանճարեղ կին մը . հարկ չեմ տեսներ ըսել որ
քիչ մ'ալ սչրող . վասն զի ինքնին կհասկցուի որ երբ կին
մը բնութեան իրեն պարգեւած ձիրքերը ճանչըու չափ

հանճար ունենայ, բնականաբար այն ձիրքէն օգտելու իդ՝
ձրն ալ կկրէ սիրտին մէջ :

Տ. Մաքրիկ հեռոզհեռէ եկող հիւրերուն մէյ մէկ մե-
ծարանաց խօսք կգտնէր : Այս երեկոյ եօթնի չափ ընտա-
նիք կան ժողոված : Խմբակներու բաժնուած են, որը մէկ,
որը միւս սենեակը, որն ալ սրահը, կերդեն, գաշնակ կը
զարնեն, կամ կպարեն : Մաքրիկ առանց որոշ տեղ մը
կենալու աստ անդ կշրջի, հիւրերը գոհ ընել կաշխատի .
բայց այս պզտիկ խնամքներուն մէջ մտազբաղ պիտի տես-
նէ ուշադրութեամբ իրեն նայող մէկը . միշտ միջոց մը կը
գտնէ դէպ ի սանդուխք ականջ դնելու և սպասուհին
կանչելով մտատանջութեամբ բան մը հարցնելու համար :
Երբ դուռը զարնուեցաւ, Մաքրիկ կարծես մեքենայա-
բար տեղէն ցատկեց, և սանդուխքին գլուխը վազեց : Ե-
կողներն էին Չարեհ և Մկրտիչ :

— Բարի երեկոյ, Տիկին, ըսաւ Չարեհ թեթև կեր-
պով ձեռքը սեղմելով, ահա եկանք . կտեսնէք որչափ ու-
շադիր եմ խօսքս բռնելու . ժամը երեքին կուգամ ըսի .
հազիւ հինգ է անցեր երեքը :

— Ենորհակալ եմ, Պարոն, ձեր խօսքին հաւատարիմ
ըլլալնուդ երբէք տարակոյս չեմ յայտնած . բայց շիտակը
զրուցելու համար այս երեկոյ քիչ մը անհամբեր ըրիք զիս :
Եստ ուրախ եմ Պարոն Մկրտն հետ բերելնուդ, յարեց
Մաքրիկ դէպ ի ասոր դառնալով և գլխովը զանի ողջունե-
լով . անոր ընկերութիւնը ամեն ատեն ակորովիլի է ինձի :

— Եստ ազնիւ էք, Տիկին, պատասխանեց Մկրտեթէ
բարեկամս շտիպէր, չպիտի համարձակէի զձեզ ձանճրացը-
նել այս երեկոյ :

— Ընդ հակառակը, Պարոն, շատ գոհ եմ գալերնուդ :

Այսպէս խօսելով ընկերութեան մօտեցած էին երբ Տ .
Մաքրիկ զանոնք ընկերութեան ներկայացուց բարձրաճայն
ըսելով :

— Ահաւասիկ Պ . Չարեհ և բարեկամը Պ . Մկըր :

Մէկէն ամենուն աչքը նորեկ երիտասարդաց վրայ դարձաւ որք ուրախութեան աղաղակներով ընդունուեցան :

Այս ընդուննելութենէն յետոյ իւրաքանչիւր ոք դարձեալ իւր զբօսանացը կնայի : Մկըր միջոց մը կբաժնուի բարեկամէն և դաշնակին գլուխն անցնելով կսկսի . Մայր արաքսի աիերով , եղանակը զարնել . և մինչդեռ խումբ մ'օրիորդ և երիտասարդք դաշնակին հետ երգ ալ կերգեն , Տ . Մաքրիկ Չարեհի քով թիկնաթուի վրայ կնստի :

— Այս դիչեր կչացնէք զիս , Տիկին , կբսէ Չարեհ սիրաբորբոք հայուածք մը դարձնելով Մաքրիկի վրայ :

— Շողքորթ , ըսաւ ասի գլուխն երերցնելով :

— Ինչէ՞ն . հարցուց Չարեհ լի զարմանօք և հիացմամբ :

— Վասն զի թէ որ այդ ըսածդ շողքորթութիւն չըլլար , ո՞յ էնէր չէիր ըսեր :

Այս խօսքն ըրած ատեն սիրուն բերնին վարդագոյն շրթունքն թեթև ժպիտով սակաւ ինչ ծաւալելէն ձախ այտին վրայ անանկ վայելուչ խորութիւն մը ձեւացաւ . և աչքերն այնչափ անուշ կերպիւ Չարեհին վրայ դարձան որ ասի հմայուելով սիրտն սկսաւ բաբախել :

— Ես խօսքս ետ չեմ առներ , պատասխանեց Չարեհ , ուրիշ անգամ չչացուցիք զիս , այլ հմայեցիք , այլ սիրտս ու հոգիս յափշտակեցիք :

— Ուրեմն այդչափ կօիրե՞ս զիս , Չարեհ :

Չարեհին դէմքին վրայ կարմրութիւն մ'երևցաւ :

— Տիկին , ըսաւ . այդ հարցումովդ կամ զիս ծաղրել կաղես կամ վշտացնել :

— Մի բարկանար . ես քու սիրոյդ վրայ տարակոյս չունիմ . միայն անոր որքանութիւնն ուզեցի գիտնալ , ըսաւ Մաքրիկ խնդալով :

— Մարդոյս դէմքը սրտին պատկերն է կբսեն . սակայն

քուկինիդ պէս պաշտելի կերպարանքի տակ այդ չափ չար սիրտ . . . լուսած բան չէ :

— Հիմայ կկոտորուանիս շողոքորթութիւնդ . քանի որ մարդոյս գէմքը սրտին պատկերն է . և իմ սիրտս ոչ չար է , ի՞նչ կհետեւի ասկէ , Պ . Չարեհ :

— Բայց տիկին , առանց բացառութեան կանոն չըլլար , անգթութեան մասին բացառութիւն մ'ես դու , ինչպէս նաև դեղեցկութեան :

— Եթէ այդ մեջ բերած վճռոյդ բացառութիւն միայն ես եմ , չեղածի պէս համարէ :

— Ինչո՞ւ :

— Սա պատճառաւ որ եթէ կարծածիդ պէս բնութիւնը յիրաւի անդուծ սիրտ մը տուած ըլլար ինձի , դու կարող պիտի ըլլայիր զայն գթած ընել :

— Ա՛հ , հրեշտակս ըսաւ Մաքրիկին ձեռքը գէպի բերանը տանելով :

— Կամաց , Չարեհ , ի՞նչ կընես , ո՛ւր եմք :

Մաքրիկին այս խօսքը Չարեհին խելքը գլուխը բերաւ : Թէպէտ սիրուհւոյն կարծածին չափ վախի բան չիկար . Մկրրին վարժ մատանց արտագրած եղանակը զամենըն զմայլեցուցեր էր . ասկէ զատ ընկերութիւն մը որչափ բազմանդամ ըլլայ , հոն սիրահարական ձեռնարկութիւններն այնչափ գիւրին կըլլան . իւրաքանչիւր ոք իւր քմայ համեմատ ընկեր և զուարճութիւն կընայ դտնել անանկ որ ուշադրութիւնը չաւելնար որ քովինին ըրածին դարցընէ : Երբ Տ . Մաքրիկ ձեռքը ետ քաշեց Չարեհ սթափեցաւ և տեսաւ որ պարի կպատրաստուին :

— Տիկին , ըսաւ , կյուստի որ կընկերանաք ինձի :

— Պահ մը յետոյ , Չարուհին առ . ես հիմայ չքադիր պիտի ըլլամ հանդիսին :

Հարկ չեմ տեսներ Օրիորդ Չարուհւոյն նկարագիրն ընել . ասոր պատկերը Տ . Մաքրիկինէն սա տարբերու .

Թիւնն ունի, որ աւելի թարմ է, վասն զի տարիքով շատ
պզտիկ է Մարբիկէն :

Տ. Մարբիկ զնայ դաշնակին առջեւ զոր Մկրը թու-
ղեր էր, և սկսաւ . Ի խումբ ի պար, զարնել : Երևտասարդք
սկսան պարել ընտրած օրիորդներնուն հետ, Մարք կէս մը
պարին ընծայած ախորժելի տեսարանով կըռարճանա-
լին կէս մ'ալ սիրասուն աղջիկներնուն արագ արագ շար-
ժումէն կարմրած այտերը տեսնելով : Հարք ոմանք ոչ
մէկէն բան մը կհասկնան, ոչ միւսէն . բայց և տխրեցն
անոնք ալ դո՛հ են աղջիկներնուն կամ մանջներնուն ցատկըռ-
տելը տեսնելով : Եւրոպական տարապով պարը մեր մէջ
նորաճևութիւն է . յորմէ շատ չեն ախորժիր որ մէկ խըս-
տաբարոյ հայրեր . կյիշեմ որ օր մը այս տեսակ պար սկըզ
բանցը գէժ եղող հայր մը իւր կնոջ հետևեալ դիտողութիւնն
ըրաւ :

29-01082

— Տիկին, մեր տղայութեան ատեն աղջիկի մը երես
աւելի նայող երևտասարդ մը կլամբասուէր . այս օր օտար
տղայ մը աղջկանս մէջքէն կըռնէ ու կցատկուտէ . ի՞նչ
դայթակցութիւն :


— Ի՞նչ ըսել է, հիմա ի՞նչ է . պէտք է որ աղջիկս
պարել գիտնայ, ըսաւ կինը կշտամբական դէմքով :

— Շատ աղէկ, Տիկին, ես չգիտնայ չեմ ըսեր . թէ
որ կիտախաքի, մինչև անդամ պատրաստ եմ իրեն պարի
դասատու բռնելու . բայց օտար տղու հետ պարել . . .

— Գու խելքդ չհասնիր Պարոն . միայն մայրերը խառ-
նուելու են ասանկ բանի :

Խեղճ հայրը վայրկեանի մը համար բռնի համոզուե-
ցաւ այս փաստին :

Մինչդեռ սրահին տախտակամանը պարող խումբին
ուրբին տակ կճչէր, ասդին Մկրը որ այս տեսակ գրօսա-
նայ ճաշակ չունէր, իրեն յարմար ընկեր գտնելու հա-
մար սկսաւ օհնեակէ սենեակ պտտիլ : Ետոտանսի մը վը-



բայ լուսանկարներու հաւաքածոյ կար, առաւ նայեցաւ, զանազան հնութիւններ մէկիկ մէկիկ աչքէ անցուց, այս լինցաւ, կսկսի սիրող ներդանալ, ետին կգառնայ կտեսնէ որ նստարանի մը վրայ պառաւ կին մը նստեր է այնչափ ընտիր հագուած և այնչափ անշարժ որ առաջին անգամ տեսնողը բազմաբուռտ արձան կկարծէ, Մկրը ուշով նայեցաւ և բիւրոն շարժումէն հասկցաւ որ կենդանի է:

— Այս Տիկինն ալ, ըսաւ ինքիբն Մկրը, ինձի պէս պարէն տխրած էրու չէ որ հոս առանձին կնտաի, հաշակնիս իրարու յարմար ըլլալու է ուրեմն: Երթամ հետը քիչ մը տեսութիւն ընեմ:

Քովը կմտենայ, բարի երեկոյ կմաղթէ, և կսկսի խօսիլ:

— Տիկին, կերեւի որ դուք ալ ինձի պէս պարէն բան չէք հասկնար. պարագայ հոգնութիւն է, այնպէս չէ:

Տիկինն ըսածը հաստատելու կերպով միայն գլուխը կշարժէ: Մկրը կշարունակէ:

— Այս յիմարութիւնն ալ նոր տիրեց մեր ազգին մէջ. մեր երկրին ամեն կողմ, վարժարաններ անգամ պարի դաս սկսեր է կրսնն. թէպէտ մէկ կողմանէ աղէկ բան է, ազդիկները կարգել դիւրին կըլլայ. այնպէս չէ, Տիկին:

Տիկինը կողմանէ գարձեալ միևնոյն շարժումը, առանց բերնէն բառ մը հանելու:

Մկրը այս կնոջ Զաքարեայի լուծենէն համբերութիւնը հատած, սրտնեղութեամբ և քիչ մը ձայնը բարձրացնելով,

— Տիկին, կըսէ, կարծեմ դուք բնիկ Իւսկիւտարցի ըլլալու չէք, վասն զի ուրիշ տեղ զձեզ անսած ըլլալ չեմ յիշեր:

Տիկինը վերջապէս լուծիւնն ընդհատելով,

— Այս, կըսէ: Այս առաւօտ ինձի կաթով սուրճ

առաւ աղջիկս . վաղն առաւ ալ պիտի տայ թէ որ այս
դիչեր խելօք կենամ , շատ չխօսիմ : բայց քթախաւ , ա՛հ
բորբալին արգիլեալ է ինձի . շատ արէկ վարք ունենալու
եմ որ շարածն անգամ մը քաշելու թող ասն :

Այս անգամ Մկրր դիմացինը ցնդած ու զտամեալ
պառաւ մ'ըլլայն հասկնալով առաւ քաշեց քովէն : Պարի
սրահը մտաւ ու տեսաւ որ պարը որ ժամե աւելի կշա-
րունակէր փոխանակ թաւնալու նոր աշխոյժ էր աւեր ,
աչքովը նշան ըրաւ Չարեհին՝ սրանե զուժիւնը յայանելու
մտօք : Չարեհ ընկերը ցոյց տուաւ որ այս անգամ Չա-
րուհին չէր այլ Մաքրիկ :

— Իրաւանք ունի , կըսէ ինքիրեն Մկրր . նախանձ-
ները դրդուելէ զգոյշ կենալու է . կհասկնամ , նոր սերը մը-
շակելով հանդերձ , նախնի սէրն ալ արծարծ պահելու է .
ա՛հ , իգական սեռին վրէժիմդ բուժիւնն ահարիու է :
Բայց . . . արէկ կնշմարեմ . Մաքրիկ Չարեհին նոր սիրոյն
փոխանակ նախանձելու կանուցանէ ալ . ինք եղաւ Չարու-
հին իւր տարփածուին ներկայայնող , ասիէ զսա ատենէ
ի վեր ամեն անգամ որ Չարեհ Մաքրիկին այցելու թեան
կերթայ , Չարուհին հոն կըսնէ . այս բազդի գործ է արդ-
եօք . չեմ կարծեր , բազդի գործ , մէկ , երկու , սա ա-
ռաւելն երեք անգամ . ամեն հեղ պատահմունք չկրնար
ըլլալ ա՛ . իմ մերձաւոր ազգականս է , կըսէ ելեր Մաքրիկ .
ոչ ազգականութիւն և ոչ ինչ . Հայ չե՛մք մի . ամեննիս ալ
իրարու ազգական եմք , կամ հօր եղբոր որդիներ կամ մօր-
եղբոր . թէ որ աւելի բարակը հաշուեմք , ամեն մարդիկ
իրարու ազգական են : Ինչեկցէ , հոս գազանիք կայ . ա՛հ
Չարեհ , ա՛հ . պէտք չէր որ քիչ մ'աւելի զգոյշ բնաւորու-
թիւն ունենայիր :

Մկրր այս խորհրդածութիւններն ընելով հանդերձ
մեքենայաբար քայլերը յառաջ կտանէր . մէյմ'ալ ինքզին-
քը առջի ելած սենեակին դիմացի սենեակը գտաւ , կը

տեսնէ որ չորս ծերունի նստեր ըիթ ըիթի կիսօրին . մէկը բան մը պատմելու ետևէ է . միւսներուն մատուցած ուշադրութենէն կհասկցուի որ հետաքրքրական և օգտաւէտ բան է պատմածը :

— Ո՛հ , կըսէ Մկըր . ահա վերջապէս ես ալ ինձի համեմատ զբօսանք դտայ . հարկաւ այս իմաստուն ծերունիները տղայոց յիմարական խաղերէն ձանձրացած , եկեր հոս ասպարէզ կուտան իրենց բազմամեայ փորձառութիւններուն որ աղբիւր են իմաստութեան , ինչպէս մեզուք երկար շրջադայութենէ հոգնած կդառնան փեթակնին , ուր որ հանգչելով հանդերձ քաղած հոտաւէտ ծաղկանց հիւթը կարտադրեն : Հարկաւ Սողոմոն պարագ տեղ ծերոց խօսքերը մեղրի չէ նմանցուցած :

Մկըր այսպէս խորհելով և անոնց խօսքերէն իմանալիք ախորժին կանխաճաշակովը մօտեցաւ ծերակոյտ խմբին և խորին պատկառանօք սկսաւ ականջ դնել :

— Ուստի սենեակս քաշուեցայ , կըօէր պատմող ծերը , որ Մակար կանուանէին , և լման երսունըհինգ օր յառաջ տարի . օրը մէկ անգամ նարեկը ծարէ ծար կկարդայի կլմնյնէի . ոչ արև տեսնել կայ , ոչ մարդու երես . հապա մինակ կարդալ , շարունակ կարդալ . մինակ քանի որ մարդեմք , առանց հա ի ասլիլ կարելի չէ , քառսուն հօխա հայ և ինք մը ջուր փակեր էի հետս : Հաւել երսունըհինգ օր ըսես , մէյ մ'ալ նայիս քի սենեակս իրերուք մ'է առաւ . մենէ աղէկներուն ոռնալը լսել սկսայ : ինձի կուգայ քի Մակար քեյ անունս ալ կուտային ճիւղեկուր նայէ քի վրաս սրտադող մը , դող մը կար որ չեմ կրնար պատմել , կարծես քի սիրտս քեյէ կայ . երսունըհինգ օր աշխատելէ վերջը վախէս դուռը բացի դուրս ելայ , մարդու երես տեսայ , ամեն բան լմնցաւ . որոշան չկրցայ ընել :

— Արդեօք ներելի՞ է հարցունել թէ ի՞նչ բանի , ըսաւ Մկըր ամենեւին այս խօսքերէն բան չհասկնալով :

— Մենէ աղէկներու հետ յարաբերութիւն ունենալու , ըսաւ միւս ծերը զոր Ս.դաճան կանուանէին :

— Մենէ աղէկները մի . այդ ի՞նչ ըսել է :

— Կներէք , Պարոն . հիմա գիշեր ըլլալուն անոր բուն անունը չորուիր . վրանին ալ բաւական խօսք ըրինք , հիմա անպատճառ շուրջերնիս ալ կան անոնցմէ :

— Այո՛ , ըսաւ , միւս ծերը . այս գիշեր պէտք է որ սլառկելու ատենս ասիշ Կներէն ու ճաշն գլխուս վերեւը խաչաձև դնեմ՝ չէնէ ինձի չպիտի քնացունեն :

Մկրր , որոյ սիրտը առնել սկսեր էր այս մեղրահամ խօսքերէն , առնել քայելու վրայ էր , երբ Պարոն Մակար թեկն բռնելով ըսաւ .

— Պարոն , քեզի շատ հետաքրքիր կտեսնեմ կոր ասանկ բաներու . ուստի ա՛լ քենէ չպիտի զրկեմ այնպիսի եղելութեան մը պատմութիւնը որ իմ ազգականներէս մէկուն պատահեր է շատ մտա առնենքս : Աստուած ուղորմի մեռելներուդ հոգուն լուսահոգի մամս կպատմէր որ իրեն մօրը կեսուրը գահէկ է եղեր : Չմեռ գիշեր մը ժամը իննին , շմուռեամ ըսելու Կ՛ այն գիշեր շատ ցուրտ է եղեր , լուսնկայ չլլալուն շատ ալ մութ է եղեր : . . .

— Կներէք , ըսաւ Մկրր , այդ պատմութիւննիդ ուրիշ ժամանակ շնորհ ընէք պատմելու . կարծեմ ընկերս զիս կկանչէ :

Եւ առաւ քայեց անիծելով բազդը որ այս երեկոյ ասանկ գէշ ժամանակ անցունել կուտար իրեն :

Շիտակը ըսելով Մկրր արժանի էր որ ասանկ անտեղութիւններ գլխուն դան : Ինք երիտասարդ էր , սակայն այնչափ կասկածոտ այնչափ բծախնդիր և անվստահ բռնութիւն ունէր , որ ամեն բանի գէշ կողմերը կնկատէր : Պարել չգիտէր , բայց սակաւ ինչ վարժութեամբ կրնար սուրիւ , սակայն կլախնար որ երգիծաբանելու մէկ նիւթը կպակսի . ինք ալ կրնար սիրահարական աշխարհի

մէջ ընդ շատ ուխտորհակալութիւններ ընել . և ոչ բնական , ոչ նիւթական պակասութիւններ ունէր ասոր համար . անէր բարեկազմ , կերպարանքը կանոնաւոր , քսան ոտիկի չափ ալ ամառնան եկամուտ բերող հայրենի ժառանգութիւն . սակայն կկոտակած էր որ չըլլայ թէ սիրուհին խաղ մը խաղայ իրեն . կերեւայ որ միշտ աչքին ապշին ունէր Աստիստնի և Ռալիլայի օրինակը : Աերջապէս այս մրտատանջ բնութիւնը պատճառ էր որ այնպիսի երեկոյթներու և ընկերութիւններու մէջ ուր որ կգտնուէր այս դիշեր և ուր իւր ստրկքն ունեցող երիտասարդք ի հարկէ կըլարձանան և կըբռնուէն , միայն թէ տղեղի խախտում չունենան , ինքը Վկրը միշտ կնեղանար ու կյօրանէր : Իւր բարեկամքը Պարեհին աչալով , Վկրը որչափ շատ պոյշ էր , սոխ այնչափ անխոհեմ և անդէպջ :

Վկրը ձերակոյտ ժողովին աննակէն դուրս ցաակեց իւր բազդէն սպան աւարտեր էր : Ահնող պարտը խումբը երտումիկ մամուլի բօլբերը նստեր էր . Վկրը մտաեցաւ տեսաւ որ Պարսն մը գոր ամենեւին աչքը չխածաւ , խաղի թուղթը առջին թաղթ մը ալ թուղթ մը ձախ կըանայ . երիտասարդք պարի ընկերուհիին խաղի ալ ընկեր առեր էին , և իրենք կգուային անոնց գրամագլուխ : Չարեհ երկու ընկեր ունէր Վարրիկ և Չարահի որոց շարունակ գրամագլուխ կուտար , անոնք շարունակ կորուսինք . կըսէին և վերտտին գրամագլուխ կառնէին :

— Ահաասիկ Պարսն Վկրը , կըսէ Վարրիկ , Պարսն , պարի ստեն ամենեւին դէեզ չտեսայ . կերելի որ ձեզի յարմար ընկերուհի չըտաք որ պարելիք :

— Բար լիցի Տիկին , ընդ հակառակը : Աջիկս նեղ ըլլալուն քանի մ'օր է որքիս մէկը անհանգիստ է , ասոր համար չպարեցի եղբի չոյ ստիս ըլլայ . գոյքը լիցալ . Ահնեւորներ երեքնոց և չորանոցին , ազաղակեց այն միջոցին Չարեհ զարտիս ցանցի լս ցոյց . զարտի չոյ

— Կհատկեմամ, Պարոն Մկրտ, պատասխանեց Մաքրիի խաղի ժամանակ երեւան կեննէք որ բաղդերնիդ փորձէք. Պարոն Մարտիկ բարեհաճեցաւ Ֆարաօն բանալ մեք ալ թէ պարէն հողնութիւն կառնեմք, թէ կզբօնոււմք, և թէ կչահիմք : . . .

Սոյն միջոցին թուրթ բաշող անձը զոր Պ. Մարտիկ կանուանէին, դէպ ի Մկրտ Ժպիտով արձակելէ յետոյ, Չարեհին դառնալով ըսաւ . . .

— Կկորսնցունէք Պարոն, ահա ապիկ չորսնոցը իմ կողմն բացուեցաւ :

— Չարմանալի բան, ըսաւ Չարեհ բանջար կտրած երեսներէն քրտինքը սրբելով. ամեն ատենի պէս այս դիշեր ալ շարունակ կկորուսանեմ :

— Ս,յս դիշեր բաղդ չունիք, շատ կցաւիմ, կըսէ Պ. Մարտիկ :

Մաքրիի քովը դարձած բաներուն ուշադրութիւն չընելու դէմքով խօսքը շարունակեց :

— Եստէք. տեսնեմ ձեր բաղդն ինչպէս է այս երեկոյ, Պարոն Մկրտ :

Սակայն Պ. Մկրտ որ արդէն չէր աստիճան որեւէ բաղդի խաղէ, և որ Տ. Մաքրիկին իրեն խօսած, և բարեկամին իրեն խօսքերուն ուշադրութիւն ըրած մէկ միջոցին մաշային չորանոցին դատրիյլ խաղալը տեսեր էր ի վրաս իւր բարեկամին և շտրհիւ ճարպիկութեան Պ. Մարտիկին, Ենորհակալ եմ, Տիկին, կըսէ, ես ամենեւին խաղի մէջ բախդ չունիմ. թէպէտ խաղալ ուզեմ, Ֆարաօն չեմ դիտեր :

Ս,յս բտելով, ցամամբ լի ակնարկ մը նետեց Չարեհի դրայ, որով ըսաւ կուզեր. Հերիք եղաւ : Սնհամբեր կերպիւ ժամացոյցը նայեցաւ և . . .

— Ժամը ութ ու կէս, ըսաւ մամուալով. կարծեմ, Պարոն Չարեհ, առաջտուն կանուխ երեսելու ստիպուած էք :

— Մ.յո՛ւ , այո՛ւ , կրսէ Չարեհ տեղէն ելնելով , և մշտ-
 քէն շտորհակալ ըլլալով Մկրրին , քանզի բոլոր ստակը
 կորուսած , արդէն ինք ալ մտքին լմէջ պատճառանք կը
 բնտուէր խաղը ձգելու համար : Առաւօտուն տիպողա-
 կան գործ ունենալուս , կցաւիմ որ այս երեկոյ քիչ մը
 կանուխ հարկ պիտի ըլլայ երթալու հրաման խնդրել ձեզմէ :

— Ս.յո երեկոյ պարօն Մկրր շատ ձանձրացաւ , կրսէ
 Տ . Մաքրիկ , քանզի ոչ պարեց , ոչ խաղայ :

— Այ , Տիկին . այսու ամենայնիւ ես ալ դրօսայ պարող և
 խաղացողները հայելով . մանաւանդ Պ . Մարտիկ շատ ա-
 ղէկ պարեց այս երեկոյ , կշնորհաւորեմ զինքը . . . :

Սոյն միջոցին Պ . Մարտիկ որ հարկաւ կռահեց Մկր-
 րին ինչ ըսել ուղելը , աչքին ծայրով դէպ 'ի հարաւ նայե-
 լով , ակռաներուն տակէն « Հայկազունք պար բռնեմք » ին
 եղանակը սուլել սկսաւ : Ա երջապէս « մնաք բարեաւ » նե-
 րէն , « դարձեալ հրամայեցէք . կսպասեմ » ներէն և ձեռք
 թօթիվիներէն յետոյ բաժնուեցան մեր երկու բարեկամ-
 ները տուն դառնալու համար :

Ընթերցող , քեզի կ'ըսողում երեւակայել Չարեհի
 յուսահատութիւնն ու կսկիծը որ ճիշտ քսան և հինգ լի-
 րա կորուստ կհաշուէր . և Մկրրին կշտամբանքները որ
 կպնդէր թէ չկարծէ որ բազդի անյաջողութեամբ կորոյս ,
 այլ գողութեամբ :

— Խարդախութեամբ քեզ հանուեցուցին կրսէր Չա-
 րեհին : Աւազակութիւն մինակ լեռները չըլլար . Պարօն
 Մարտիկի պէս սրահներու աւազակները անտառի մէջ
 ատրճանակով դքեզ դիմաւորող աւազակներէն վնասա-
 կար են : Ասոնք տեսնելուդ պէս կճանչես և կամ կիխա-
 չիս , կամ քսակդ կպաշտպանես . բայց անոնք կամ չես
 ճանչեր , կամ ճանչես ալ , պատշաճից օրինաց դէմ չմե-
 դանչելու համար ձայն չես կրնար հանել :

Եստ աղէկ կխօսէր Մկրր . դժբաղդարար այս խօս-

քերն ըրած ատեն Չարեհի միտքը Մաքրիկով կզաղէր :

Խաղամուլութեան դէմ որչափ որ խօսի և անոր չար հետեւանքը ցոյց տալու համար որչափ թուղթ և մեղան գործածէ մարդ, դարձեալ աւելի բան ըսած չկրնար ըլլալ այն երեւելի բարոյախօսներէն որ տաղանդունն աղքատ ամեն միջոց, խօսելու արուեստին ամեն ձեւերը ի կիր արկած են քաղաքակրթեալ ազգերը այս աղետէն զգուշացունելու համար : Ուշ դի՛ր, ընթերցող, քաղաքակրթեալ ազգերը ըսի, քանզի այս ախտը միայն քաղաքակրթեալ կարգերու մէջ կճարակի. և եթէ ընկերութեան ստորին կարգի մէջ կզտնուի, այն ալ ոչ այնչափ բացառութիւն է որչափ բարձր կարգերու հետեւողութիւն :

Խաղերն երկու տեսակ են : Առաջինն շահը, մտաւոր կարողութեան առաւելութեան վրայ հիմնուած, օրինաւոր է մինչև այն կէտին որ զրօտանայ սահմանէն դուրս ելնելով, շահադիտութեան առարկայ չըլլար, և յայլթողին շահը յաղթուողին ապրուստի միջոցներուն չմտասեր :

Երկրորդ տեսակ խաղերն անոնք են որոց յաջողութիւնը մարդկային հնարքէ և կարողութենէ անկախ. միայն կոյր բախդին վճռոյն է ենթարկուած, և ասոր համար է որ բաղդի խաղ կանուանեն : Վայ անոր որ իւր ստացուածքն ու ապրուստը յիսուն երկու կտոր թուղթի հաճոյիցը կյանձնէ :

Մեր երկու բարեկամները ըստնուեցան իրարմէ մայիսի առաջին օրը կրկին տեսնուելու պայմանաւ. քոյրերը դէպ ի տուն օւզգեց Մկրը ինքիբն խոտանալով որ ասկէ յետոյ աւելի զգոյշ ըլլայ կանանցմէ և խաղէ . Չարեհ ալ բաղդի մէջ ձախտրդութիւնը սիրոյ մէջ յաջողութեան կարապետէ ըսելով մխիթարուեցաւ և տուն հասնելուն պէս կէս հանուած անկողին նետուեցաւ :

և միտքը վսեմ դադարի պայմաններու կը արձգաչնէ :
 Պարուեր բնութեան վերանորոգումն է : մարդս որ
 արարչազորութեան ամբողջութեան մէկ մասն է , ինքն
 ալ կ'վերանորոգի բնութիւնը կազմող ամեն առարկայնե-
 րու հետ : Ինչպէս որ բնութեան Հատիչն ամեն տիե-
 ղերք միանգամ տոեղծած ժամանակ , իւրաքանչիւր ա-
 րարած այնպէս տրամադրեր է որ իւր տեսակին պահպա-
 նութեան և վերանորոգման սկզբնատարին իւր մէջ պա-
 րունակէ , այսպէս մեր սեռին ալ տուած է իւր պահպա-
 նութեան և վերանորոգման սերմը , որ ընդհանուր առմամբ
 սէր կ'անուանենք : Չեմ կարծեր որ սէրն ինչ բան ըլլայն
 չգիտնալու չափ անողայ մարդ դոնուի աշխարհիս վրայ :
 Տղայ մը որ դեռ տարիներ կուզէ յարբուն հասնելու այ-
 սինքն ամեն զբացում կատարելապէս կրելու , ինչպէս նաև
 բազմաթիւ աստիներով բռնաւորած ծերունի մը , երի-
 տասարդութեան ամեն բերմանց հնազանդած և զայնս ի-
 տիկն դո՛՛՛՛ք բրած պիւտր մը , աշխարհային հեշտութիւն-
 ներէն յախրացած և անոնց ոգեօտառ տպաւորութենէն
 սնքած պիւտր մը , չեն կրնար անտարբեր կենալ սիրոյ հը-
 րատուրանայ առջև , ողան առանց գիտնալու , ծերը ա-
 ռանց ուղելու , այլ միայն իրենց խառնուածքին թելադ-
 րութեան հնազանդելով ,
 Չմոռնամք այսօր մայիսի առաջին օրն ըլլալը , յորում
 Պօլսեցիք գեղեցիկ օրերուն վերադարձը կտօնեն : Եէ-
 նի-Քափուի , Սամաթիայի և այլ մօտակայ թաղերուն բը-
 նակիչներն իրենց Վէլի-Էֆէնտին ունին , Խանդիւղ և մօ-
 տակայ արուարձաններն իրենց Քեաղառ-Խանէն . նոյնպէս
 ալ Իսսիկուտարցիք իրենց Չամլըճան ունին որ ամենէն աւելի
 գեղանկարն է . մինչև լեռնակ ելնելն է դժուարութիւնը .
 անգամ մը որ հոն հասնի մարդ , բնութեան ամեն գեղեց-
 կութիւնը մէկ նայուածքով կրնայ ըմբռնել : Սրբեւելեան
 կողմնաչք առածին չափ տեղ ընդարձակ դաշտավայր մը

բաւորովին դաւարապատ տեղ տեղ վարուցան եղած և ցո-
բենի կամ գարիի դեռարոյս ցողուններն անհաստատ քա-
միին հաճոյից համեմատ կամ յաջ կխոնարհին կամ ՚ի ճախ-
Հիւսիսային արեւմտեան կողմն որ դառնայ մարդ, չքնադ
Բնորոյ մը կներկայանայ աչքին . անմիջապէս իրաւունք
կուտայ Սուլթան Օսմանին որ զՊօսֆօր աշխարհիս տիրա-
պետութիւնը տուող մատանիի մը կնմանցունէր, և Մե-
ծին Կոստանդիանոսի քաղաքը երկու զմրութատի մէջ զե-
տեղուած ադամանդի : Իրաւունք կուտայ մարդ աշխար-
հիս չորս կողմերէն եկող ճանապարհորդներուն որ Պօլսոյ
ամեն պատմական հնութիւնները դեռ չտեսած, անգամ
մը այն լեռնակին այցելութեան գալու են : Հարաւա-
կողմը կտեսնուին խումբ մը կղզակներ, որոց մէկուն մէջ
աքսորեց Վաղէս մեր Մեծն Ներսէս Հայրապետը :

Մեծ Չամլըճայի գրեթէ ստորտող կառուցեալ կայ ար-
քունի դղեակ մը զոր նշանաւոր քրած է Սուլթան Մահ-
մուտ Գ. բարերարն Տաճկաստանի, իւր աղմկալից կեան-
քին վերջին օրերն հոն անցունելով և ուր առ հարսն յաւե-
լաւ 1839 ին :

Մազ մնաց պիտի մտնայի Թալլը տէտէն որ յիշեալ
լեռնակին ճիշդ գադաթը կհանգչի և որոյ ոչ ապրիլը
դիտցող կայ և ոչ մեռնիլը, ոչ ալ կենդանութեան ժամանակ
գործած հքաչքները, այսու ամենայնիւ անոր գերեզմանը
ոչ նուազ հրաշք կը գործէ կ'ըսեն այն ախտաժէտներուն
որք ջերմ հաւատքով անոր դերեզմանին շրջապատը քար
մը տանին նետեն : Վերջապէս այն գեղեցիկ զբօսավայրը
Իւսկիւտարցի ընտանեաց ժամադրութեան տեղին է սոյն
օրը : Առաւօտուն կանուխ քայելով հոն դիմել կսկսին
խումբ խումբ երեք կարգ ընտանիք անոնք որ ազքատիկ ըլ-
լալով կառքի ծախք ընելու անկարող են . մէկ երկու տե-
սակ կերակուր զամբիւղներու մէջ դրած և զամբիւղ-
ները հասած տղայնուն կամ էրիկնուն կռնակը բեռցու-

ցած կիներն ու աղջիկներն ալ ոմանք ֆերանտով քղանցք-
նուն կէսը վեր կէսն ալ վար ձգած , տղայ կամ աղջիկներ-
նուն մէկ քանին կէս ոտքի ամանով պոչի պէս ետեւուն ըն-
կած , փոշոտած , արիւն քրտինք մոտած , արևը չժաղած Չամ-
լըճա հասնելու համար հեւալով կըբալեն : Մէյ մ' ալ նա-
յիս որ տղան կէս ճամբան բեռը ձեռքէն կձգէ « Հողնե-
ցայ » ըսելով , և յամառութիւնը բռնելով տեղէն շարժիլ
չուզեր : խեղճ մայրը յորդորները հատցնելով սպառնալիքի
կ' սկսի :

— Օ՛, կտոր տանի քեզի հասկցա՞ր . փեշման ըրիր քեզի
հետ առնելուս , կեցի վաղը ես որպարտան կամ նայէ կէտոր ի՛նչ
քանեք պիտի պերե՞ :

Դժբաղդ արար սպառնալիքն ալ ստակ չըներ և խեղճ կի-
նը կստիպուի կերակուրին ծրար : Ֆէրածէյին տակ առնելէ և
կէս մընի չափ տեղ տանիլ մինչեւ որ լախոտին սիրտը
չինուի :

Քիչ մը հեռուն ուրիշ գոռում գոչում կայ . որմաղխը
Պաղտասարը կնոջը հետ կուռոյ է բռնուեր և թօփհանէլի
օղլուէն քիչ մը վեր ոչ միայն կերակուրին ծրարն ու երկու
տարեկան մանկիկը տանիլ չուզեր , այլ նաեւ կնիկն ալ կը
բռնազբօնէ որ տուն դառնայ : Պատճա՞ռ : Ասան զի կինը
թող չէր տուած որ հոն տեղի դազինսն այցելութիւն ընէ ,
և մէկ երկու գուռաթ օղի խմէ , այն օղին սրոյ հոտն ան-
դամ չէր աւած կէս գիշերէն ՚ի վեր խեբճ մարդը : ասկէ
զատ մանկիկը որ մէկ գիրկն էր , հոն տեղուանքը պզտիկ
անտեղութիւն մ' երըրեր թեին վրայ և ասկէ յառաջ եկած
թացութիւնը որ չուխա սալթայէն մինչեւ միսը հասեր էր ,
իրաւամբ զայրացուց բարի մարդուն սրտնեղութիւնը :

— Ա՛՛՛ո՛ւյ կեռն անցնէիր ու պարով իբրև տե՛ն չեղլայիր
մա՛րդ , կըսէ կինը , տարին անգամ մը պտտելու կե՛նեմ ,
ան ալ քիթէս պերե՛ս կպերե՛ս .

— Ա՛՛՛րին անցնէի մի՞ . սա բաժը նայէ տա՛նմանս , ես չա-

բայ եւեթ եօթենի աւար տղանքն . սէր պատգամն քելի հնազանդութիւնը սասանկ սորվեցուց :

— Հը՛հ, սէր նայէ կըտէ կինը . սատր անոր եղբորն մէջ հողիս հանեմ բէճերը պահեմ . ըստիկեք քարն տամ . անկէ ետքն ալ հնազանդութիւն եղեր . . . աղցանեմ որ չհասիս . . .

Մեր Պազուսատը աղբարը կնոջն այս կճոռ կշտամբանքը չարտի կլէր թէ որ զոյն դուրսէն լսող մը գտնուէր . մէյ մը ալ կդառնայ մէյ մը ձախ . կնոջը վերջին խօսքերը լսելու չափ մտ մարդ չտեսնէր . և կողակիցին բերանը կարկելու ուրիշ միջոց չգտնելուն ամենայն արագութեամբ կսկսի ճամբան շարունակել :

Երկորորդ կարդի ընտանիքներն անոնք էին որ քիչ շատ դիւրակիցութիւն ունենալով թէպէտ կրնան նոյն օրը կառքի ծախս ալ ընել . սակայն թէ խնայողութեան և թէ բընութեան ընծայած գեղեցիկ տեսարանը գիւրաւ վայելելու միջոց . լաւ համարած էին կամայ կամայ քայելով երթալ . Հեռիտաններուն երրորդ կարդը կբաղկանայ հարուստ բայց կճճի ընտանիքներէ . որոց գլուխները նոյն օրը կառքի վարձերուն սղութիւնը ժամանակին ներգութիւնը . օգին զովութիւնը . ճամբայ քայելուն մարդոյս մարմնոյն վրայ ունեցած օշտակար աղբեցութիւնը . և այլ շատ մը սիւնեք նըկատողութեան առնելով . իրենց կողակիցներուն հետ երկար բժնեցանս յետոյ կոչկակարին սայլովը ճամբայ երնելու վճիւն արձակեր էին : Կառքերով ու ձիերով գայտողները կարդ մը չհամարեցի . քանզի նոքա չուայլ աղքատներու . մբատեղներու և հարուստներու խառնուրդ են և ինքնին կարդ չեն բաղկացներ :

Այս վերջին կարգէնէ Հաճի Աբրահամ Աղային ընտանիքը զոր հարկ է ընթերցողին ներկայացնել պատմութեան թեանս մէկ մասը աղէկ հասկցնելու համար :

Հաճի Աբրահամ Աղա . բնիկ Ակնցի . վաթսուն տարին քանի մը կանգուն անցած է : Բայց ընչացքն ու

գիտուն վրայ մնայա՛յք , քառասուն և հինգ թերի մօտ մաղե-
 րը այնչափ խնամօք և վարպետութեամբ կներկէ , որ տես-
 նողը զանի հաղիւ յիտուն և ինը տարեկան կկարծէ : Հայրը
 որ սեղանաւոր էր , տասն տասներկու տարեկան զինքը Պօլիս
 բերել տալով , սկերչի քով զինքը աշակերտութեան գը-
 րած էր : Աւերջերը Հաճի Արբահամ մեծ գործաւնու-
 թիւններու մէջ դասուած և Եղիպտոսի կուսակախերու
 շատ վաճառք ծախելով մեծ հարստութիւն գիղած էր : Եւ
 գործերը նուազած մէկ միջոցին , Չոր ինչ հայր գործէ ,
 և որդին նմին նման գործէ օրսերով ինքն ալ սեղանաւորու-
 թեան սկսեր էր : Ինք կարգալ չէր դիտեր , բայց շատ ուսում
 նասէր ըլլալուն Պօլսեցի աղջկան մը հետ ամուսնութենէն
 ունեցած երկու զաւակները աղէկ գաօտարակել տուած
 էր . անդրանիկը որ մանչ էր , չափահաս ըլլալուն պէս
 Ակն դրկիւր էր որ երթայ հօրաքրոջը ճեռքը պագնէ .
 կնքեալ նամակ մ'ալ տուէր էր մօրաքրոջը ուղղեալ , որով
 Հաճի Արբահամ Աղա խնդրած էր քրոջմէն որ զանի Ակնցի
 աղջկան մը հետ կարգէ : Հաճի Արբահամ Աղա կենայր
 մէջ միայն մէկ լանի մը գղջացած էր , որ է Պօլսեցի աղ-
 ջրկան հետ կարգուելուն . վասն զի ինդճ մարդը քիչ մը
 ուշ մնացած ըլլալով , մինչդեռ կողակիցը կենացը
 դարնան սկիզբն հաղիւ կար , ճաշակած էր այն ամեն դառ-
 նութիւնները որք անհամեմատ ամուսնութիւններէ բնա-
 կանապէս յառաջ կուգան , այս գէպքը Հաճի Արբահա-
 մին գէշ գաղափար տուած էր Պօլսեցի օրիորդաց նկատ-
 մամբ և ուխտ ըրած էր որ ալ բնաւ Պօլսեցւոց հետ խնա-
 մութիւն չլնէ : Բայց ազան փափուկ մեծցած ըլլալէն մի
 ըսեմ , հօրը հայրենիքին օգը իրեն գէշ գալէն մի ըսեմ , հի-
 ւանդ ինկեր Ակնայ մէջ մեռեր էր : Մնացեր էր մէկ հա-
 տիկ աղջիկը Աղաւնի անուն , զոր եթէ այս տխուր օրինա-
 կը չըլլար , թերեւ շատոնց Ակն դրկած էր . բարեբաղ-
 դարար աղջիկը կարգերու դիւրին ճամբան դառաւ Հաճի

Աբրահամ աղա . Պօլսոյ մէջ Ա.կն ծնած աղջիկ գտնել
 դժուար է , էթէ ոչ անկարելի . բայց Ա.կն ծնած ամուսին
 գտնել . հոն ասիէ գիւրին ի՞նչ կայ : Քսան տարի յա-
 ռաջ Աղէկսանդրիա գտնուելով Պօտոս անուն մէկ հայրե-
 ն ակիցին հետ գործ բրած էր , և անկեց ի վեր բարե-
 կամութիւն ունէր հետը : Պօտոս աղա ալ գործէ քաշուե-
 լով դրամագլուխը անշարժ ստացուածք և Տէրութեան
 արժէ թուղթ ընելէն վերջը մէկ երկու ամիսէ ի վեր Պօլիս
 եկեր և թէպէտ քիչ մը ուշ , որովհետև քառասունն
 անցուկ էր , բայց

Անադան լաւ

է քան բնաւ ,

Այսինքն ուշ ըլլալը բնաւ չըլլալէն աղէկ է , ըսելով
 Աստղիան լուծը վիզն առնելու որոշումն էր տուեր : Աբ-
 րահամ աղա խոհեմ և բանիբուն մարդ , այս առիթը
 ձեռքէ չի բացնելով , խօսքը լինցուցեր և Պօտոս աղա-
 յին հետ նշաներ էր աղջիկը Աղաւնի , առանց այս վեր-
 ջինին կամքը հարցունելու : Աղաւնի հաղիւ կայ տասն ու
 վեց տարեկան : մայրենի լեզուն լաւ սովորած ըլլալէն զտո-
 բաւական աղէկ զազդիներէն և անգղիներէն կխօսի . դաշնակ
 կզարնէ . կպարէ վերջապէս առաջին կարգի դաստիարակու-
 թիւն առած օրիորդ մ'է . աւելցուր այս ամեն ստացական
 յատկութեանց վրայ այն ամեն բնաձիր բարեմասնութիւն-
 ները որք գեղեցիկ կգործեն զմարդ , սպիտակ գէմք , սիրուն
 և վառվռուն աչքեր , փոքրիկ բերան մը , վարդագոյն այտեր
 և գեղին գանգուր մազեր որ մինչեւ մէջքը կիջնեն , աչքիդ
 առջեւ կունենաս Աղաւնի Օրիորդը , որչափ սիրուն այնչափ
 սիրող , որոյ բերնին վրայէն ժպիտն անպակաս է :

Աղաւնի ատենէ մ'ի վեր մօրմէն կլսէր թէ հայրը զինքը
 նշաներ է հարուստ մարդու մը զոր թէպէտ ինքը մայրն չէր
 տեսած և զոր տարիքն առած այսինքն երեսունն անյուկ կը
 կարծէր , բայց և այնպէս հարուստ և բարի մարդ է եղեր :

— Հայր մը, ըսեր էր Տիկին Հեղինէ (այս է Աբրահամ Աղային կնոջ անունը) հայր մը հարկաւ աղջկանը աղէկութիւնը կուզէ . ուստի և բարի ու հնազանդ աղջիկ մ'ալ հօրը կամբէն գուրս ելնելու չէ :

Մայրը այս խօսքերն ընելով հանդերձ աչքը գաղտուկ մը Աղանիին երեսը դարձուցած էր որ տեսնէ թէ ինչ ազդեցութիւն կ'ընեն վրան : Աղջիկը առանց պատասխան տալու երեսը կախած և անխօս կերպիւ դժգոհութիւն յայտնելու համար երեւակայելի եղած ամեն ցոյցեր դէմքին վրայ յայտնած էր , սակայն մայրը ձեռքէն ուրիշ բան չգալուն , ջրեանելու ընրած էր :

Աղանի այս խօսքերը լսելէն ի վեր կերպարանափոխ եղաւ . մանաւանդ երբ կ'ըսէին իրեն որ առջի պատկին հարմիրը կայ . ո՛ւր է այն առջի զուարթութիւնը , խընդումները . առաջ մէջ մը դաշնակին կվազէր . քիչ մը զարնելէն ետքը կսկսէր երգել . ինը տարեկան տղու պէս ցատկել , խաղալ , բայց հիմա բարձրովին տարրեր . սենեակը մինակ կը նստի կմտնոայ . երբեմն մայրը յանկարծ քովը կմոնէ և կտեսնէ որ թաշկինակը ձեռքն է , աչքերն ալ թռչեր են :

Տիկին հեղինէ աղջկանը արտութեան պատճառը իմացեր էր Մարիամէն որ Աղանիին սպասուհին և մրտերիմն էր . Տարի մը յառաջ Աբրահամ Աղային տունը մրտնել ելնել սկսեր էր Բերացի երիտասարդ մը Արշակ անուն , Չարեհի միջնորդութեամբ որ իւր դրամական փոխառութիւնները Աբրահամ Աղայէն ընելուն պատճառաւ հետը աղէկ կտեսնուէր : Արշակ որ հազիւ քսան և երկու տարեկան կար գեղեցիկ և կրթեալ տղայ մ'էր , սիրածէր զԱղանի , Աղանի ալ զինքը կպաշտէր դրեթէ և շատ առանձին տեսակցութիւններու մէջ ալ իրարու յաւիտենական սէր ուխտած էին : Աերջապէս Արշակ միջոցաւ մը զԱղանի ամուսնութեան կինդրէ Աբրահամ Աղայէն . բայց ասի բացէ ի բաց կմերժէ նախ անոր համար որ տղան

հարուստ չէր քանզի վաճառականի քով պարզ գրադիր
 ըլլալով ամսական վեց ոսկիէն զատ բնաւ ապրուստ չու-
 նէր . երկրորդ և զլիսաւորապէս անոր համար որ Պօլիս էր
 ծնած : Այս խնդիրքն իրեն ներկայացնող անձին սապէս
 պատասխան տուած էր Աբրահամ Ալա :

— Հասցոր մի եֆէնօթի սեչլէի . ինտոր կաշննայ էօ : ատանկ
 չէօր ու կէս փարայի Ըտըմօլցի լաճ մի աղջիկս կուղենայ :

Եւ այն օրէն հրաման էր ըրեր կնոջը որ զԱրշակ այնու-
 հետեւ տունը չընդունի : Սակայն ընդդիմութիւնը սէրը
 շիջուցանելու տեղ աւելի կըսրբօքէ . Աղանի և Արշակ
 յարարերութիւննին անխախտ պահեցին գաղտնի թղթակ-
 ցութեան միջոցաւ :

Այս ամեն բան շատ աղէկ դիտեր Տիկին Հեղինէ .
 սակայն ի՞նչ կուգար ձեռքէն . ամուսինն ինչպէս ամեն կէ-
 տի մէջ , նոյնպէս ալ այս խնդրոյն վրայ հրամայաբար կը
 խօսէր . և յիսունէն աւելի տարուան մէջ տուային անդամ
 ըլլալով , և իւր կողմանէ իբրև զոհողութիւն մը ի շնորհս
 իւր աղջկան , Պօլսեցւոց սովորութեան համակերպելու զի-
 ջանելով , Պօտոս Ալայն նոյն օրը տուն հրաւիրած էր որ
 թէ Աղանիին ներկայացնէ և թէ հետեւնին Չամլըճա
 երթայ :

Առաւօտուն ժամը կէսն էր . Աբրահամ Ալային ըն-
 տանիքը պատրաստ էր ճամբայ ելնելու երբ դուռը զար-
 կին . և Տ . Հեղինէին ,

— Մարիամ , դուռը բաց ,

Ըսելուն չմնաց , նայիս որ սպիտակախառն ընչացքով
 մարդ մը սանդուղքէն վեր կենէր : Սուլթան Մահմուտի
 դարուն վերջին տարազը յիշեցնող ֆէս մը գլուխը . հի-
 նուկ սէթրի մը հագեր էր այնչափ երկայն քղանցքով
 որ սանդուղքէն ելնելու ատեն վրան չկօխելու համար
 ստէպ վեր առնելու հարկադրուած էր . ճերմակ շապիկի
 տեղ , դոյնը անյայտ եղած չուխայէ Բնիւն մը կար , որոյ

օճիքին եղբերը աղտոտութեան խղով փայլելով քիչ շատ քույր տեղ կըսենք : Աղաւնի որ եղբրութիւնը չգիտէր , այս մարդը հօրը մէկ հայրենակիցը կարծեց որ Ակնէն նոր կուգայ . շուտ մը դիմաւորեց ու ձեռքը պագնելու վրայ էր երբ հայրը ,

— Օ՛ , Պօտոս Աղա , առաքումը բարի եղիցի . հըրամայէ նայեանք ,

Ըսաւ բարձրաձայն : Աղաւնի պաղեցաւ մնաց և աչքին ծայրովը նշանածը ոտքէն մինչև գլուխը չափելով մէկտեղ ստակուսով ետ ետ քաշուեցաւ :

— Էֆէնդի «էյլէի» Պօտոս Աղա , որկանէ լման լեւիկն հրամայեցաք , որ թի ճամբայ ելնայանք :

Աբրահամ Աղային այս սիրալիր ընդունելութիւնը լըմնալէն յետոյ Տ . Հեղինէ զԱղաւնի Պօտոս Աղային ներկայացուց ըսելով .

— Կարծեմ , Պօտոս Աղա , հրաման կուտար որ աղջիկըս ալ այս օր հետերնիս դայ . թէպէտ քիչ ատենէն բուրրովին ձեր իշխանութեան տակ պիտի ըլլայ , բայց առայժմ անոր վրայ կէս մ'ալ մեք իշխանութիւն ունենալնուս կ'ըստամ որ այս խնդիրքս չէք մերժեր :

Այս միջոցին Աղաւնի երեսը պատին դարձուց . Պօտոս Աղա որ անշուշտ այս շարժումը ամօթխածութենէն դըրդեալ կկարծէր , ինքզինքէն շատ դոհ անձի մը պէս գլուխը դէպ ի վեր տնկելէ , քթախոտ մը քաշելէ , ընչցաքին վրայ թափածները կապոյտ գոյնով և ճերմակ ջուրքով թաշկինակով մը վրան թափելէ , մեծահատոր և բազմանկիւն քիթը սրբելէ , «էնէն» կուրծքին փոշիները թօթվելէ և ճիշտ դիմացը դանուած մեծ հայելիի մը մէջ ժպիտ մը փորձելէ յետոյ՝ ի պատասխանի Տիկին Հեղինէին սա խօսքերը կ'զտնէ :

— Ի՞նչ ըսելնիկ , խաթուն մարիկ , թէ դայ հըրայ , թէ դայ հըրայ :

հըրայ :

Պօտոս Աղա բազում աշխատութեամբ գտած այսխօսքերը ժպիտով մը շքեղացուցած ըլլալով, հօրթի ակօայե նման սև ու դեղին գոյներով պճնուած և անգութ տարիներուն հարուածներովը անդայտացած խոշոր ակօայներու շարք մը դուրս ցցուեցուց : Մարիամ, ստանայ աղջիկ, որ դրան առջև բարև բռնած կկենար, Պօտոս Աղային կոչտութեան վրայ չ'ընալով դիմանալ « բըրդ » ըրաւ և սենեակէն դուրս նետուելով խնդացած ըլլալը յայտնի չնելու համար սկսաւ իրարու ետեւէ քանի մ' անգամ բըռըքտալ . Աղանի որ աչքին ծայրովը Մարիամին կնայէր, սիրուն նշանածին այն խօսքերը լսելուն պէս, այն չար աղջկան խնդալը ելեքդրական դօրութեամբ իրեն անցաւ, և « հրգ » ընելուն պէս թաշկինակը բերնին վրայ դրաւ ու հազալ ձեւացուց : Բայց այս երկու անդգամ աղջիկներուն բախդէն Պօտոս Աղային միտքը հոգնած և ականջները սակաւ ինչ ծանր այտինքն խօւլ ըլլալով բոլորովքը տեղի ունեցած ժխորէն բան չկրցաւ հասկնալ . Սբրահամ Աղա քիթին ծայրէն անդին չէր տեսներ . իսկ Տ . Հեղինէ այս կատակերգութեան վերջ դնելու համար,

— Սրելը չկոխած ճամբայ ելնեմք աղէկ կըլլայ, ըսաւ և շայն ուսերն առնելով յառաջ անցաւ . Աղանի և Մարիամ ետեւէն, ասոնց ալ կհետեւէին հաճի Սբրահամ Աղա և իւր հինաւուրց բարեկամը, սիրունիկն Պօտոս Աղա զոր ընթերցողին ներկայացնելու պատիւն ունեցայարդէն. իրենցմէ շատ յառաջ խոհարար Խաչեր աղբար ընտանեայ ճաշը պարունակող երկու խոշոր զամբիւղներն առեր ճամբայ էր ելեր . Խաչեր աղբար Պրօքրէլը գիւղը որ ճիշդ լեռնակին ստորոտն է, պիտի սպասէր և անկէ ընտանեայ հետ մէկտեղ վեր պիտի ելնէր : Ճամբայ ելան և Պաղլար Պաշի մեծ փողօցն անցնելով Հայոց գերեզմանատան առջեւէն Չամբրճայի արահետը բռնեցին : Տ . Հեղինէ չորս կողմի ծաղիկներն ու դալարները նայելով, երբեմն ալ

անցնող կանանց դիտու զարգերուն և հագուստներուն վրայ որ մէկ անշան գիտողութիւններ ընելով, սակայն առանց դուխը ետին դարձունելու ճամբայն կշարունակէր. Արբահամ իւր եփուն և բանիբուն փեսացուն հետ մերթ գործքերու վրայ, մերթ ժամանակին գծուարութեան վրայ խօսելով Աղաւնիին և Մարիամին կհետեւէին. իսկ այս աղջիկներուն խօսքը չհատնիր. բոլոր ճամբան կամ կխընդան կամ բոբոսալով ու աչքով բերնով իրարու բաներ կհասկցնեն:

Աղաւնիին որոմութիւնը ակներև է և կարծես որ սուս գը մտած է այսօր. բարակ և թուխ բրդեղէն կերպասէ շրջագրեստ է հագեր. դուխը բնաւ զարդ չիկայ. կերևայ որ չէ սանարուեր անդամ. այլ դեղեցիկ մազերն ուսերն ի վար ձգեր և եռանկիւն ծալքով մետաքսեղէն թաշկիւնակով մը գլուխն ու ականջները ծածկեր և կզակներուն տակ կապ մ'է բրեր: Ձեռքն ալ փոքր հովանոց մը ունի: Եւ թէպէտ արևը փայլուն ճակտին կզարնէր, բայց նա հովանոցը միշտ ինքզինքը Պօտոս Աղային սիրահարական նայուածքէն պատասպարելու կգործածէր: Մարիամ զանի զուարթացնել կջանայ և երբեմն կխնդայնէ ալ:

— Օրիորդ, չիտակը մարդդ շատ «նիկ» բան է եղեր. կշնորհաւորեմ քեզի. երանի թէ ամեն աղջիկ քու բաղդիդ արժանանար: Քիթ մ'ունի որ աշխարհ կարծէ. ասկէ ետքը Աղայիդ հետ թեւ թեւ շրջադայելու որ ելնես, հովանոցի պէտք չես ունենար. Աղայիդ քիթին հովանաւորութեան տակ կքալես: Ախնդաս հո. կհասկնամ հարսնիքին օրը մօտեցաւ, անոր համար . . .

— Չհասնիմ այն օրին, կրտէ Աղաւնի սրտին խորէն հառաչելով: Ահ, ո՞րչափ աղնիւ, ո՞րչափ սիրուն է Սրչակ:

— Սրչակ մի . . . ալ ասկէ յետոյ Սրչակ Վաղարշակ չիկայ քեզի համար. այդ պամպակը ականջէդ հանէ:

— Մարիամ, դահիճ, անդուխ աղջիկ. Սրչակը

մուննա՛լ մի. մեռնել ձեռքէս կուգայ բայց այդ չեմ կրնար:

— Օրիորդ, շատ զարմանալի բնութիւն ունիս. հօրս չեմ կրնար անհնազանդ գանուիլ կըսես մէկ կողմանէ ալ Սըշակէն չես անցնիր. անոր տուած երդմանս չեմ կրնար դրժեւ կըսես. և սակայն այդ երկուքն մէկը միայն կըրնաս ընել կարծեմ. կամ տարվածուդ պիտի ընտրես կամ այս խր-ֆածը. արեւը սիրես. ինտոր ալ ծուռ ծուռ երեսդ կնայի:

Աղաւնի հովանոցովը Պատուիկ Աղային սիրոյ բոցերուն դէմ ինքզինքը պաշտպանելէն յետոյ,

— Ոչ, ըսաւ. և հօրս կամքին հնազանդ պիտի ըլլամ և Արշակիս հաւատարիմ:

— Ս.յդ անկարելի է, կըսէ Մարիամ:

— Կարելի է. կըսէ Աղաւնի:

— Երդում կընեմ որ չես կրնար ընել, անկարելի բան:

— Եթէ կարենամ:

— Պայման դրած հատուցումդ կնդունիմ:

— Շատ բարի. կըսէ Աղաւնի. ի հատուցումն ես քեռնէ մինակ մէկ բան մը կպահանջեմ:

— Ի՞նչ:

— Պաղանապահութիւն և . . .

— Ո՛հ . . .

— Ինձի օգնութիւն:

— Ո՛հ, Օրիորդ, կգոչէ Մարիամ. դու իմ սրտակցութեանս հաւատարմութեանս կտարակուսիս եղեր. դիտցած ըլլաս որ սիրտս սաստիկ վշտացուցիր. արդարև քանի մը բան մօրդ իմացուցի. բայց դու ալ դիտես որ քու օգտիդ համար էր. կմտածէի որ դուցէ կարող ըլլամ այս անպատեհ ամուսնութեան առաջքն առնել. ի՞նչ օգուտ որ այն խեղճ կինը հօրդ անյողդողդ կամբք չկրցաւ փոխել:

— Մարիամ, կըսէ Աղաւնի սրտահաճ եղանակաւ. չար աղջիկ. ես քու անկեղծութեանդ վրայ ե՞րբ տարա-

կոյս յայտնած ունիմ . թէ որ ես քու սիրտդ չճանչեմ ,
ո՞րչափ անմիտ ըլլալու եմ որ քեանէ գաղանապահու-
թիւն պահանջեմ : Հիմա գիտես որ երեկ առտու Արշա-
կին նամակ գրեցի : . . .

— Գիտեմ , որ դայ այսօր Չամլըճա դքեղ տեսնէ :

— Բայց հիմա խնդիրը կիսկուսուի . քանի որ առջի պը-
սակին անպատճառ հարմնը պիտի ըլլայ կըսուի , Չամ-
լըճա մէկ երկու վայրկեան գողունի տեսակցութեամբ բըռ-
նելիք ընթացքնիս իրարու պիտի չկրնամք հասկցնել . նա-
մակով ալ չըլլար . քանզի կենդանի բարբառով կուզեմ
վճուել և վճուել տալ մահս կամ ապագայ օրերուս եր-
ջանկութիւնը . այո՛ , Մարիամ , ատանկ առաջին կարգի
կարեւորութիւն ունեցող վճիռ մը թուղթով ու մեխանով
չըլլար . կենդանի ձայնով ըլլալու է . գրիչը շատ անգամ
վրձինի պէս է երբեմն մարդոյս զգացումները տարբեր
գոյնով կնկարէ :

— Կհասկնամ ուղածդ , կըսէ Մարիամ . մասնաւոր
տեսակցութիւն մը :

— Որ և է աչքէ հեռու :

Մարիամ մէկ երկու վայրկեանի չափ խորունկ մըտա-
ծելէն ետքը , մէկէն սթափելով ,

— Այս գիշեր կուզե՞ս , կհարցնէ :

— Միթէ՞ կարելի է . կըսէ Աղանի պաղատագին աչ-
քերը սպասուհւոյն բերնին վրայ ուղղելով :

— Այո՛ , և այս գիշեր . վասն զի կմտածեմ որ ժա-
մանակ չիկայ . գիտես ա՛ . պարտէզին ետեւի ծայրը պըզ-
տիկ յարկ մը ունիմք . ես ամեն բան կկարգադրեմ . Ար-
շակ երեկոյին նոր միջնել սկսած ատեն ետեւի փողոցէն ,
այսինքն լեռնէն քանզի ետին տուն չիկայ , հոն կմտնէ կը
պահուի . մնացածը դիւրին է :

— Ո՛հ , Մարիամ . ուրախութենէս խելքս կթուցնեմ .
բայց Խաչեր աղբա՛րը :

— Ը՛հ , ըրաւ Մարիամ . նայէ ինչ կըսէ . Խաչեր աղբարը որսալու պէս դիւրին բան կա՞յ գիտես . անգամ մը գիտնաս որ այն մարդը բնաւ չսիրեր զհայրդ , քանզի գիտէ որ ամսէ ամիս ամսական չտալուն պատճառ ուրիշ բան չէ բայց խեղճ մարդուն ստակին տուփոսէն ալ շահիլ . անդին Խաչեր երկրէն եկած փոխանակագիրերուն հարիւրին երստուն տուիտ կուտայ եղեր . այն որի՞ հոգ : Յսկէ զատ հիմա վեր երնելուս պէս « Խաչեր աղբար , ասոր ինչ , աղուր ես . » ըսի՞ մի , մանաւանդ որ դու ալ « կերակուրդ շատ աղէկ է եղեր » ըսելով մէկ երկու սուկի ձեռքը տուի՞ր մի : լինցաւ գնաց . Խաչեր աղբար « աչս ունի և ոչ տեսանէ » :

— Մարիամ , յաշողելուդ ապահով ես :

— Այնչափ ապահով որ չեմ կրնար ըսել . դու ամեն բան ինձի յանձնէ : Բայց դու ալ Արշակին հաւատարմութեան վրայ ապահով ես :

— Արշակին հաւատարմութեան վրայ ապահով մի . երդում կընեմ , Մարիամ . որ ինքզինքէս կտարակուսիմ , իսկ անկէ ոչ :

— Այս գործը լինցած համարէ . բայց այս ծառայութեան փոխարէն ես ալ քենէ խնդիրք մը պիտի ընեմ :

— Ի՞նչ :

— Ինձի գրուցես որ ինչ որոշեցիր . ինչպէս պիտի ընես որ թէ հօրդ չանսաստես և թէ Արշակին հաւատարիմ ըլլաս :

— Ընելիքս շատ բնական է . քանի որ հայրս զիս մերժեց Արշակէն և անպատճառ այս մարդուն հետ պիտի պսակել տայ , կպսակուիմ հետը բայց զինքը բնաւ չեմ սիրեր . վասն զի չպիտի կրնամ :

— Պիտի պսակուիս Պօտոս Աղային հետ և բնաւ չպիտի սիրես զինքը . . . չիտակը գրուցելով չեմ հասկնար ինչ ըսել կուղես . . .

— Սակաւն իրօքսն . . . սյուսց քանի մ'անգամ կառա-

վար մը : Իսկոյն Աղաւնի և Մարիամ իրարու թիւէ քաշելով մէկ կողմ դային, Պօտոս Աղա Վինչկայ ըսելով և ձայնը հեռուէն կուգայ կարծելով գլուխը ետին դարձուներու ատեն երեսը ահարկու երիվարի մը գլխուն կգարնէ . անասունը կխրտչի և կսկսի ետ ետ երթալ . Պօտոս Աղա դողալով աներոջը վրայ կնետուի . աները Տ . Հեղինէին վրայ կգլտօրի . ասի ալ ուժգին բաղխումէն գեափնը պիտի բռուէր եթէ Մարիամ վաղելով չբռնէր թիւէն :

Կառավարը որ ձիուն խրաչելէն փորձանքի մը տեղի չիտայու համար աթուակէն վար ցատկելով երասանակէն փռնած կշօյէր կենդանին , կսկսի Տաճկերէն տեսնուիլ Պօտոս Աղային հետ :

— Խաւ ես , պէ +ե . . . դուցէ տասն անգամ սալալն պուռայի :

— Ինչ որ է , վտանգ չիկայ , բարեկամ , երթաս բարւտի , ըսելով և անուշ տեղը կապելով Աբրահամ Աղա ճամբեց կառավարը որոյ սրտմտութիւնը երթալով կհրրահրէր և ձեռքը մեքենայաբար խարաղանին տանելով , աչքն ալ Պօտոս Աղային հասակը կչափէր , Տ . Հեղինէ այս պատահմունքին պատճառ . Հաճի Աբրահամ Աղայն կգտնէր , ասի ալ .

— Փառք տիրոջ , վաանդ մի չեղաւ . ըսելով , փեսացուն կնայէր , իսկ Պօտոս Աղա ,

— Պատանքիդ ասեղն անիծիմ , կըսէր կառավարին , բայց առանց երեսը նայելու , ճամբան երթալով , սէտք չէ եր Խաղար մի տայ , զմեզ շնորհիւ քե անէր իշու լաճը :

— Օրիորդ , կըսէ Մարիամ Աղաւնիին , նշանածիդ յատկութիւնները երթալով երեւան կեննեն . ականջն ալ խուլ ըլլալու է :

Վերջապէս հասան Գըսրգը , ուր խոհարար Խաչեր ճամբուն մէկ եղբը զամբիւղները դրեր ինքն ալ քովը նստեր հողնութիւն կառնէ : Աբրահամ կառավարին դէպ-

քէն զգայած բարկութիւնը խեղճ խոհարարին վրայ կը թափէ . վասն զի աշխարհիս գործերը ասանկ կերթան . երբ էշուն չհասնիմք , համետը կծեծեմք . կսկսի յանդիմանել որ ինչու կսպասէ հոն . պէտք չէ՞ որ իրմէ յառաջ վեր ելնէր ու աղէկ տեղ մը բռնէր :

Խաչեր քիչ մը կենայէն յետոյ որ Աղայն ու Տիկինը անցնին երթան . կառնէ բեռը ու անոնց ետեւէն վեր ելնել կսկսի քիթին տակէն մոմուալով :

— Հե՛հ գեթօրոր ըլլաս , ինչ ասեմ , ցնդած մարդ . կեասէ որ կենամ , ետքը ինչու կեցեր եմ կարդողայ : Գիտեմ ա՛ , յանցանք իմ է . ես խոհարար եմ թէ բեռնակիր . իմ գործ խոհակերոցէն դուրս չի . բայց ինչ ապուր խառնիմ . ինչ որ հրաման անէ , չէ չիմ ասեր , որ վաղ ինձի ստակ տայ . վաղը քօռւածն գլխուս վերե կը տնկուի , որ վաղ ստակ չտուի ալ աշխատիմ որ տոկոս հասցնեմ :

Այսպէս խորհելով թաշկինակը կհանէր քրտինքը սրբելու համար որ ջուրի պէս ճակտէն կվաղէր : Նոյն միջոցին Մարիամ որ ետ մնալով դիտամաբ խումբէն հեռացեր էր , Խաչերին կմօտենայ ու կըսէ :

— Վա՛խ Խաչեր աղբարս վա՛խ . շատ կմեղքեամ . այդ ի՞նչոր հողներ ես . . . Պէտք չէր որ Աղանիս կառք մը բռնէր ընտանիքը մէջը դնէր . կառք մ'ալ մեզի որթէ նստէինք և թէ բեռը մէջը դնէինք . կծծի շունը . . . կը կարծէ որ ոսկիները հետ պիտի տանի . երկու աւուր կեանքը մնացեր է ու ընչացքը սեւցնելով կկարծէ որ կերիտասարդնայ :

Այս խօսքերը սակաւ ինչ Խաչերին սիրտն իջեցուցին և կարծես թէ բեռն ալ տասն հօխայի չափ թեթեցուցին . քանի մը քայլ ալ առնելէն յետոյ ,

— Եթէ վաղուան որ ինձ ստակ չտուեց , կըսէ , ալ ես հոս չի՛մ :

— Հոս չե՞ս մի. կրտէ Մարիամ. դիտես որ Օրիորդ Աղանին քեզ թող կուտայ. դեռ հիմա գքեզ հոգնած տենեւելով շատ մեղքցաւ, գովեց գքեզ « Խաչեր աղբարի եփած կերակուրները բնաւ մէկ խոհարարի օր չկերայ » ըսելով : Թէ որ այս օրուան կերակուրներն ալ աղէկ ըլլան, այս երեկոյ ոսկի մը նուէր կայ քեզի :

— Սուտ կեասես, կրտէ Խաչեր Մարիամին երեսը նայելով :

— Իրաւ որ :

— Կորուսն ըլլիմ. աղջիկը շատ աղէկ է. ինչ օդուտ որ հայրը շատ գէշ մարդ է. գէշ չէ, էջ է :

— Դու աչքս նայէ Խաչեր աղբար. ես այս երեկոյին տալիք ոսկին երկուք կրնամ ընել տալ. բայց . . . :

— Բայց ի՞նչ : Ա՛հ, որ ադ բան անես. Վրեհասաղէճ լոյս տեսածի չափ կանես զիս :

— Բայց ըսածս կրնե՞ս :

— Հապա՞, գնա՛ նայէ՛ ծով ջուր կայ ասես կերթամ կնայիմ :

— Ուրեմն այս երեկոյ ժամ տասնին մեք հոս կերակուր պիտի ուտեմք. կերածնուս պէս դու պարապ աւմանները կառնես տուն կդառնաս :

— Ինչո՞ւ :

— Մտիկ ըրէ. կդառնաս, ու ժամ տասներկուքին երիտասարդ մը պիտի գայ, պարտէզին դուռը զարնէ : զանի ներս կառնես. ու պարտէզին մէջի յարկը կպահես. կեցիր նայիմ. զանի ճանչելու ես. Սըշակը . . . :

— Հա՛. Սըշակը՞ պիտի գայ. գիտեմ. շատ բարի սողայ է. հիմայ ինչո՞ւ չիգար մեզի :

— Սղային հետ սրդողած է. ինչ և իցէ զանի կպահես. հասկցա՞ր :

Մարիամ այս հասկցարը արտասանած ատեն, Օսմանեան ոսկի մը կուահեցնէ Խաչերին յետը և խօսքը շարունակելով :

— Թէ որ ըսածս խոհեմութեամբ ընես, միւսն ալ վազըն առտու, գիգնաս որ Օրիորդը կհրամայէ այս ըսածս:

— Խաւցայ, Մարիամ դու հոգ մի աներ:

Արդէն վեր ելեր էին. աղբիւրին մտա բարձունքի մը վրայ, քանի մ'աթուռ բերել տունին դորդ փռեցին սե նստանս:

Ընթերցող, թողումք Արարհամեան՝ դերդաստանը որ հոգնութիւն առնէ, և մեք դառնամք Չարեհին տունը զորմէ տեղեկութիւն չունիմք քանի օրէ ի վեր:



Դ

Սոյն առաւօտ Մկրտ դրած պայմանին համեմատ կանուխ կերթայ Չարեհին տունը և գեռ պառկած կգտնէ զանի: Անկողինէն կհանէ ըսելով.

— Կարծեմ երեկ գիշեր դարձեալ պարեցիր. . . աչքերդ նուազած կերելին. այս օր մայիս ըլլայր մնացա՞ր. ելիր՝ տես ինչ գանձեր կանցնին տանդ առջևէն:

Չարեհ կենէ անկողինէն, և գինովի պէս քանաբէին վրայ գլտորելով,

— Աղբար, կըսէ, թող գայիր զիս կէս գիշերին արթնցունէիր, չես թողուր որ քունս կարեմ:

— Ինչպէ՞ս. չես գիտե՞ր մի քունդ կարե՞ս մի. ժամը երեքը կերթայ, գիտե՞ս:

— Ժամը երեք, կըսէ Չարեհ զարմանալով: Անմիջապէս կսկսի հազուիլ. բա՛նձ հազներու վրայ էր երբ դուռը կզարնուի. պահ մը յետոյ սենեակը կմտնէ ընտիր հազուծ վայելուչ երիտասարդ մը:

— Հրամայեցէ՛ք, պարոն Արշակ, կըսէ Չարեհ խրնդալով:

— Օ՛, մեր վաղեմի բարեկամը . ըսաւ Մկրտ . այսօ՞ր հով փչեց . կհասկնամ, այսօր Չամբրճային օրն է . տարին տասներկու ամիս փնտռած ու չգտածնիս հոն կտեսնեմք . ահա այս պատճառաւ այս օրս ընտրեցիր հոս դալու համար :

— Անոր համար չեկայ . կըսէ Արշակ կէս բերնով . բարեկամ մը տեսնելու եկայ . այս առթիւ Պ . Չարեհին ալ ուղեցի հանդիպիլ , բարի լոյս մաղթելու համար . և առանց խակ սուրճի սպասելու հարկ է որ երթամ , կյուսամ որ աղէկ էք , Պարոն Չարեհ :

— Ենորհակալ եմ , շատ աղնիւ էք . սակայն դիտնաք որ այդչափ փութալու հրաման չունիք . կներէք համար . ձակութեանս : Գրաւ կրնեմ որ Չամբրճա պիտի երթամ և գիտեմ ինչու համար . նման պատճառով մը իմ միտքս ալ հոն երթալ է . ուստի եթէ կախորժիս մեր ընկերութենէն , մէկտեղ ելնեմք :

— Կտեսնեմ որ ձենէ գաղտնիք պահել չըլլար :

— Ս.մենեին . յայտնի է որ մեք իրարու վիճակէ կը հասկնամք . սիրոյ մէջ գործերն ի՞նչպէս են : Աղէկ միտքըս եկաւ . քուկինդ գալ շարժու հարսնիք ունի . ի՞նչպէս ըրիք այն գործը :

Ի՞նչ . հարսնիք մի , ի՞նչ կըսէք Պարոն Չարեհ , կը յուսահատեցունէք զիս . ճիշդ նոյն գործին համար եկած եմ . բայց հարսնիքի խօսք չիկար նամակին մէջ :

— Հասկցուեցաւ , կըսէ անդիէն Մկրտ . « այս օր Չամբրճա պիտի երթանք . եկուք հոն զիս տեսիր » Խեղճ հայրը ամեն զգուշութիւն թող ընէ . դուք անոր աչքին տակ խաղերնիդ խաղացէք , զարմանալի չէ որ Ա.կնցի էրիկ փնտռեց աղջիկանը :

— Ս.յո՛ , պատասխանեց Չարեհ Սրչակին . մօտերս հարսնիք ունենալը շատ աղէկ գիտեմ . անցեալ օր ինձի չորս հարիւր ոսկի պէտք եղաւ , երկու հարիւր միայն կրցաւ տալ պատճառելով որ դալ շարժու հարսնիք

ունի , և արտաքոյ կարգի ծախք կպատահին :

Արշակ խելքը թռուցածի պէս տեղէն յատկեց . առաւ գաւազանը և կերթար . երբ Չարեհ բռնեց թեւէն ըսելով .

— Քանի որ վեր պիտի ելնես , մեր կառքը պատրաստ է մէկտեղ երթանք :

— Հա՛ . աղէկ ըսիր կըսէ Արշակ . և մեկտեղ կառք նստելով ճամբայ կեղնեն :

— Ո՛հ , կըսէ Արշակ . Աղանի ձեռքն ուրիշի՞ մի տայ . այդ ըլլալու բան չէ . չեմ հաւտար :

— Յիրտի հաւտալու բան չէ . կըսէ Չարեհ այսքան զոհողութիւն ընեմ , այսքան դրամ վատնեմ ու դեռ բնաւ չնորհ չտեսնեմ Տ . Մաքրիկէն , ասոր ո՞վ կհաւտայ :

— Այո՛ , կըսէ Մկրր երեսը դէպ ի փողոց դարձնելով , իրաւունք ունիք . այս օր խենդերու մէջ մնացի ըսեմ մարդ չհաւտար մեջերնիս իրարու խօսք հասկցող չիկայ :

— Ի՞նչ կըսես , կըսէ Արշակ , եթէ խօսք հասկնար Աբրահամ Աղա , շատոնց իմն եղած էր Աղանի : Անպիտանը՛ . . . Չգիտեմ Պոլսեցւոց երեսէն ինչ գեշութիւն տեսեր է . կամ մահ կամ Աղանի . ուրիշ բան չեմ ճանչեր :

— Բնաւ ուրիշ բան չեմ ճանչեր , կըսէ ինքիբնէն Չարեհ , ես սիրոյ վրայ կխօսիմ , նա Չարուհին կգովէ . քրորոջ աղջիկն է կըսէ . աղէկ կյիշեմ որ օր մ'ալ քու յաջորդդ է , ըսաւ . չհասկցայ ինչ ըսել ուզեց . ինչ որ է . այս կինը թէ հոգիս կմաշեցնէ թէ քսակս . տարին անցաւ , դեռ ուր որ էի , հո՛ն եմ . քայլ մը յառաջ չգացի . առաջին տեսնելուս զբուցեմ որ այս կատակերգութեան վերջ տայ :

— Այո՛ , կըսէ Մկրր . շատ աղէկ կըլլար որ այս կատակերգութեան վերջ տայիք : . . . Էօֆ . սիրահարներու մէջ մնացի . եղբարք , ե՛րազ կտեսնէք . ի՞նչ կընէք :

Սոյն միջոցին կառքը կեցաւ . հեռուէն ծեր մարդ մը մեծաքայլ դէպի կառքը կ'առաջանար . և նոյն անձն էր որ կենալու նշան էր ըրեր կառավարին :

— Բարի լոյս , կըսէ Մկըրին , կառքին մօտենալով . անցած երեկոյ մենէ աղէկներուն պատմութեան դուք շատ հետաքրքիր էիք . բայց ձեր դժբաղդութենէն ժամանակ չեղաւ . հիմայ ճիշդ ատենն է . ուստի ըսենք որ , լուսահոգի մամա կ'պատմէր +ի՛ . . . : Այն գիշերը շատ մութ ըլլալուն , . . .

— Թողութիւն կրնէք , Պ . Մակար , հիմա շատ ստիպողական դործ ունիմ . կ'յուսամ որ ուրիշ ատեն շնորհ կրնէք . . . կառավար , երթա՛նք : Ը՛հ , անիծած մարդ . այս մեր կատակերգութեան քու դերդ պակաս էր . ըսաւ Մկըր , հեռանալէն ետքը բազմահմուտ Մակար Աղայն , որոյ ընկերութեան մէջ դանուեցանք անցեալ գիշեր :

— Ի՞նչ կըսէ . Տ . Մաքրի՞կ զրկեր է զինքը , կըսէ Չարեհ սխափելով :

— Կարծեմ Սքրահամ Աղային մարդն է , կըսէ Արշակ :

— Ձեզի բան մը ըսեմ , կըսէ Մկըր , որ նեղանալէն սիրտը կճաթէր . ինչ կուղէք այն կարծեցէք . միայն հանդիստ թողէ՛ք զիս . . .

Մկըրին բաղդէն կառքը շուտ կերթար . հասան Չամլըճա և իրենց խուզարկութեան առարկայ եղող անձերը միշտ աչքերնուն տակ ունենալու յարմար դիրք մը նստան : Արդէն կէս օր էր եղած , ճաշ ըրին , Արշակ որ բոլոր ճաշին միջոցը ըրածը թողածը չէր գիտցած , պատառաքողի տեղ հաւի սրունք , թաշկինակի տեղ անձեռոց կգործածէ , և կերակուրին վրայ աղ անցունելու տեղ գինի կանցունէ . ճաշը լմննալուն պէս ձեռքը լուալու պատճառանքով ընկերներէն կրածնուի . բուն պատճառը սա էր որ Աղանի նշան էր ըրեր հեռուէն , և Մարիամին հետ դէպի լեռան գագաթը ճամբայ ելեր էր : Արշակ խո-

տորնակի ճամբէ կերթայ զանոնք կգտնէ . կմտենայ քո-
վերնին և հազիւ պիտի խօսք ուղղեր հետերնին մէյ-
մալ Մարիամ ,

— Հայրդ կուգայ .

ըսելով Աղաւնիին թեւէն կբաշե ու Արշակին բովէն կբ
հեռանայ . սակայն հեռանալու ատեն թուղթի կտոր մը
ինկած էր վրայէն : Արշակ Աբրահամ Աղային , և հետը
ընկերացող Պատոս Աղային , զոր ինք չէր ճանչեր . ճամ-
բայ տալէ յետոյ , թուղթն առաւ և կապարեայ գրիչով
գծուած սա տողերը կարդաց .

« Միրելիդ իմ Արշակ »

« Կխնդրեմ որ այս երեկոյ ժամ տասուերկուքէն յա-

« ռաջ , մեր տան ետին պարտէզին դրան առջև գտնուիս .

« եթէ դուռը մինչև տասուերկուք չբացուի , զարի , պի-

« տի բանան , ու ներս մտի՛ր . մի՛ վախնար . ամեն բան

« կարգի գրուած է որպէս զի այս գիշեր մեր բաղդը

« վճռեմք : »

« Միշտ քու հաւատարիմ Աղաւնիդ »

Արշակ կարդալէն ետքը ,

— Ի՞նչ , կրտէ ինքիրեն , այս գիշեր մեր բաղդը
վճռեմք , իմ հաւատարիմ Աղաւնիս . . . ոչ . իրականու-
թիւն չէ այս . երեւոյթ մ'է . և սակայն գիրը ճիշդ իւր
ձեռքէն ելած ըլլալուն տարակոյս չիկայ : Ի՞նչ երջան-
կութիւն . Աղաւնին նշաներ են . բայց նա ինէ զատ մէկը
չսիրեր . ես ալ տարակոյս չունէի այս բանին . հարսնիք
մի՛ , որչափ հեռու որ Աղաւնի ուրիշի հետ պտակուի :
Ո՛հ , կհանդարտիմ ուրեմն : Գիշերը զիս պիտի ընդունի ,
հարկաւ գաղտուկ . ամեն բան կարգի գրեր է եզեր . սի-
րելիդ իմ Աղաւնի . որչափ անձնուիրութիւն . ամեն վը-
տանդ յանձն կառնէ հետս խօսելու համար միայն . . .
ոչ . աղէկ գիտեցի . մեր բաղդը վճռելու համար . ի՞նչ
ըսել կուզէ արդեօք : Ժամը եօթնին հինգ կայ . երեկոյին

կերթամ', ինչ որ ալ պատահի, տեսնելու եմ զԱղաւնի .
դաղանիք մը կայ զոր պէտք է պարզել :

Արդարեւ այս նամակը Արշակին յուսահատութիւնն
ու սրտմտութիւնը հանդարտեցուցեր էր, իմացնելով որ
որ Աղաւնի իրեն հետ տեսակցելու կսպասէ իրենց բաղդը
վճռելու համար, յորմէ բնականաբար կհասկցո՞ւէր որ ա-
մենեւին հարսնիքի խօսք չիկայ . կամ եթէ կայ ալ, Ա-
ղաւնի հաճութիւն չունի . բայց և այնպէս Արշակ մտա-
տանջութեամբ կծփար թէ արդեօք այնպիսի արդելքի պի-
տի հանդիպի որուն չպիտի կարենան յաղթել ինք և Ա-
ղաւնի : Արշակ ընկերներուն քով պիտի դառնար բայց
կլխնար որ նոյն գիշերուան համար եղած որոշումը անոնց
առջև յայտնի կընէ . գլուխը այսպէս զբաղած իջաւ լեռ-
նակէն , մէյ մը մէկուն քիթին բերնին բաղխելով ինքզինքը,
մէյ մը շաքարածախի մը սեղանը տապալելով , անմիջա-
պէս ձի կբռնէ , կիջնէ թաղ , առանց իսկ մնաս բարւոյ՛
ըսելու ընկերներուն , որք Արշակին ուշանալը տեսնելով
իրենք ալ ելան պտտելու միանգամայն բարեկամին փրն-
տրուելու : Իէպ ի վեր ելնելու վրայ էին երբ ,

— Օ' , պատիւ ունիմ , Պառն Չառեհ , կըսէ կարճահա-
սակ պարոն մը Չարեհին և Մկրրին մօտենալով . դուք ալ
կառժեմ զմայիսն կտօնէք :

— Յայտնի բան . ձեզի պէս , Պարոն Մարգար , կյու-
սամ որ աղէկ էք . ինչ բարեբաղդութիւն . ասկէ յետոյ
զձեզ տեսնելու համար մայիսին առջի օրերը հոս գալու է : ...

— Ինչ կունամ գողծել . Պառն . զբաղմունքս իրիստ
շատ և իրիստ անկուելի է . ազգային գողծեա . հիմա ալ
Սուբաղան Պատուխաքը զիս իբուև քննիչ դաւառները զը-
կել կուզէ . ինչ օգուա . քանի որ ազգ եմք պէտք է աշ-
խատիմք ազգին համառ :

— Շատ ազգասէր էք Պարոն Մարգար . և այդ ազգա-
սիրական եռանդնիդ ամեն գժուարութեանց կյաղթէ , բ-

սաւ Մկրր, ծուռ ծուռ Պարոն Մարգարին երեսը նայելով:

— Սղէկ միտքս եկաւ . կըսէ Պ . Մարգար երեսը անդին դարձնելով, հիմա Պառոն Առչակը տեսայ . զինքը կանչեցի մօտէն , չլսեց . կամ այն է որ կքնանաւ , և կամ խլացէն էն . առանց ասոռ կառելի չէն չլսել : . . .

— Արշակ մի . որ կողմ գնաց . հարցուց Չարեհ :

— Կառծեմ ետ կդառնաւ . իռեն խօսք ունէի Փրուկիցի համառ առամական հանգանակութիւն մը կայ զոռ հառկաւ Մանզումէի մէջ կառգացիք :

— Որ թիւին մէջ , հարցուց Մկրր :

— Կառծեմ այս աւուռ :

— Եթէ խմբագիրը խելք ընէր և քանի մը լրագիր ծախող ալ զբօսալայրերը հանէր , թէ ինք կշահէր և թէ նոյն աւուր լուրերը զբօսնելու եղնողներն ալ կիմանային , քանի որ մինչև հիմա խմբագրութիւնը այդպիսի անօրենութիւն չէ ըրած , հարկաւ այս աւուր Մանզումէին մէջ կարգացիք , ըսելով աւելորդ կհամարիմ :

— Եւ ուովհետև , կըսէ Մարգար առանց Մկրրին խօսքին ականջ դնելու , Պառոն Առչակ մէկ Օսմանեան ոսկի շնորհեց , ինչպստ հիւանդանոցը պատասպառեալ աղքատաց և զիւռ անունը աստ չգուեց , զինքը կուզէի տեսնել որ անունը աստ արձանագուել տամ . և ուովհետև , սիրելիդ իմ Պառոն Չարեհ , հառկաւ կիտախքիք մասն ունենալ սոյն բառեղոթութեան , հետեւաբառ հառկ կըլլայ որ անուննիդ ասոռ գուէք :

Այս ըսելով զրպանէն ազտօտ թուղթ մը հանեց Պ . Մարգար , որոյ վրայ անուանց շարք մը կար : Մկրր Չարեհին ոտքին վրայ կոխեց որով ըսել կուզէր .

— Ձգուչացիր քսակիդ , ասի ալ ուրիշ տեսակ աւազակ մ'է :

Բայց նա հանեց մէճիտ մը տուաւ :

— Դո՛ւք , Պառոն Մկրր :

— Իմ անունս ալ գրեցէք , ըսաւ ասի . հինգ նաբօլէ-
ոն , և վճարելի այն կէտին երբ այս աւուր Մանգոււմէն
ինձի բերուի :

— Ծառայ եմ , ըսաւ Պ . Մարգար մէծիտը գըրպանը
տեղաւորելով և արտորնօք երթալով , բարեկամ մը ու-
նիմ եռթամ տեսնել :

— Սա Արշակը զարմանալի տղայ է . կըսէ Ջարեհ ,
սիրուհին տեսնելու համար Բերայէն Չամբըճա կուգայ ու
ժամ ութին կառնէ կքայէ . թէպէտ հոս է փնտռածը .
վասն զի ահաւասիկ Աբրահամ Աղա և իւր ընտանիքը կը
չըլազային :

— Այնպէս է , ըսաւ Մկրըր . սիրահարները ըրածնին
թողածնին չեն դիտնար . վասն զի թէ որ գիտնան սիրահար
չեն ըլլար : Ահաւասիկ քուկինդ ալ Տ . Մաքրիկ սպա-
սուհւոյն հետ վեր կենէ :

Ջարեհ Տ . Մաքրիկը տեսնելուն պէս ,

— Հիմա կուգամ , կըսէ բարեկամին , և քայլերը
փութացնելով սիրուհւոյն կ'մտենայ . որ իրենցմէ քսան
քայլի չափ հեռու դէպ ի լեռնակը կենէր :

Մինակ կմնայ Մկրըր , և պտոյտ մ'ընելով վար իջնալու
ատեն կնշմարէ որ Փրիլի պատասպարելոց համար հանգա-
նակութիւն ժողուելու պաշտօնն ունեցող պարոնը պտղա-
վաճառին կողով մը ելակ կշռել կուտայ , Մկրըր կ'մտե-
նայ քովը և ինդալով ,

— Պարոն Մարգար , կըսէ , պտղավաճառն ալ այն
հանգանակութեան մասնակից կընէք պիտի կարծէի եթէ
Հոռոմ չըլլար . ուստի եթէ չէմ սխալիր , այդ կողմն ալ
հիւանդանոցի պատասպարելոց յատկայեալ ըլլալու է : . . .

Մկրըր այս խօսքն ըրած ատեն անանկ շոշոտակի Պարոն
Մարգարին աչքերուն մէջ նայեցաւ , որ ասի որչափ ալ ինք
իր վրայ ջանք ըրաւ համարձակութիւնը չկորուսանելու
համար երէմները կարմրելուն չկրցաւ արգելք ըլլալ :

— Այո՛, Պառոն Մկրտ, կըսէ քանի մը ակնթարթէն յետոյ, թշուառները՝ մեծ բառեկենդանէն ի վեռ պաղոյե-
ռեօ տեսած չունին :

Մկրտ ի պատասխանի անդամ մ'ալ երեսը նայեցաւ յօնքերը խաղցնելով, որ կնշանակէր .

— Ահասկնաս ա՛, ինձի չես կրնար կլեցնել :

Արդէն կէս ժամ կար որ Մկրտ տեղը նստած Չարե-
հի դարձին կսպասէր, երբ ասի կուգայ,

— Ի՞նչ լուր, կհարցնէ Մկրտ :

— Կատարեալ յաջողութիւն, կըսէ Չարեհ լի ուրա-
խութեամբ և հեշտութեամբ . խօսք տուաւ որ քիչ օրէն
վառաւորապէս պիտի վարձատրէ սիրոյս : Բայց Մկրտ,
այս խօսքերն ըրած ատեն, երեսը նայեցայ . թէպէտ Մաք-
րիկ կժպտէր, սակայն այնպիսի դառն էր ժպիտը և աչ-
քերուն մէջ անանկ դաժան բան մը կար որ սոսկացի :

— Չարեհ, թէպէտ կանխազդայութեան չեմ հաւտար
սիրտս աղէկ չվկայէր այդ կնոջ համար . զգուշացի՛ր :

— Քու սիրող ո՞րի համար աղէկ կվկայէ որ . եթէ
խօսքիդ հետեւիմ, բուռի պէս միայն գիշերները դուրս ել-
նելու է որ մարդու երես չտեսնեմ : Մինչև հիմա բնաւ վը-
նաս չեմ տեսած զգուշանալ պատուիրած կնոջմէդ :

— Վնաս չե՛ս տեսած . . . կզարմանամ . . . անցեալ օր
Աբրահամ Աղայէն ըրած երկու հարիւր ոսկի փոխառու-
թիւնդ քանի երբորդն է, գիտե՞ս :

— Այն ծախքերը ես իմ կամբիւ եմ ըրած :

— Թուղթի մը կտոր կատորագրես, կառնես հարիւր
ոսկի, երկու հարիւր ոսկի . փոխանակագիրերդ վճարող
հօրդ հարցնելու է թէ ինչ փաստեր ունեցած է քեզի այդ
կինը : . . .

— Քիչ մնաց պիտի մոռնայի . կըսէ Չարեհ Մաքրիկ
նուագարան ուզեց . սա խումբը կգովեն. ըսեմ որ զարնեն :

Չարեհ հրաման ըրաւ նուագածուաց խումբի մը որ եր-

Թայ սիրուհւոյն մօտ տեղ մը զարնէ ու երգէ : Մինչև երեկոյ շաքարեղէններ ու պտղեղէններ անդադար կտեղացնէր Չարեհ անոր վրայ : Այսչափ ծախք ընելով հանդերձ Չարեհի հրամանն չիկար հրապարակաւ տեսնուիլ անոր հետ :

Ժամը տասն էր , երբ Չարեհ և Մկրը ճամբայ ելան որ Թօրհանելի Օղլու սպասելով Չամլըճայէն դարձը տեսնեն որ նուազ դբօսալի չէ : Նստան կառք և հազիւ հասան հոն երբ անձրև մ'է առաւ . անանկ տեղատարափ մը որ քանի մը վայրկեանէն ճամբայներուն ամեն կողմ լիճ կտրեցան : Չամլըճայէն դարձը սովորաբար երեկոյեան ժամ տասնին տեղի կունենայ . այս օր անձրևին պատճառաւ ուշ սկսաւ : Անձրևը դադրելուն պէս հետիտտ խումբը վերէն փրթաւ . քանի քանի պօթիւններ ցեխոտած , բաց դոյնով չըջագգեստներ թրջած , ստակի մը եղած . քանի քանի սաթէն պօլդաներու տարին լմնցած . քանի քանի միսօներ , մանաւանդ այն երկարաձիգ և քղանցքը բազում գօլայով կարծրացածները՝ որով ցեխերու կոյտ մը պոչի պէս ետևնուն չքալելու համար կանայք և օրիորդք վեր վերուցած . այս դիպուածը որ անձրևին շնորհիւ տեղի կունենար , երիտասարդաց համար անձրևին պատճառած անտեղութեան փոխարինութիւն ըլլալէն զատ անդին անգամ կանցնէր . ի՞նչ մանտրտիկ տօտիւններ . ի՞նչ պարարտ և սպիտակ սրունքներ , ի՞նչ կակուղիկ ազդրերու ծայրեր : ...

— Սա կնոջը նայէ , կըսէ Չարեհ . ի՞նչ կըրիկ , ի՞նչ դեր . մարմնոյն մնացած մասին վրայ շատ աղէկ գաղափար կուտայ : ...

Հիմա գանք այս տեսարանին տխուր կողմերուն :

— Այս այս ալ մեր բազդէն էր , կըսէ զրեթէ պառաւ և համեստ կերպարանքով կին մը , ատենը հեղ մը օդառնելու համար դուրս կհանեմ հանիւնը , ան ալ ասանկ մէյմէկ փորձանք կուղայ կշինիս : Արանիդ կշինիդ որի մը

եղաւ , կրսէ աղջիկներուն դառնալով :

— Եթէ բաղդ ունենայինք , հարուստ կըլլայինք , կը պատասխանէ մեծ աղջիկը . որ մտքուր հայերէն խօսելէն դաստիարակեալ ըլլալը յայտնի է , տես սա կառքերով իջնողները . անձրև ըլլայ , ձիւն ըլլայ , հոգ երնին չէ :

Այս օրհորդը առանց փիլիսոփայ ըլլալու անանկ վճիռ մը տուաւ զոր ոչ մէկ փիլիսոփայ մը չկրնար ջրել , իրաւացի էր սա խօսքը . « Եթէ բաղդ ունենայինք հարուստ կըլլայինք » ի՞նչ օգուտ : Առանց խորհուրդի չէ որ նախնի Յոյնք զբաղդ կոյր արձանով մը ներկայացուցին : Ամեն բան ստակով կըլլայ . ուրախութիւն , հանգստութիւն , երջանկութիւն . մինչև անգամ ցաւ և տրտմութիւն քաշելու համար ստակ պէտք է , բարեկամ : Յաւելու արժանի է այն մարդը որ կենացն ամեն վայրկեանները ստիպուած է զոհելու միայն չոր ցամաք օրասպահիկ մը ճարելու համար . և այսու հանդերձ երբեմն ալ չյաջողիր . այն մարդը իւր տեսակին մէջ ամենաթշուառն է , եթէ իւր վիճակին դառնութիւնը ճանչելու չափ մտաւոր լոյս ունենայ : Պիտի ըսես որ եթէ աշխարհ արարատ հարուստ ըլլար , որք՞ փոյթ այսչափ արհեստներ հնարելու , այսչափ գիւտեր ընելու . այս իրաւ է . բայց ո՞վ կրնայ ուրանալ որ այս արհեստներն ու գիւտերը հարստութիւնները սահմանաւոր կարգ մը մարդոց մէջ փակեցին , անանկ որ այսօր ընկերութեան չորս մասին երեքը հազիւ կրնայ ապրիլ տաժանեկի աջատութեամբ :

Արշակ, ինչպէս որ ըսի, ժամ ութին կիջնէ, և անկէջ ի վեր թափառական կայտոի Թօփհանէյի Օղլուի նորակառոյց թաղին ետև այդիններուն նեղ անցքերուն մէջ, ժամ տասներկուքին ատենները կերթայ Աբրահամ Աղային տան ետին որոշուած տեղը կապասէր. երբ դուռը կը բանան կմտնէ ներս. Խաչեր աղբար զանի կտանի պարտիզին ծայրս յարկին մէջ կդնէ ու գործին կերթայ: Կերակուր դրեր էր, կուտէ Արշակ, ու կսկսի գիշերային բնակութիւնն աչքէ անցունել. միայարկ քարաչէն նկուղ մ'էր, զոր Աբրահամ յատկապէս շինել տուած էր կրակ պատահած ժամանակ տան կարասիքը դիւրաւ հոն փոխադրելու համար: Հիմա մէջը ուրիշ բան չիկայ. միայն քանի մը կտորտած աթոռներ, հին տոպրակներ, մաշած փրփաթներ. սակայն ճրագ չիկար. և քանի որ կիտիէ մութը, Արշակի սիրտն ալ դող մ'է կմտնէ. կսկսի ասդին անդին նայիլ, թէ արդեօք զէնքի տեղ գործածելիք բան մը կայ շուրջը. վասն զի ընտան վրայ կհամարուէր, և չէր գիտեր պատահելիքը, մանաւանդ որ գուցէ դաւաճանութիւն կայ իրեն դէմ լարուած, եթէ Խաչեր զինքը մատնէր, տարին լինցած էր խեղճ Արշակին. կարելի է որ Աբրահամ զինքը ծեծել տայ, ապա ոստիկանութեան մատնէ, այս ամեն բան հաւանական կգտնէր Արշակ քանի որ մութը երթալով կաստկանար: Շատ բնուոյց և ամենեւին

դինքը պաշտպանողական դիրքի մէջ պահելու յարմարութիւն ունեցող բան մը չգտաւ . վերջապէս ոտքը բանի մը կզարնէ խարխափելով պտտած ատեն . կվերցնէ վեր և կը առննէ որ անօթ մ'է մեծահատոր , տասն հօխայի մօտ ծանրութիւն ունեցող , անօթ մը զոր ես պատշաճից օրինաց գէմ չմեղանչելու համար Եւրոպայի կանուանեմ , և զոր Ներպաշտօն գիշերային անօթ կանուանեն : Արշակ մէկ ունկէն վերուց ըսելով .

— Ես միայն պաշտպանողական դէնք կընտռէի , բայց բազդէս անանկ դէնքի տիրացայ որ թէ զիս կընայ պաշտպանել ի պահանջել հարկի իբրև վահան , և թէ յարձակողականի կընամ գործածել . քանզի այս ահագին ծանրութիւնը մէյ մը դիտուն ուտողին տարին կը մնայ : Ի՞նչ խոշոր բան : Ասկէց զատ ասանկ պատուական կարասիք մը միայն թշնամիի դէմ հարկ չըլլար ես' . . . ՌՏ , հիմա հանգիստ ըրի :

Այս ըսելով Արշակ ձեռքին թանկագին դէնքը անանկ տեղ մը դրաւ որ ուղած վայրկեանին կարենայ ունկէն բռնել , և անհամբեր կսպասէր : Ժամ հինգ կերթար և գեռ եկող գացող չիկար . յանկարծ թեթև ոտնաձայն մը լսեց . շնչառութիւնը բռնելով ականջ դրաւ Արշակ , մէկը կամաց մը դուռը բացաւ ըսելով .

— Մի' վախնար , ես եմ :

Լուցկի մը քսեց պատին , ձեռքի ճրագը վառեց և Արշակին մօտեցաւ : Աղաւնի էր որ Մարիամ սպասուհին դրան անջև պահապան դնելով ներս մտաւ : Արշակ գիմացը կվաղէ :

— Աղաւնի , սիրելիդ իմ Աղաւնի . այսքան վտանգի մէջ կգնես անձդ ինձի համար . ուրեմն յիրաւի կսիրես զիս : ՌՏ , օրիորդ չես գիտեր որչափ երջանիկ եմ :

— Այդ երջանկութիւնդ քիչ մը պիտի խանգարեմ հիմա , կրտէ Աղաւնի . բայց դիտնաս որ պատճառն ուրիշ

բան չէ, միայն դեզ աւելի երջանիկ ընելու համար :

— Միայն թէ ինչ որ պիտի ըլլայ, քու ձեռքովդ ըլլայ . մեռցուր զիս, Աղաւնի, եթէ հարկ դատես, բայց քո՛ւ ձեռքովդ, կաղաչեմ :

— Հայրս զիս նշանած է իւր մէկ հայրենակցին, հարկաւ գիտես :

— Այո՛, կըսէ Սրչակ հառաչելով :

— Սա չես գիտեր որ դալ շաբթու կպսակուիմ հետը...

Սրչակ կարծես թէ կայծակնահար եղաւ . աչքին բիբերն մոլեղնաբար իրենց շրջանակին մէջ քանի մ'անգամ գարձունելէ յետոյ,

— Ուրեմն, կըսէ, ոչ դու պիտի ապրիս, ոչ ես :

— Հանդարտէ՛կըսէ Սղաւնի Սրչակին ձեռքը սեղմելով, մի՛ մոռնար ինչ որ քեզի ըսի . միայն գքեզ աւելի երջանիկ ընելու համար :

— Ի՛նչ, կդոչէ Սրչակ . դու ուրիշին կին ըլլաս և ես աւելի երջանիկ . ո՛ւխտադրուժ, կծաղրե՞ս զիս :

— Կամաց . Մտի՛կ ըրէ, Ա՛րչակ . հայրս հաստատ ուրոյած է զիս այն մարդուն տալ . անոր հրամանները անգառնալի են|և կամքը անդրդուելի . մանաւանդ որ հայրս ալ է գտնուեր . անոր կամքին դէմ չեմ կրնար գալ . թէ որ գալ ուզեմ անգամ . ի՞նչ կրնամ ընել . նա վրաս բացարձակ իշխանութիւն ունի . կրնայ զիս իւր երկիրը դրկել . ինչպէս որ բրաւ դժբաղդ եղբօրս . ու հոն, ուզեմ չուզեմ մէկուն հետ կարգել տալ : Կտեսնես, Սրչակ հօրս կամքին իմ կողմանէ պզտիկ ընդդիմութիւն մը ի՛նչ աղէտներ կրնայ բերել իմ և քու գլուխներնուս . մանաւանդ իմ, որոյ ա՛լ կարելի չպիտի ըլլայ սիրելի արչակս տեսնել

Այս խօսքերն ըրած ատեն Աչքերը կլինան . Սրչակ՝ որոյ դէմքը վազրի կատաղութիւն զգեցած էր, գառնուկի կերպարանք կառնէ և ինքն ալ լալով կսկսի Աղաւնիի ձեռքը համբոյրներով ծածկել, և

— Այս վիճակին դարձան , կհարցնէ ,

— Այն մարդուն հետ պատկուել և բնաւ չսիրել զինքը մինչեւ որ բաղդը մեր միութեան առիթ մը հայթայթէ մեզի : Սպասելու եմք :

— Մինչեւ ե՞րբ :

— Մինչև որ . . . ի՞նչ գիտնամ . աշխարհէ . գիտեա որչափ ծեր է հայրս : Մայրս զբեղ զաւելին պէս կսիրէ . աշէկ գիտեմ որ ամենեւին արգելք չէ մեզի :

Արշակ պահ մը մտածելէ յետոյ ,

— Ի՞նչ կըսեա , Աղաւնի , կգոչէ . պատկուելու համար ուրիշ մարդու հետ գլուխ գլխի տանս , ասոր գաղափարին անդամ չեմ կրնար հանդուրժել :

— Բայց այդչափ է ընելիքս . ուրիշ ատեն դոնուած սենեակն անդամ չեմ կրնար գանուել . չեմ կրնար , կըսեմ . վասն զի սրտիս մէջ չիկայ : Աեաքէ բաժնուեմք , Արշակ . հիմա գիտցուր ինձի որ դու ալ հաւատարիմ պիտի մնաս :

Արշակ արդէն ըրած երդումը դարձեալ կկրկնէ , և երկուքն ալ իրարու խօսք կուտան ցկեանս ուրիշ մը չսիրելու : Աղաւնի կենէ և երթալու վրայ էր երբ Արշակ սղաջաւոր գէմքով երեսը նայեցաւ . ինչ ըսել ուզելը հասկցաւ Աղաւնի , և անոր ճակատէն համբոյր մը քաղեց , Արշակ թեւերովը գրկեց զանի և սկսաւ գեղանի այտերը համբուրել . համբոյր , դարձեալ համբոյր : Անմեղ համբոյրէն քաղցր ի՞նչ կայ երկու զիրար պաշտող էակներու համար :

— Օրիորդ , ոչ է ատենը , երթանք , կըսէ Մարիամ , որ դրան առջև կսպասէր :

— Երթանք , կըսէ Աղաւնի : Սակայն ոչ Արշակ զինքը թողուլ կուզէ և ոչ ինք զԱրշակ . բաժնուեցան վերջապէս : Ժամը վեցն անցեր էր . Աղաւնիին ծնողքը խորքուն էին . վասն զի ցորեկը շատ հողմեր էին . Աղաւնի ու

Մարիամ՝ առանց մէկը տեսնելու կրցան տուն մանել . բայց զԳուշութեան համար ճրագը մարեցին : Խարխափելով սանդուղքէն վեր ելնելու վրայ էին երբ Մարիամ Տ. Հեղինէին սենեակին դրան առջև հասած միջոցին ոտքը դետնի դորդին կկռուի և գլտորելով երկու ձեռքը Տ. Հեղինէին պառկած սենեակին դրանը կբաղխէ , այս աղմուկը որ թերևս ցերեկն անդամ երկու թաղ հեռուէն կրնար լսուիլ , գիշերային հանդարտութենէն կրկնապատկուելով , այնպիսի ահարկու ժխոր մը կարձակէ որ Տ. Հեղինէ ցատկելով կարթննայ ու թոքերուն ամեն զօրութեամբ կսկսի պօռալ .

— Կրակ կայ . . . հասէ՛ք :

Աղանի և Մարիամ , դող սիրտը դող , չեն համարձակիր , բան չիկայ մեք եմք , ըսելու և արտոյնօք իրենց սենեակը կբաշուին : Աբրահամ Աղա որ քովի սենեակը կպառկէր , արդէն արթնցեր էր աղմուկէն , և « կրակ կայի » աղաղակէն աւելի զարհուրած սենեակին յատուհանները կբանայ , և ինքն ալ կսկսի ամեն զօրութեամբ ու կոկորդը պատռտելով պօռալ .

— Հասէ՛ք , կէրինք կոր :

Գրացիները ոտք կեշնեն , կսկսին իրարու հարցնել . « ի՞նչ կայ , կրակն ո՞ւր է » : Մէկը կհաստատէ որ ձայնը Աբրահամ Աղային տունէն է , ուրիշ մ'ալ իբր թէ Աբրահամ Աղային տունէն մուխ ելնելը տեսած եղաւ : Վերջապէս կուղան յիսուն հոգիի չափ դուռը ձեռք կառնեն ճիշդ այն միջոցին երբ Աբրահամ փոքրիկ քառակուսի սնտուկ մը թիկն տակ առած դաւիթ կիջնէ , չուանը քաշելով դուռը կբանայ և ,

— Հասէ՛ք , վեր ելէ՛ք , կրակը մարեցէք : Ըսելով ինքզինքը պարտէղ կնետէ . խոհակերոցին առջևէն կանցնի պօռալով .

— Խաշի՛ր , դու ալ հասիր :

Արշակ նկուղէն լսած էր աղմուկը , բայց բառ մը չը-
կրնար որոշել : Այսու ամենայնիւ մէկը վերէն պարտեզին
դուռը բանալը , վազելով դէպ ի վար գալը , խոհակերու-
ցին առջև . Խաչե՛ր դու ալ հասի՛ր : Ըսելը շատ աղէկ լսեր էր :

— Անտարակոյս , կըսէ ինքիւրեն Արշակ . մատնուե-
ցայ , Խաչեր ամեն բան հօրը իմացուց . ան ալ կուգայ զիս
դուրս հանել ու չեմ՝ դիտեր ինչ ընել . կարծեմ հետը
սոսիկանութեան զինուորներ ալ ըլլալու են . ահաւասիկ ...
զէնքի դղրդիւններ : ... Պատրաստուիմ . ո՛հ , իմ սիրելի
զէնքս . ի՞նչ աղէկ ընտրեցի . քեզի :

Արշակ երեւակայելով որ բանակ մը զօրք կբերեն իր
վրայ , քանզի անանկ պարագայներ կան ուր մթութիւնը
ամենէն զօրաւոր երեւակայութիւններն անգամ կրնայ
խանգարել , ընելիքը կորոշէ , դուռը կբանայ , Խաչը ձեռ-
քը կառնէ պատրաստ սա խորհրդով որ իրեն վրայ առա-
ջին անգամ յարձակողին գլխուն զարնէ ու փախչի :

Խեղճ Հաճի Աբրահամ որ կրակ կայ կարծելով իւր
Թանկագին բաները պարունակող սնտուկը նկուղ կփախ-
ցընէր , դրան առջև հասնելուն պէս անօթը գլխուն կուտէ ,
բայց իւր բաղդէն նախ խորունկ կողմը հանդիպելով , վը-
տանդ մը չպատահիր , միայն քիթը բերանը , ամբողջ դը-
րուխը մէջը կմնայ : Մինչդեռ Աբրահամ ապշած կկենար
ու չէր համարձակէր տեղէն երերալ , Արշակ դուրս կը
նետուի , կբանայ դուռը և կփախչի :

Անդին դրացիները փողոցին դռնէն ներս կմտնեն ,
կեննեն վեր , տան ամեն կողմ՝ կպտտին որ կրակ գտնեն ու
մարեն . բան չիկայ , կուգան Տ . Հեղինէին կրակին ուր
ըլլալը կհարցնեն , նա ալ քունը գլուխը , նախ ինք պօռա-
ցած ըլլալը մոռնալով , կըսէ որ Աբրահամ Աղային հար-
ցընելու է . կսկսին ասի՛ փնտռել . Աբրահամ Աղա վեր Աբ-
րահամ աղա վար , չեն գտներ . խոհարարը կտեսնեն որ
երկու ձեռքը մէկ մէկ աման ջուր առած վեր կեննէր . ա-

նոր կհարցնէին թէ ուր է Աղայն . Խաչեր ալ կըսէ որ Աղայն , հասիր , ըսելով պարտէզն ի վար վազեց դնաց :

— Երթանք զանի դանեմք , կըսեն : Ամբողջ խումբը ճամբայ կերնէ Տ . Հեղինէ հետերնին : Աղանի և Մարիամ , որ էին այս աղմուկին ամեն պատճառ և չէին համարձակած խօստովանիլ , բանի մը տեղեակ չըլլալ ձևանալով հետերնին կերթան , խումբը կհասնի նկուղին առջև . Ի՞նչ կնայիս . . . Աբրահամ Աղա մէկ կողմը պատռած վարտիքով ու շապիկով նկուղին դրան առջև անկուեր մնացեր է , տարօրինակ գլխարկը գլուխը : Խումբին մէջ քրքիջ մ'է կփրթի :

— Գիշերային գտակին վերջին տարազն է այս , կըսէ մէկը :

— Վայ ցնդած փե . . . կըսէ ուրիշ մը , կրակը գլխուն մէջ ըլլալու է միայն :

— Անոր համար ասի գլուխն է անցուցեր . սակայն գըրաւ կդնեմ որ մէջինը ջուր ըլլալու չէ :

— Ոչ ջուր և ոչ ուրիշ հեղուկ . քանզի վրան գլուխը չոր է :

— Հապա ի՞նչ կրնայ ըլլալ . ասանկ անօթներու մէջ բան մը կգտնուի . մանաւանդ գիշերները : . . .

— Ա՛լ երթանք , կըսէ մէկն ալ . տեսանք ա՛ , կրակը մարեր է :

Տ . Հեղինէ տեսնելով որ թաղեցիին ծաղուն նշանակ կըլլան , քաղաքավարութեամբ շնորհակալ կըլլայ կրակ մարելու եկած խումբին , կճամբէ ըսելով ,

— Ամենքնիս ալ գոհ եմք որ կրակը միայն մեր Աբրահամ Աղայի երեւակայութեան մէջ է եղեր :

Խումբը կցրուի , և Խաչեր և այնք երկու ձեռքով կը վերցնէ և տեղը տանելու վրայ էր երբ Աբրահամ ապշուած թիւնն անցնելով ,

— Ի՞նչ կասես , կնիկ , կըսէ . դու պօռացիր որ կրակ կայ :

— Վայ մեղքիս, վաղը ինքզինքդ չ-դուճիդ րեպի-կին կարդացնել տուր, կրսէ կինը :

— Հիմակ կճաթիմ, րե կնիկ, րե-նէ աղմուկը քու սե- նեակէդ փրթաւ :

— Գու միշտ ասանկ ես Աբրահամ Աղա, կրակ կայ ըսելով մինակ ինքզինքդ աղատեցիր . հապա իրաւ կրակ ըլլար, խեղճ Աղաւնիս մէջը պիտի այրէր : Պօռալէդ յա- ուաջ պէտք չէ՞ր որ աղջիկս արթնցունէիր որ երէնք յիտի- չէր . միայն ինքզինքդ կհոգաս : Քալէ՛ Աղաւնի . օդը ցուրտ է աղջիկս, հարբուխ կըլլաս, երթանք պառկինք :

Խեղճ աղջիկը որ սրտադողէն կմեռնէր որ չըլլայ թէ Արշակ նկուղին մէջ գտնուի, քանի քանի անգամ հոն մտնել երնելէն և ներսը մարդ չգտնալէն յետոյ, հան- դարտելով մօրը քովիկը կայնէր էր . և այս խաղը սիրա- հարին գործն ըլլալուն վրայ տարակոյսը չէր մնացած : Հա- ճի Աբրահամ կնոջն ու աղջկանը ետեւէն տուն դառնալով սոյն պատահմունքին մէկնութիւնը կլինտուէ մտքին մէջ, մանաւանդ գլխարկին . բայց բան մը չկրնար գտնել . կը- նոցը կամ ուրիշի մը հարցունելու ալ կամչնայ . միայն թէ հովի պէս բան մը նկուղին դրան առջև քովէն անցած ըլլալը քիչ մը կյիշէր . այս ալ ի՞նչ կրնար ըլլալ գիշեր ատեն, եթէ ոչ սատանայ . այս չար ողիններուն իշխանու- թիւնը գիշերներն է . իսկոյն կհամաղուի որ այս պատահ- մունքը սատանային գործն ըլլալու է . սակայն մարդու ըան չըսէր . կինն ու աղջիկը այսպիսի բաներու մէջ թե- րահաւատ էին : Սենեակը կմանէ ու Ս . Արիպիանոսի պատմութիւնը բարձին տակ դնելէ յետոյ, գիշերին մնա- ցած մասը հանգիստ կընանայ :

Իսկ Արշակ ձեռքի զէնքը այնչափ յաջողակութեամբ գործածելէ յետոյ, պարտէզին դուռէն դուրս կեցնէ, Պաղ- լար Պաշի մեծ փողոցը համներով, Զարեհի դուռը ձեռք պիտի առնէր, երբ իւր բազդէն զանի դրան առջև կայ-

նած կդանէ, որ կրակէն լուր կհարցնէր անցնող գարձողին :

— Լուրը քովս է, վեր ելնեմք, կըսէ Սրչակ շնչասպառ և այլ յայլմէ եղած ինքզինքը ներս նետելով :

— Սրչակ, դու՞ ես. զարմանալի տղայ. բայց գոյնդ նետեր է, ձեռքդ կարունի : Աղբար ի՞նչ եղար, բան մը կուզե՞ս. ո՞ւրկէ կուգաս այս ատեն . . . հոգիդ սիրես պատասխան տուր :

Սրչակ որ սենեակ ելնելուն, դուռը կդպելուն ու ետեւէն եկող չըլլայը աղէկ մը քննելուն պէս թիկնաթոռին վրայ նետուեր ու սաստիկ կհեւար, քիչ մը հանդարտելէն յետոյ,

— Բան չիկայ, կըսէ, դու բարեկամս ես, քենէ բան չեմ պահեր . . . զիս կփնտուեն, կաղաչեմ պահէ զիս :

— Ո՞վ կփնտուէ, ո՞ւր էիր :

— Դիմացը, Աբրահամ Աղային տունը, պարտէզին մէջ :

— Աբրահամ Աղային տունը մի. հասկցայ, կրակ մարելու դացիր անշուշտ . . . անհոգ եղիր, բարեկամ, հոն մարդ փնտուող չիկայ :

Սրչակին սիրտը հանդարտելէն յետոյ : վեր ի վերոյ եղածը պատմեց, բաւական խնդաց Ջարեհ, և այն աղմուկին սկզբնապատճառ ինքն Սրչակ չըլլայը համոզելէ յետոյ,

— Մնացածն ալ վաղը մտիկ կնեմ, կըսէ, ատանկ բաներ սովորաբար սիրահարներու կպատահին, հիմա քուն ունիմ :

Ջարեհ անկողին կմանէ. Սրչակ ալ մատը կպպելէ յետոյ, որ Լուրը ուժգին Աբրահամ Աղային գլուխն անցուցած ատեն մաշկը ունկին մէկ կունտ տեղին հանդիպելով սպրդեր էր, իրեն համար պատրաստուած սենեակը քաշուեցաւ, և այնչափ հոգնութիւններուն վրայ հանդիստ քնացաւ :

Հետեւեալ օրը Տ. Մաքրիկ ժամ չորսին անկողինէն ելեր ու հազուած սգուած գանաբէի մը վրայ ընկողմնացեր էր. Միտքը շատ զբաղած կերեւէր այսօր :

— Ընելիքս որոշուած է և յատակադիծս պատրաստ, կըսէ ինքիբնն. կերեւայ որ այս տղան ա՛լ չպիտի կարենամ յուսով ապրեցնել. ուստի ինէ չպաղած սկսիմ գործադրութեան : Ուշացայ անգամ, դժբաղդ քրոջս հոգւոյն ա՛լ պէտք է հանգիստ տալ. այո՛, այն խեղճ Վարդուհին որ տասն և ինը տարեկան ծաղիկ հասակին մէջ Չարեհին հօրը Յակոբին անգութ բարբարոսութեան զոհ գնաց : . . . Անոր արիւնը քսան տարի է վրէժխնդրութիւն կպռայ. պէտք է զոհուի Չարեհ անոր ուրուականին, Չարեհ որ քրոջս յաջորդին միակ ծնունդն է, և Յակոբին աչքին լոյսը : Պէտք է հայրը բոլոր հարստութիւնը տուծէ : Ի՞նչ ահարկու վրէժխնդրութիւն :

Սակայն Չարեհ ինչո՞ւ զոհուի հօրը մէկ ոճրագործութեանը համար. այն դեղեցիկ, զգայուն, սիրուն պատանին, որ կպաշտէ զիս, մեղք է. հազիւ կսկսի ապրիլ. վարդի պէս երիտասարդ մը. ի՞նչ ոսկեթել մազեր. ի՞նչ հրեշտականման դէմք. ի՞նչ անոյշ աչք : Ես ալ զինքը կատարեալ սիրով պիտի սիրէի, եթէ քրոջս յաջորդին տղան

չըլար : Փոխէ՞ի արդեօք յատակագծիս այս մասը . Յակօր թող մեռնի , Յակօր որ պատճառ եղաւ քրոջս ամեն աղէտից : . . . »

Մաքրիկ քանի մը վայրկեան միտքը հանդարտեցնելէն յետոյ յանկարծ ոտք ելաւ , բոլոր դէմքին վրայ դժոխսային կատաղութիւն կտիրէր :

— Ի՞նչ , կըսէ դարձեալ ինքիւրեն , զո՞հս վրիտե՛ւ , դըթութիւն մի . արդէն Յակօր չորս աւուր կեանք ունի . զառամեր է , հող կհատի : վաղը կսատի կերթայ , գարշելի շունչը փշած վայրկենին ամեն բան կլմնայ , ալ անկէ յետոյ ի՞նչ կզգայ . ոչինչ : Յրէնսդիրք կսխալին երբ մարդասպանները մահացունել կարամագրեն . այս պատիժ չէ , այլ զանաւր աշխարհային տառապանքէ ազատել . մարդասպանը պէտք չէ մեռնի , այլ ապրելու է մնացած օրերը յաւով ու հեծութիւնով անցունելու համար : Չարեհ մեռնելու է , հօրը աչքին լոյսը . ա՛լ անկէ յետոյ Յակօրին համար ամեն մէկ վայրկեան մէկ մէկ մահ է : . . . Ախ , ասոր գաղափարն անգամ սիրտս կպարզչկեցնէ : Չէ որ Չարեհ անոր տղայն է . թերևս Աստուած կաղդէ ինձ այս վրէժխնդրութիւնը . առանց անոր հրամանին տերև չչարժիր : Առկէ զատ չէ՞ որ Աստուած ինքն ըսած է որ չարագործին վրէժը եօթը աղգէն կհանէ : Հայրը մեղանչեց . պէտք է տղան քաւէ : Նախ հարստութիւնը փճացնեմ , ապա : . . . Կարծեմ տասը ոսկիի չափ ալ երեկ ծախք ընել տուի : Արբահամ Աղային հետ տեսնուիլը աղէկ նշանամարեցի . հասկնամ հօրը վիճակը , և ըստ այնմ սկսիմ : . . . Կուշանայ այն մարդն ալ . ճաշի հրաւիրեր եմ , հիմա ճիշդ կէս օր է , դեռ չեկաւ :

Հաճի Արբահամ պատճառ ունէր ուշանալու : Յիշեալ աղմկայոյզ դիշերուան առաւօտ , Տ . Մաքրիկին սպասարարըն եկեր զինքը ճաշի էր հրաւիրէր սիրուհոյն տունը : Արբահամ իսկոյն պատրաստութիւն կտեսնէ , և որովհետև

դեղեցիկ կնոջ մը հետ առտութեան երթալու համար ծե-
րերն շատ աւելի փոյթ և խնամք կուեննան զարդարուելու
քան թէ երիտասարդները , քանզի ասոնք բնական զար-
դերնուն վրայ քանի մը բան ունին միայն աւելցնելիք ,
քանի որ ասոնք բնութեան աւերածներն անգամ առժա-
մանակ մի ծածկելու կպարտաւորին . ուստի մինչև որ ա-
ծիլուեցաւ , ընչացքը ներկեց , և պահեստի հազուստն հա-
զաւ , արդէն ցորեկ էր , տունէն դուրս կելնէ ու հազիւ
քսան քայլ կառնէ երբ ,

— Բարի լըյս , Սըրահամ Աղա , կըսէ ծանօթ անձ մը ,
անցած ըլլայ , այս դիշեր մեծ փորձանք մը պատահեր է ձեր
տունը :

Սըրահամ Աղային հարկ կըլլայ որ պահ մը կենայ ,
վասն զի բարեկամ մարդ է զխմացինը . ու եղած դացածը
քանի մը խօսքով հասկցնելէ , առանց սակայն նկուղին առ-
ջև պատահած դէպքը յիշելու . և անոր բարեօրոտութեանը
շնորհակալ ըլլալէ յետոյ , ճամբան կերթայ : Քանի մը
քայլ կառնէ շառնէր , հեռուէն ուրիշ մը ,

— Սըրահամ Աղա , կեցի՛ր կպօռայ . երեկ դիշեր
զլուխդ մեծ փորձանք մը պատահեր է , . . . ինչ որ է ան-
ցուցեր էք առանց վտանդի , աչքերնիդ լոյս :

Սըրահամ Աղային սիրտը քիչ մը կնեղանայ , բայց
ի՞նչ օգուտ . բարեկամ . մարդ անքաղաքավար չըլլալու
համար պէտք է քանի մը անոյշ խօսք ընել , հապիւ այս
փորձանքն ալ գլխէն կճամբէ , քանզի այս ամեն պատա-
հում մէյմէկ փորձանք էին , ուրիշի մը կպատահի . չեր-
կարեմ խօսքը , մինչև որ երթալիք տեղը կհասնի , կէս օրը
ժամի մօտ անցեր էր : Խեղճ մարդը այս օրինակ փորձան-
քի մ'ալ պացած տեղը կհանդիպի . Տ . Մաքրիկ ճաշին
միջոցը լուռ շանցունելու համար մեր Հաճի Սըրահամին
քիչ ախորժած խօսքը կբանայ :

— Աղէկ մտքս եկաւ . Սըրահամ Աղա , այս դիշեր

ձեր տունը կրա՞կ պատահեր է : Սա կտորը առ չաւելի աղէկ է :

Տ . Մաքրիկին այս հարցումին վրայ այնչափ կշիռթի Սքրահամ որ խորտիկը կտրելու ատեն մազ մնաց մատը պիտի կտրէր :

— Ի՞նչ շուտ տարածուեր է այս լուրը , կրսէ ինքիբերն թէ որ պարտեցին դէպքն ալ իմացեր է՝ մեռայ դնաց :

— Չէ , Տիկին , կրսէ Մաքրիկին դառնալով . կրակ չէ . անանկ պղտիկ պատահմունք մի . քանի մի քուրջ բռնուրնկեր են եղեր , այսչափ . այն ալ շուտ մի մարեցինք : . . .

— Անցուցեր էք , աչքերնիդ լոյս : . . . Բայց մեր ըստ պատարը ուրիշ բան մ՞ալ իմացեր է : . . . Այն միշոցին դուք տունը չէ՞ք եղեր , ի՞նչ . ասանկ բան մը : . . .

— Հասցար մի էֆէնտիէ սեյէնի , կրսէ Սքրահամ մէկէն խօսքը կտրելով և թողմած երեսները կրակի պէս կարմրերելով , վասն զի Մաքրիկին քիթին տակէն խնդալով խօսիլը աղէկ նշան չէր երեւցեր . ի՞նչ շուտ ալ մէկ բանը կիմացուի այս քաղքին մէջ , այն կզարմանամ :

— Եթէ մարդ ալ չտեսնէ դարձեալ կիմացուի . պատերըն անգամ ականջ ունին . ս՛ւր մնաց որ երբ յիտուն հողի դան ու տեսնեն : . . . Աերեւի թէ ախորժակ չունիք : . . .

— Ծնորհակալ եմ , կուտեմ կոր : Սա ալ զարմանալի է որ ի՞նչ շուտ այնչափ մարդ ժողովեցան երէկ գիշեր : Մէկ տարի մի իմ տուն գող մտաւ . զիս ա՞յ մեռցնէր . շատ պօռացի որ քան զիս ազատեն , կատու մի անգամ չերեւաց : Էֆէնտիէ սեյէնի , ետքը գողին ինչու անիծեցի ա՛ . . . ան չէ ասելա :

— Ի՞նչ ըրիր , մեռուցիր :

— Չէ՛ , ձանէս վախցաւ ու փախաւ :

— Իրաւունք ունիս , կրսէ Մաքրիկ . հողի ազատելու համար մարդ տեղէն չերերար . բայց կրակն ուրիշ բան : Եթէ գողն զքեզ մեռցունէ կամ կողոպտէ , դրացի-

ներուդ , թաղեցիկն ի՞նչ շահ կամ ի՞նչ վնաս ոչինչ :
 Հրդեհն անանկ չէ . ամբողջ թաղին , երբեմն ամբողջ թա-
 ղերու վնասելը կարելի է . մանաւանդ մեր երկրին մէջ ուր
 բնակիչք միջին հաշիւ կեանքերուն տասն տարւան աշ-
 խատուութեան արդիւնքը կրակի կուտան : Բայէ ք որ մար-
 դըս չչարժիր տեղէն մինչև որ խրանձին սողալի վե-
 րաբերութիւն ունեցող շահ կամ վնաս մը գինքը չըրդէ
 ախարհիս կանոնն է այս . ամեն դարու մարդիկ ինքնատէր
 եղան , են և պիտի ըլլան միշտ :

Ելան կերակուրէն սուրճ խմեցին , Մաքրիկ խօսքն
 սկսաւ .

— Գուք ալ երէկ ազէկ ժամանակ անցուցիք Չամբու-
 ճա . օդն ի՞նչ ազէկ էր առաօտուն , բայց երեկոյին սա-
 կաւ ինչ արուեցաւ :

— Ի՞նչ վնաս ունի , կրտէ Սքրահամ . քիչ մի անձրև
 մայիսի մէջ եմք . միայն կտոր մի ճամբայները կցելտտին
 անդամ մի որ արև ծագէ , կչորնայ կերթայ . բնաւ չանձ-
 րեւածի պէս կըլլայ :

— Արչալի գոհ եմ , Սքրահամ Աղա , որ հրաւերս ըն-
 դունեղով պատիւ բրիք եկաք , շատոնց կփափաքէի տես-
 նուիլ ձեզի հետ :

— Լիճնայի սեպե՛նձ , ես ալ նոյնպէս : Մեր բարեկա-
 մութիւնը շատ հին է . մանաւանդ հօրդ հետ , դիտնալու
 ես , Տիկին , որ ձեր հայրը նշանաւոր վաճառական մի էր
 Իզմիրի մէջ . ձենէ քանի մի տարու մեծ ազլիկ մի ունէր ,
 անունը ո՛ր յիշե՛մս : . . .

— Վարդուհի :

— Հա՛ , Վարդուհի որ շատ սքանչելի գեղեցկութիւն
 ունէր . ճիշդ ձեզի պէս . Տիկին . այս խեղճ ազլիկին վրայ
 հիւանդութիւն մի եկաւ , մեռաւ . մարդ չգլխացաւ թէ
 ինչ էր ախար . հայրդ այն ազլիկան վրայ կլանեղենար , երբ
 որ մեռաւ , հայրդ ալ ինքզինքը սպաննեց յուսահատու .

Թենէն ու կսկիծէն : Հայրդ Ռրիգ որ Ալա զանազան ընկերութեանց վրայ հազարաւոր ոսկի առնելիք ունէր . ամենքն ալ փճացան . վերջապէս հօրդ տունը մարեցաւ զընաց . անկէց ի վեր քսան տարի կայ . բայց այն ամենը աղէկ մխարս է : . . . Աներէք , Տիկին , զձեզ տրամեցուցի անցեալ կսկիծներ յիշեցնելով :

— Երէկ նշմարեցի որ , կըսէ Մաքրիկ մեծ թմբու-
թենէ արթնցածի պէս , Պ . Զարեհի հետ կտեսնուէիք ,
ի՞նչ յարաբերութիւն ունիք հետը , կիսափաքիմ գիտնալ :

— Էֆէնտի «եյնէնէ» , անտր հայրը , որուն հետ ատենօք
աղէկ կտեսնուէանք , ինձի ըսած է որ դրամի պէտք ունե-
ցած ժամանակ փոխ տամ տղուն : Ետտ շուայլ տղայ է .
դեռ տարի չընէր մի անգամ հարիւր ոսկի առաւ . հինգ
անգամ ալ երկու հարիւր . անցեալ օր ալ չօրս հարիւր
ոսկի ուղեց . բայց հայրը մինչև երկու հարիւրի հրաման տը-
ւած է ինձի . ուստի այնչափ տուեցի . «բնն» երբ մեք տը-
ղայ էաք , հօրերնուս ստակ մի չէինք կարենար ուզել .
հիմակու տղաքը

— Այդ ստակները ի՞նչպէս կուտաս . երաշխաւորու-
թեամբ թէ ուրիշ կերպով :

— Փոխանակագիրով :

Տ . Մաքրիկ պահ մը խորհելէ յետոյ ,

— Կստորադրէ՞ Զարեհ թէ կկնքէ , հարցուց :

— Անիքը կկոխէ . մեք հին մարդ եմք . մեր խեքըը
կնիքի կհասնի . կեցիր նայիմ , անցած աւուր զըածը քովս
է : . . . Ահաւասիկ :

Մաքրիկ ուշադրութեամբ զննեց կնիքը որ երկու հա-
րիւր իրանոց վարձայն ունեցի վրայ կոխուած էր : Աբրահամ
խօսքը շարունակելով :

— Գլատէք , Տիկին , կըսէ , այս օրերս հարսնիքի պատ-
ճառաւ ո՛րչափ պէտք ունիմ ստակի . հայրը ստակ չզրկէր
թէպէտ ես ալ չուղեցի . սոկոս սոկոսի վրայ կը իզուի . չը-

Իսեմ վերջը ի՞նչ ա՛ն նմանք :

— Այդ ստակներն ամբողջ ձեռք բերելէ յետոյ հինգ հարիւր ոսկի ալ բացէն շահ կայ քեզի , կրտէ Մաքրիկ , մէկ գործէ մը որ գաղտնի մնալու է մեր երկուքին մէջ : Հինգ հարիւր ոսկի զուտ շահ , եթէ ուղածիս պէս գործ տեսնես թերևս հազար :

— Ի՞նչ ասացիր , Տիկին :

— Այո՛ , հազար ոսկի . և պատուական կերպիւ հարու նիքիդ ծախքը կհանես . բայց գողութիւնով չէ , մարդասպանութիւնով ալ չէ , հապա ամենայն արդարութեամբ :

— Հասցար մի եֆենդիօ՞ւ «եօյլէյի՞» , մեք սեղանաւոր եմք . այսինքն վաչխառու . մեք , հասցար մի եֆենդիօ՞ւ «եօյլէյի՞» , խոստովանահայր քահանայներու պէս գաղտնիք կպահեմք , սակայն հազար ոսկի շահ , . . . այդ չհասկցայ :

Աբրահամ որ հաշար սկի շահ խօսքը ականջին մէջ թընդալէն ի վեր ինչպէս խօսելիքը կշփոթէր , ու մէկ կողմէն ձեռքերն իրարու կշփէր . միւս կողմանէ ալ եֆենդիօ «եօյլէյի»ները առատօրէն կքէր :

— Պատմեմ , կպատասխանէ Մաքրիկ , քանի որ ինձի գաղտնապահութիւն խոստացար . վասն զի առանց անոր ոսկի մ'անդամ շահ չունենալնուդ յետոյ , թերևս տուգանք ալ վրայ կուտար : . . . Նախ սա գիտնաք որ Զարեհին հայրը շատ գէշ մարդ է :

— Ի՞նչ կասէք , Տիկին : . . .

— Հայրս այն մարդուն հետ մեծ գործառնութիւնները րած էր . և օր մը բսած էր մեզի որ Յակոբին վրայ հինգ հազար ոսկի առնելիք ունի : Երբ ինքզինքը զարկաւ , ես ու մայրս խեղճ մնացինք , օր մը կանչել տուինք այս մարդը : և վիճակնիս հասկցունելիսուս յետոյ , ազաչեցինք որ հօրս հետ ունեցած հաշիւը կարգի դնէ , և քիչ մը բան տայ պարտքէն . վասն զի , ըսինք իրեն , ասկէ զատ ասորուստի միջոցնիս չէ մնացած : Յակոբ ի՞նչ պատասխան որ տայ կը

հաւնիւ , Աբրահամ Աղա :

— Ի՞նչ ասաց :

— Քիթը բերանը ծռմուկելով մօրս ըսաւ . « Ասխա-
« լիք , Տիկին , Գրիգոր Աղայն է որ պարտական է ինձի
« այդչափ գումար մը . այս բանը հաստատող վաւերական
« գրեր անդամ ունիմ ձեռքս . սակայն քանի որ վիճակ-
« նիդ աղէկ չէ , ի սէր բարեկամութեան ձայն չեմ հաներ :
« Ասկէ աւելի բան մի՛ յուսաք ինչ : » Այս ըսելով , ա-
ռանց իսկ բարեւելու ելաւ գնաց : Մօրս թափած արտա-
սուքը վազրերն անդամ ի գուժ շարժելու կարող էին ,
Աբրահամ Աղա . . . ձեռքերնիս կանոնաւոր գիր չունէ-
ինք , էրիկ մարդ ալ չիկար որ մեզ պաշտպանէր . երեսի
վրայ մնացած երկու խեղճ կիներ . ի՞նչ կուզար ձեռքեր-
նուս : Չերկարեմ խօսքը , Յակոբ մեր ամեն հարստու-
թիւնը այսպէս կերաւ :

— Վա՛յ անգուժ մարդ , կրտէ Աբրահամ , չելլա՞յ այդ-
պիտի խաղ մի ալ ինձի խաղայ :

— Կարելի է , բայց քանի որ այդ գիրերը ձեռքդ ու-
նիս , այնչափ վախ չիկայ , միայն թէ փութալու ես :

Մաքրիկ տեսներով որ այս վէպը յուսացած տպաւո-
րութիւնն ըրաւ Աբրահամին վրայ ,

— Հիմա դանք մեր ինդրոյն , կրտէ , այս մարդուն
դէմ ես խաղ մը պատրաստեցի . հազար ոսկի շահ ունիմք .
հինգ հարիւրը ձերն է . թէ որ ուզածիս պէս գործադրէք ,
այն ժամանակ : . . . Հինգ հատ փութալու «սէկէ» կնքել
տամ պիտի Չարեհին երկերկու հարիւր ոսկինոց . իբր թէ
զանոնք ձենէ փոխ առած ըլլայ : Գուք ալ անմիջապէս պի-
տի երթաք Պրուսա և ձեր առնելիքներուն հետ մէկտեղ
ամենքն ալ պիտի պահանջէք տոկոսներովը հանդերձ . թէ
որ դժուարութիւն ցոյց տայ , դատ պիտի բանաք : . . .

— Խօսքերնիդ մի մոռնաք , Տիկին , այդ հազար ոսկին
եւ չեմ տուած . դուք տուի՞ք Չարեհին :

— Չկրցայ հասկցնել , Աբրահամ Աղա , առանց տը-
ւած ըլլալու պիտի պահանջեմք . . .

— Այդ բանը իմ խղճմտանացս կդպի , կըսէ Աբրա-
րահամ քիչ մը մտածելէ յետոյ :

— Խղճմտանքիդ կդպի մի' , կըսէ Մաքրիկ այնպիսի
ծիծաղով որ բռնի ըլլալը յայտնի կերևէր . խղճմտանք
ի՞նչ ըսել է չեմ հասկնար . առանկ անգութ մարդու մը
դէմ մանաւանդ . . . տղայական նախապաշարմունքով ա-
սանկ մեծ հարստութիւն մը ետ մանել . . . հա' , հա' , հա' :

Աբրահամ նախապաշարմունք բառին նշանակութիւնը չէր
հասկնար . և թէպէտ ըրած փոխատուութիւններէն մինչև
երեսուն առ հարիւր վաչխ առած ունէր , սակայն և այն-
պէս կեանքին մէջ բնաւ արդարութենէ չէր չեղած :

— Տիկին , կըսէ . հարստութիւն կասէք , աղէկ բան .
սակայն եֆէնդիսե սեյէնիս , այդ հարստութիւնը անիրաւ
հարստութիւն է :

— Հարստութեան անիրաւն ալ ըլլալը չգիտէի . մին-
չև որ մարդու մը քովէ ստակ չպակսի , ուրիշ մարդու մը
քով ստակ մը կաւելնայ . կհարցնեմ , Մեղքն իմ ճիտս :

Տ . Մաքրիկին այս փաստը չկրցաւ հերքել Աբրա-
համ . ողջմտութիւնը չկրցաւ ըսել տալ . « Իրաւունք ու-
նիք , Տիկին , մինչև որ մէկուն քովէն ստակ մը չպակսի ,
ուրիշի մը քով ստակ մը չաւելնար . սակայն նկատելու է
որ եթէ այս ուրիշը նոյն ստակն առնէ առանց համեմա-
տական փոխարինութիւն ընելու , այն ժամանակ այս ու-
րիշը առաւելու ճարտ չըսուիր : » Ուստի կէս մը շահասիրու-
թեան կէս մ'ալ առաջարկեալ դրամին մեծութեան չը-
կրնալով դիմանալ , Հաճի Աբրահամին առաքինութիւնը
դողդղալ , տկարնալ կսկսի : Այն օրերը հարսնիք ունե-
նալով արտաքոյ կարգի ծախքերու ենթակայ էր . ասկէ
զատ Յակոբ ժամանակաւ Մաքրիկին հօրը անիրաւու-
թիւն էր ըրած , ուստի շատ օրինաւոր էր վրէժ հանել ,

մանաւանդ որ այս դործին մէջ եթէ մեղքաւ կայ, Մաքրիկ ինքնին վրան կառնէ . այս մտածմունքները մեր Սբրահամ աղային խիղճը քիչ շատ կհանդարտեցնեն . պահ մը լուռ կենալէ յետոյ .

— Բայց, կըսէ . յառաջ հազար ոսկի կասէիք հիմա հինգ հարիւրի իջաւ :

— Հազարն ալ ձեզի կթողում քանի մը պայմանաւ . նախ որ կարելի եղածին չափ շուտ դործադրելու է : . . .

— Հարսնիքս այս կիրակի ո՞նեմ երկուշաբթի ճամբայ կեննեմ :

— Շատ աղէկ . երկրորդ որ ամեն ըրածիդ լուրը այն օրը ինձի պիտի տաս հեռագրով, ծախքն ինէ : Երրորդ, բարեկամութիւն չպիտի նայիս, հապա ամենայն խստութեամբ պիտի վարուիս հետը :

— Ս,յդ դիւրին է . ինէ գիտցիր, Տիկին . կնքուած թուղթերը քօ՛վդ են :

— Վաղն առտու կանուխ կղրկեմ : Զորրորդ՝ այս դործը մեր մէջ դադանի պիտի մնայ . և այս օրէն յետոյ բնաւ Զարեհի հետ պիտի չտեսնուիս :

— Եթէ այդ ասացածներդ կատարեմ . . .

— Հազարն ալ ձերն է :

Մեր Սբրահամ Աղային երեսները ուրախութեան ճառագայթներով կսկսին վայլիլ : Այս դործը խոհեմութեամբ ու Մաքրիկին յուսացածէն լաւ գլուխ հանելու խօսք տալէ յետոյ, ոտք կենէ և մնաս բարևով ըսելով կերթար :

— Երթաք բարևով, կըսէ Մաքրիկ . ա՛լ ասկէ յետոյ ինձի տեսնելու հարկ չմնար :

Աբրահամ դուրս ելնելուն պէս, Մաքրիկ կնոսի զըրօսեղանին առջև նամակ մը կգրէ, կծալլէ և պահարանի մէջ դնելով կկանչէ սպասաւորն ու կըսէ որ Պարոն Չարեհի տունը տանի: Այս նամակաւ Չարեհ նոյն երեկոյ Մաքրիկին հետ ընթրելու հրաւիրեալ էր: Մաքրիկ միշտ գրասեղանին առջև, գլուխը թեկն կըթնցուցած,

— Գործը գիւրացաւ, կըսէ մտքէն. արդէն այս մարդը հազար երեք հարիւր սօկի առնելիք ունի եղեր. հազար ալ, կընէ երկու հազար այսքան: Աբրահամ գործը զխացող վաշխառուներէն է. նա տօկոս, տօկոսի տօկոս ըսելով, օր, ժամ, վայրկեան հաշուելով կընայ կրկնապատկել այս գրամը: Յակօրին հարստութիւնն ալ մեծ բան մը չկընար ըլլալ. առ առաւել չորս հինգ հազար սօկի: Հապա Աբրահամ ապիկարութիւնով գործն երեւան հանէ, այն առտէն ի՞նչ ճամբայ բռնեմ: . . . Այն ալ հոգս չէ. զլասն իրեն, քանի որ շահ ընէր, իրը պիտի ըլլար. թող աչքը բանայ. զիս չկընար մատնել. նախ որ վկայ չունի. այս աւուր խօսակցութիւննիս ո՞վ լսեց. ո՞վ տեսաւ: Ա՛հ. ժամը տասը գացեր է. ըսաւ եռօտանիին վրայի ժամացոյցին գարձունելով աչքը. պատրաստուիմ Չարեհին լաւ ընդունելութիւն ընելու:

Այս երեկոյ Մաքրիկ մասնաւոր շքեղութիւն տուաւ իւր անձին, արեւելեան տարագով զարդարուեցաւ, խար-

տիշագեղ մագերը կէս հիւսած վայելչապէս թողուց ուսերուն վրայ . յամիկ և վարդ արուեստական ծաղիկներով պսակ մը դըռխը , փայլուն ճակատը կիսով չափ կծած կէր . ականջի յակինթ օղերը , մարմարինէ կուրծքն անցուցած մանեակին զմրուխտները , դէմքին բնական սպիտակութիւնը կանաչ և կապոյտ նշոյլով կպճնէին :

Ըստ Տաճկական տարազու էմիրի հագաւ պատուական կերպասէ . որոյ երկայնաձիգ քղանցքն մէջքի ոսկեճամուկ և աղամանդեայ ճարմանդներով սեղմուած դուտի մը վրայ կյարէին : Այս դօտին գեղակազմ մէջքը սեղմեր , և իւր սեռին յատուկ գոյգ մը նարնջաձև հրապոյրներուն բնակած տեղը տակաւ ինչ դուրս կցայտեցնէին . կանանց հագուստի մասին արևելեան տարազը ըստ իմ կարծեաց Եւրոպականէն շատ ավելի վայելուչ և հրապուրիչ է . թողութիւն կինդրեմ ճոթսոց ճաղած և ճաթնաղէներէն : Մաքրիկ այս ամեն զարդ բնական վայելչութեամբ կկրէր , և այնպիսի դիւրութիւն մը կար շարժմանցը մէջ : որ անոնք իրեն համար նոր բան մը չըլլայը յայտնի կցուցընէր : Մաքրիկ թէ կզարգարուի և թէ ատենը հեղ մը աչքը ժամացոյցին վրայ կգարճնէ :

— Չարեհ կուշանայ կարծեմ , կըսէ ինքիրեն , ոչ , . . դեռ տասն և մէկուկէս . ես զընցի որ կէսին գայ :

Մաքրիկին դրած պայմանաժամէն երէք խտտորած չունէր Չարեհ . նոյն օրը Պօլիս գացած էր , երեկոյին ժամ տաներկուքին ատենները տուն դառնալով սիրուհւոյն հրաւիրագիրը դրասեղանին վրայ կգտնէ , մէկէն կընայ ու անյապ նայուածքով քանի մ'անգամ կարգալէ վերջը ,

— Այս շնորհին բնաւ չէի ականկալէր այսօր , կըսէ ինքիրեն , չուշանամ , երթամ փութով . տե՛ս ինչ է ըսեր . « պաշտօնիդ իմ Չարեհ , այս երեկոյ անհամբեր կսպասեմ : . . . » Ա՛հ , կխենդենամ հիմա , ինչ երջանկութիւն :

Առանց ձին բերուելուն սպասելու որ չըլլայ թէ ուշ

մնայ , դուռնէն դուրս կնետէ ինքզինքը : Աւելի կվազէ քան թէ կքալէ : Ճամբուն վրայ յանկարծ մէկը կքաշէ թեւէն . կդառնայ կնայի որ ծերուկ մարդ մ'է :

— Կներես , տիրացու , կըսէ Չարեհին , երէկ քեզի տեսայ +՞ Պ , Մկրրին հետ կառքով կերթայիր . ես անոր պատմութիւն մը կպատմէի , կիսատ մնաց , այս օրերս ալ ճամբորդ եմ , հիմա այն պատմութիւնը քեզի պատմեմ , հրամանքդ ալ Պ . Մկրրին պատմէ . հա՞նք տիրացու , չմոռնաս : Ուտի ի՞նչ կըսէի կոր , . . . կեցիր նայիմ : . . . Հա՛ , ծայրէն պատմեմ , հրամանքդ ծայրը չես գիտեր . լուսահոգի մամս կպատմէր որ . . . :

— Մամդ ալ գետինն անցնի դու ալ . կըսէ Չարեհ կըրակ կտրած ու թեւը քաշելով , դնա՛ բանդ հոգիդ սիրես :

Չարեհ մեր բազմահմուտ Պ , Մակարին գլխուն հազարոմէկ անէծք թափելով ճամբան կերթայ . կհասնի Մաքրիկին տունը , ասի նապեղի քալուածքով կդիմաւորէ զինքը . Չարեհ ձեռքը թօթված միջոցին անդամ մը աչքը կպտտցունէ Մաքրիկին վրայ և հիացած կմնայ . երբէք այսչափ գեղեցիկ տեսած չունէր զանի . Ռափայէլ իւր վաւժառն երեւակայութեան մէջ ասկէ ընտիր գեղեցկութեան տիպար մը չէր կրնար ստեղծել : Չարեհ այսքան հրապուրանաց ազգած յափշտակութենէն մղուած՝ բռնած ձեռքը կքաշէ կհամբուրէ : Այս կէտին Մաքրիկին գէմքին վրայ այլայլումմը կերեւի , զոր հարկաւ մեր սիրահարըն ալ պիտի նշմարէր , թէ որ խելքը դլուխն ըլլար : Ինչ որ ալ ըլլայ Պարսն Մկրրին կարծիքն այս կնոյ վրայ , այս առաջին անգամ էր որ ասանկ համարձակութիւն մը կըրցած էր առնել Չարեհ , այն ալ դրեթէ առանց սիրուհւոյն թոյլտուութեանը :

— Կեանքիս մէջ այս երեկոյնն պէս երջանիկ ըլլար քեմ յիշեր , Մաքրիկ . . . կներէք Տիկին , երջանկութիւնը զիս կապշեցնէ , կյափշտակէ

— Ինչի համար ունեցած այսչափ խնամացի և սիրոյ-
եթէ առանց փոխարինութիւն ընելու բաժնուէի , ապե-
րախա եղած կրկնայի ձեզի դէմ . ուստի այս երեկոյ յար-
մար դատուցի մասնաւոր տեսակցութեան : . . .

— Ի՞նչ , բաժնուի՞լ , ի՞նչ ըսիք Տիկին , կաղաչեմ ,
կրկնեցէք :

— Ս. յս մօտերս . . . միայն կայ կարճատե ճամբարդու-
թիւն մ' ընել . բայց դեռ քանի մը օրեր հաս եմ , շատ
ալ պիտի դառնամ , մէկ երկու ամիսէն , այս միջոցին գիւ-
շակտի մտնաք . կ'յուսամ Պարսն Զարեհ :

— Զեղ մտնա՛լ . ո՛հ . կարելի չէ Տիկին , մարդկային
հնարաւորութենէ դուրս է այդպիսի պաշտօնի կերպարանք
մը մտքէ հանել : Երանի թէ վայրկեան մը հոս գնէիր ձեռ-
քըդ . կ'յարէ Զարեհ սրտին սունը ցոյց տալով , այս սիր-
ալ որ այս կէտին հիացած կտրուիէ , տարիէ աւելի է որ մի-
այն ձեզի համար բարախեց , և մինչեւ վերջին ցոյց ձեզի
համար պիտի բարախէ , Տիկին :

Արդարեւ գինովցածի պէս էր Զարեհ , վաճա՛րի հա-
մարձակութիւնը երթալով կաւելցնէր Տ . Մարտիկին քով .
ասի միջոց մը խոյս կուտայ քովէն դուրսով :

— Աներէք , Պարսն , հիմա կ'եղամ :

Զարեհ մինակ մնալով պահ մը խեղճը զլուխը կ'ծողվէ ,
և կսկսի այս կնո՛ջ իրեն հետ ունեցած վարմունքին վրայ
խորհիլ :

— Ի՞նչ զարմանալի կին է , կրտս . մինչեւ այս կէտիս
քաշուերով կվարուի հետս . շատ պարկեշտ է . և կարծեմ
մինչեւ հիմա կամքիս չդիջանելուն պատճառ . սա ըլլալու է
որ չկրցաւ յաղթել համեստութեանը . մեծ գոհողութիւն
կրնէ իմ սիրոյս համար : Ս . հ , ո՛րչափ բարեբաղդ եմ այս
դիչեր . կենացս մէջ նշանաւոր մէկ դիչերը պիտի ըլլայ այս :

Քառորդի չափ մինակ մնալէն յետոյ Մարտիկ ներս
կ'մտնէ և ,



— ԻՆՆԵՄՔ, Պարոն Զարեհ, կերակուրը պատրաստէ :

Սեղանին վրայ չկրնար համարձակ ըլլալ Զարեհ, որովհետեւ մինակ չէին . սպասուհին սկաւառակները կիտխէր, սպասաւորն ալ կերակուրները կրայխէր . ուստի կերակուրին միջոցը բոլոր խոսակցութիւնն անտարբեր նիւթերու վրայ եղան, առջի աւուր առաւօտ օդին աղւոր ըլլալը, Զամբրճայի բազմութիւնը, հոն ըրած զուարճութիւննին, երեկոյին անձրեւ ելով շատ մը ընտանեաց թըրջիլը և այլ ասոնց նման պատահմունքներ եղան խօսքերնդուն նիւթ: Մէկ երկու վայրկեանը հեղ մը Մաքրիկ դիտի կհրամայունէր Զարեհին :

— Բնաւ դինի չէք խմէր, Պ. Զարեհ, տեսէք ինչ պատուական դինի է. Մալակային ընտիր տեսակը :

— Ի՞նչ կըսէք, Տիկին, չէ՞մ խմէր մի. կերդնում որ այս տաները որդ գաւաթն է որ խմեցի, ըսաւ Զարեհ գաւաթ մը արարայէ յետոյ :

Տիկին Մաքրիկի Մալակայի դինի ըսածը բնիկ Տաճկաստանի դինի էր, քոան տարուան, այնչափ զօրաւոր որ վառօթի պէտք Զարեհի գլուխը զարկեր էր . այստե ամենայնիւ ասի առանց յուշարութիւն ընելու մի զմիոյ կնի ամբողջ գաւաթներ կարարէ : Գրեթէ ա՛լ ինքզինքը չզդալու վիճակին հասած էր Զարեհ, երբ Մաքրիկ,

— Աղաչեմ, կըսէ, գաւաթ մ՞ ալ խմ կենացս :

Կարելի չէ, դինի մերժել այսպիսի պաշտելի արարածի մը կենաց, թէպէտ Զարեհ մերժել ուզէր ալ, կարողութիւն չունէր խօսելու : Ս,յս գաւաթն ալ խմելէն չի վեր հաղիւ քանի մը վայրկեան անցիր էր, երբ .

— Ո՛հ, ըրաւ Մաքրիկ, ի՛նչ անքաղաքախարութիւն . քիչ մնաց պիտի մտնայի ձեր կենաց դինի առաջարկել : . . . Եթէ դուք չխմէք, ես մինակ կխմեմ :

— Ձէ՛, չըլար գօշեց Զարեհ ծանրացած յետոյ . մի պէտք է մէկտեղ խմենք :

Պատուական կերպով գինովցաւ Չարեհ , գինովցալ բառին բոլոր զօրութիւնովը . և սեղանատունէն ելնելով առջի գտնուած սենեակն երթալու համար մեծ ջանք ընել հարկ եղաւ որ հուսաարակչութիւնը չկորուսանէ : Անտի Չարեհ ծխախոտի տուփը կհանէ զլանիկ շինելու համար , շատ կաշխատի ու կերպով մը չկրնար բոլորել :

— Աեցիք , Պարոն Չարեհ , կըսէ Մաքրիկ , պատրաստ զլանի բերել տամ ձեզի . յատկապէս ձեզի համար առած եմ . Հաւանայի զլանիկներ : . . .

— Եստ բարեսիրտ էք , Տիկին , յանհունա երախտապարս կը . . . նէք . . . զիս , կըսէ Չարեհ կտրուկ հնչմունքով և աչքերը կէս դոյ :

Հաւանայի զլանիկ մը կբերէ սպասուհին . մեծ բան մ' էր և առ նուազն հինգ տիրհեմ ծանրութիւն ունենալու էր : Չարեհ քանի որ կծխէր զայն , աչքերը աւելի կծանրանային . զլանիկը հատաւ , Չարեհ ինքզինքէն անզգայ մնաց նստած գռնէքէն վրայ : Չարեհին խմած գինին արիւնի սոգիով խառն էր և ծխած զլանիկին մէջ արիւնն սովորութիւն չունեցող մը թքմընեցնելու չափ արիւնն կար : . .

Հետեւեալ առաւօտ արշալոյսին Մաքրիկին սպասաւորը նամակ մը տարաւ Սքրահամ Սղային տունը . այս նամակին մէջ ներփակեալ հինգ հատ վարդապարակէն կային երկերկու հարիւր լիբանոց , Չարեհին կնիքով կնքուած , այն կնիքով զոր ժամացոյցին ոսկի շղթային վրայ կրելու սովորութիւն ունէր : . .

Չարեհ երբ աչքը բացաւ առաւօտուն ժամ երեքն անցած էր . ինքզինքը անկողնոյ մէջ գտաւ . առջի երեկոյն եղածը բոլորովին մոռցեր էր :

— Ա՛ր եմ , կըսէ ինքիբեւ . հա . . . իրաւ ես երէկի երեկոյն Տիկին Մաքրիկի տունը հրաւիրեալ էի . . . մէկ տեղ կերակուր կերայ : Սմենեւին չեմ յիշեր այս սենեակը գալ . . . բայց գիշերը մինա՞յ էի ես . այս մինակ էի .

զարմանալի բան . և սակայն ինքն հրաւիրեց զիս : Ա՛հ ժամ չորսը կերթայ . ու ես գեռ-քուն ունիմ . ի՞նչ ծանրութիւն մը կայ վրաս . կարծեա թէ երազ տեսնելու վրայ եմ :

Եւ Չարեհ այս վիճակը երազ չըլլալը ապահովելու համար ձեռքն կերկարէ և անկողնոյն մօտ գրուած սեղանին վրայէն զանգակը կառնէ ու կզարնէ . ուշագրութեամբ կնայի որ ներս մտնողը Մաքրիկին սպասուհին է , կհամոզուի որ չերազէր , սուրճ ապսպրելէ յետոյ ,

— Ո՞ր է Տիկինը , կհարցնէ յայտնի սրամտութեամբ :

— Տիկինն այս առաւօտ մութին ելաւ և կառք բերել տալով գնաց , Պարոն :

— Գիտե՞ս ուր երթալը :

— Ոչ Պարոն . երէկ իւր մէկ ազդականը եկեր է Եւրոպայէն , գուշէ զանի տեսնել գնաց :

— Ո՞ւր :

— Բերա :

— Ես՛տ աղէկ . հասկցայ :

Չարեհ սպասուհին ճամբելէ յետոյ կսկսի մտածել ինքիւրեն :

— Եստ բան . ինձի տուն հրաւիրել ու քովս չգալէ զատ առաւօտուն մութին ձգել երթալ : Թէ որ Բերա երթալիք ունէր ինձի ինչու՞ չըսաւ : Հիմա հասկցայ որ այս կինը զիս կծաղրէ . վաղը կամ միւս օր դամ , անդամ մ՛ալ տեսնեմ զինքը . ես ալ զինքը ծաղրեմ . քանի ստակի բան ըլլալը հասկցունեմ . մէյ մ՛ալ երեսս որ տեսնէ , երկուք ըլլայ . ա՛լ հերիք խաղալիկ եղայ ձեռքը : . . . Ա՛հ , այս որչափ կյօրանջեմ . կզակներս պիտի վրթին . այս ի՞նչ բան է . թմբութիւն , գլխու ծանրութիւն , ոսկերքս կը ցաւին . վրաս երբէք այս տեսակ անհանգստութիւն եկած չունէր :

Կհագուի Չարեհ և երթալու ատեն սպասուհին կըսէ , բառերը շեշտելով :

— Ըսէ՛ Տիկինն , որ անգամ մ'ալ պիտի դամ իրեն
երկու խօսք ըսելու :

Ը

Արքահամ Ս.դա Մաքրիկի հետ ունեցած տեսակցու-
թենէն ի վեր , մեծ փութով յառաջ կտանէր հարսան-
եաց պատրաստութիւնը : Հակառակ իւր բնաճիր կծծիու-
թեան բնաւ ստակի չխնայել սկսաւ : Քսակին բերանը բա-
ցեր էր , ինչպէս կըսեն աւամկօրէն : Այս բանը շատ զար-
մացուց զՏիկին Հեղինէ իւր կինը որ ինքիրեն մտածելով ,

— Այս ինչ է , կըսէր , փեսացուն Չամբրճա տանելու
համար տունը կհրատիրէ , ու խեղճ մարդը հողերուն փո-
շիններուն մէջ թաթխեցնելով այնչափ ճամբայ կըբալեցնէ ,
որ խնայողութիւն ըլլայ , կառքի համար ոսկի մը ծախք չը-
նէ այս կծծութեան պատիժը երեկոյնի գտաւ ու թըջեցաւ
խխուժ եղաւ , անձրևը մինչև ոսկորներն անցաւ . հապա
Պօտոս Ս.դա՛յն . խեղճ մարդն անձրևէն յետոյ ընչացքն ա-
ւելի ճերմակցաւ կարծես : Այն ի՞նչ խնայողութիւն , այս
ի՞նչ ծախք : Աղջիկը սիրելուն համար է ըսեմ , եթէ սիրէր
այն անպիտանին չէր ասր . ը՛հ , կրողը տանի , պառաւ կըն-
կան երեսին կնամանի քիթը բերանը : Այնչափ աղաչեցի
որ միտքը փոխեմ , չկրցայ : Պօտոս աղա հարուստ է ե-
ղեր . իբր թէ աղջիկս անոր հարստութեան հետ պիտի պը-
սակի : Տասնուվեց տարեկան զգայուն ու սիրող սիրտ կրող
աղջկան մը հարստութիւն ի՞նչ է հասկցու՛ւր , թէ որ կընաս :

Տ . Հեղինէ որ ամուսնոյն մէկէն չուայնալուն պատ-
ճառը չէր զխտեր , այս խորհրդածութիւնները կընէր ին-
քիրեն մանաւանդ կնքահօր խնդրոյն վրայ : Արքահամ Ա-

դա աղջիկը նշանելէն ի վեր կնքահայր ընտւած էր ու
չէր գտած : Այս հոգը Պօտոս աղային կպատկանէր ար-
դարեւ սակայն այս մտրդը , թուրքաց ըսածին պէս մօ-
րուքն ալօրիքը ճերմակցուցած ըլլալուն մի ըսեմ թէ Ա-
ղեքսանդրիայէն նոր եկած ըլլալով Պօլսոյ մէջ Աբրահա-
մէն զատ մէկը չճանչելուն մի ըսեմ , կնքահայր գտնալու
մասին դժուարութիւն էր յայտնէր օր մը աներցուին . ասի
ալ ըսած էր .

— Պօտոս Աղա , այդ գործ դու ինձի հաւաք արե իմ
բարեկամ շատ . գլխուս մտգին չափ :

Այս չափազանցօրէն նմանութիւնը , որ սովորական է,
չատ յարմար տեղ գործածեց այն օրը Հաճի Աբրահամ,
վասն զի պարագայներն նոյն բանն ստուգելին : Արդէն
ինչպէս որ կարծեմ ըսի , Աբրահամ Աղային գլուխը քառ-
սուն և հինգ թելէն աւելի մաղ չիկար . հարսանիքին հո-
գերը , ինչպէս նաև արտաքոյ կարգի ծախքեր պատահե-
լիքը գուշակելով ունեցած մտմտուքը , միշտ հաղար սկ-
ւոյ ինգիլիէն յառաջ , անդուժ կոտարած մը ձգելին Հա-
ճի Աբրահամին մաղերուն մէջ և հագիւ . քանի մը թել բան
մնացեր էին երբ կրակին դիշեր պատահմամբ գլուխն ան-
ցած գտակին մէջ մնացին անոնք ալ . և այն օրը երբ Աբ-
րահամ կունտ գլուխ սկսաւ պտտիլ , ըսել է որ բարեկամ-
ներն ալ հատան : Փորձուած բան է որ մարդս ընդհան-
րապէս այնչափ ատեն բարեկամներ կունենայ որչափ որ
անոնցմէ նիւթական ծառայութիւն չակնկալէր : Մեր Աբ-
րահամ Աղայն թեպէտ շատ ծանօթներ ուներ , բայց մէ-
կուն սուրճ մը խմցուցած չըլլալուն ամենն ալ իրմէ փախ-
չիլ կսկսին երբ կնքահայր ընտուելը կիմանան : Մեր աղ-
գին մէջ քիչէի աւանդութիւն մ'ալ կայ որ կնքահայրը պի-
տի առնէ , (չլիտեմ ինչու համար) մամերը , հարսին քօղ-
քը և մոյկը , հարսին երեստես պիտի տայ , պսակող
քահանային քերէքիէ ջուէ պիտի տայ , պիտի տայ վերջա-

պէս : . . . Եւ որ առաւելն է , եթէ հարսը զաւակ ծնանի , կնուների հանդերձ պիտի շտկէ , կնքահօր դժբաղդութենէն փեռայն ալ քիչ մը աշխատասէր փրթա՞ւ մի , այն ատեն վա՛յ կնքահօր քսակին գլխուն : Այնպիսի նեղ ժամանակի մէջ ս՞՛վ կրնար այսչափ դրամ աչքէ հանել , Հաճի Աբրահամ Աղայի համար մանաւանդ , որոյ երեսէն ամեն ծանօթները վրասէ զատ բան տեսած չունէին : Աբրահամ գէմն ելնողին կառաջարկէ կնքահայրութիւնը , ամենքն ալ , մէյմէկ պատճառանօք կմերժեն : Հարսանիքին օրը կ՛ծտենայ . ի՞նչ ընէ . եթէ Պատարին ըսէ որ կնքահայր չէ գտած գլխուն ճարը տեսնէ , այս ալ փոքրօքութիւն է . աղջիկան հայրերը փեսացուներնուն մեծ բան մ՛ երեւալ կուզեն : Աբրահամ հարսնիքէն քանի մը օր յառաջ հազար ոսկիին ձայնն առնելուն պէս մարին մէջ իմաստութեան ճառագայթ մը ծագելով գիւրաւ կնքահայր ձեռք անցունելու նոր գիւտ մը կընէ : Իւր երկրէն դրագիր մ՛ունէր Արթին անուն որ տասը տարիէ ի վեր կաշխատէր քովը քառսուն և հինգ զրշ . ամսականով և հաշուատի ու կերակուրի ծախքը Աղային վրայ ըլլալով : Հարսնիքին երկու օր մնացած առաւօտին , Աղայն կկանչէ զԱրթին ու կըսէ . չմոռնամ ըսելու որ այս խօսակցութեան Տ . Հեղինէ ալ ներկայ էր .

— Արթին , քեզի մեծ աղէկութիւն մի քի անեմ վասն զի քու ծառայութենէդ շատ գոհ եմ :

— Աստուած կեանք տայ , Աղա՛ , բարեսիրտ ըլլալդ գիտնալովս է որ տառը տարիէ ի վեր բանած ամսականներէս քանի մը զուրուշ թերհաշիւ կուզեմ չես տար . ես ալ ձայն չեմ հաներ . . . ուրիշ բան ընել չկրնալով : Բանած ամսականներուս առկո՞ս ալ տի տաս :

— Չհասկցար , կըսէ Աղայն քիթը բերանը թթուեցընելով , ձեռքի ծխափայտը մէկ երկու անգամ ուժով քաշելէ , և քիթէն բերնէն ծուխի ամպ մը հանելէ յետոյ .

— Աղջկանս կնքահայր քի անեմ քեզ , կըսէ :

— Ոտքդ պագենեմ Հաճի Ազա , այդ աղեկութիւն
 ինձի մի աներ , կպատասխանէ խեղճ Սըթին պազատա-
 զին դէմքով . կէսն անոթի կէտը կուշտ ապրելով , ճմեռ-
 ները փառնալով հազիւ հինգ վեց հազար զուրուշ շահ
 ունեցայ տասը տարին . թէ որ ձեռքս հասնի . այն ալ ել-
 նեմ կնքահայրութեան ծախք անեմ , յետոյ ես ի՞նչ ա-
 պուր խառնեմ :

— Ծ'ս շան տղայ . կդոչէ Սըրահամ կրակ կտրած ,
 մեղայ Տէր , մեղայ Տէր , մեղայ Տէր . մազ մնաց քարը
 բերնէս րէ հանել տայիր . րէնէ խօսքս չհասկցած րէ՞ տըռ
 տըռ կանես . հասցար մի էֆէնդիէ տօյլէն , երբ Ազադ քեզի
 ասանկ բան մի կը դրոցայ , հարկաւ բան մի գիտե՞ս :

— Սըրահամ Ազա այս խօսքերն ըրած ատեն գլուխը
 վեր կբռնէ , և աչքին ծայրովը անդամ մը Տ . Հեղինէին
 կնայի ըսել ուզելով « կը տեսնե՞ս ի՞նչպէս ծանրու-
 թեամբ կվարուիմ ստորակարգեալներուս հետ : » Եւ
 խօսքը շարունակելով ,

— Այդ ամեն ծախքերն ես րէ անեմ , մէկ վրադ դը-
 լուխդ րէ նորեմ , երկուք . մօտերս ալ ամսականներդ րէ
 տամ և երկիր դրկեմ վքեզ , երեք :

Սըթինին երեւը ուրախութեամբ փայլիլ կսկօի .

— Այս մարդուն մեռները մօտեցած ըլլալու է , կըսէ
 ինքիրեն . և առջի խիտտ խօսուածքին վրայ զղջալով ,

— Ծառայ իմ , Ազա , կըսէ . գիտեմ ձերին ի՞նչ բա-
 րեսիրտ ըլլալը . սակայն իմ ըսածս այն չէր :

— Ասկէ յետոյ ծառայ ե՞մ ալ չի րէ ասես . ամենուն ա-
 նանկ րէ գիտցունեմ որ դու իմ ընկերս ես դործիս մէջ .
 մանաւանդ Պօտոս Ազային առջիւ Ազա րէ ասեմ քեզի ,
 այս չորս :

— Ատուած կեանք տայ , Ազա , արժանի չէի ես
 այդչափ պատիւի ,

Իսկոյն հրաման կընէ Սըրահամ որ հին սպիտակ հին ք...

Բօլժը և բաճկոնը բերեն , Արթին որ դեռ նոր ազա ձեռնադրուեցաւ , քիչ մը մանրուկ էր , ուստի այս լաթերը վրային շատ լայն եկան :

— Ի՞նչ փաստ ունի , կրտէ Աղայն . ատեն մի կհագնես լայն հանդերձը շուտ չի մաշիր . մանաւանդ որ դու նոր մըտար երսուն տարին . իմ պապս որ բժշկականութենէ աղէկ կհասկնար , կրտէր որ մարդիկ կաճին մինչև երեսուն և հինգ տարի . ասել է որ այս լաթերը հինգ տարիէն վրայիդ շատ աղէկ կուգան :

Աղային հին պօթիներն ալ բերին , որոյ խոշոր բլալը այնչափ հոգ չէր , որչափ տակի հնութիւնը , Աղայն տասը դրշ . չուզէր տալ որ նորոգել տայ . խեղճ Արթին ստիպուեցաւ շաբաթի մը ցերեկի կերակուրի ծախքը դո՛հել , և նորոգել տալ կօշիկը , հարկ չէ ըսել որ շաբաթ մը ծամաթահութիւն ըրաւ որպէս զի հաշիւին հաւասարակչութիւնը չխանգարի :

Աբրահամ Աղա որ տասը տարուան կեանք իւր դործին մէջ անցնող Արթինին տասը դրշ . կօշիկի նորոգութեան ծախք զրկած էր , կնքահայրութեան ծախքերն ամենայն շուայլութեամբ կկատարէ . միայն քսան ոսկի կուտայ մոմերու , որ Յւրոպայէն եկած էին , երգիներանգ ժապաւեններով ծաղիկներով զարդարուած . ոսկի թել , ընտիր կերպասէ քողք . կնքահայրը երես տես տարու մանեակ մը երեք հարիւր լիրա արժողութեամբ : Հաշիւ ըրէ անգամ մ'ընթերցող , տես որչափ ծախք կընեմք հարսանեաց համար . անք Աբրահամ Աղա բարեկամին վրայ չէ խօսքս . նա ունէր , կընէր . ցաւալին սա է որ չունեցողներն ալ կուզեն ընել : Ընդհանրապէս մեր ազգին մէջ կատարուած հարսնիքներն ամիսն առ նուազն երկու հարիւր դրշ . անշարժ եկամուտ բերող դումարի ծախքով կկատարուին . լաւ չըլլա՞ր որ այս դումարը փոխանակ քանու չորս ժամու մէջ վատնելու , նորակ սղմ գերդաստանին դիւրակեցութեան ծա-

ուայեցնեն . քսանու չորս ժամ շքեղ երեւելոյ պարծանքնին զանց ընելով , քսանուչորս և աւելի տարիներ հանգիստ և անխռով կեանք վարեն , չա՞րժէր :

Աղաւնի որոյ համար այսչափ ծախք կրնէր հայրը , այն թանկագին բաներուն վրայ գոնէ անդամ մը ջնայեցաւ . հայրը կախարար եղած ծախքերուն և փեսացուն համար խիստ շատ կգտնէր : Սակայն ոչ միայն Աղաւնի , այլ Տ . Հեղինէ անդամ համարձակութիւն չունէր որևէ գիտողութիւն ընելու :

— Անիկ մարդիկ միայն տան սպասաւորութեաննայելու են , ուրիշ բանի խառնուելու չեն :

Այս եղած էր Հաճի Աբրահամին պատասխանը ամեն անգամ որ կինը ամենափոքր բացատրութիւն պահանջէր իրմէ :

Թ.

Առաջին պսակին կիւրակէ օրը ժամ իննին ատենները Պօտոս Աղա Աբրահամ Աղային աուն փեսայ կուգայ . հագուստն ու զարդերը ճիշդ մայիսի առաջին աւուրն են , շատ փոքր տարբերութեամբ . միայն ընչացքին ճերմակ թերերը անյայտ եղեր էին : Դրացիք և շատ ծանօթներ հրաւիրեալ էին հարսանեաց : Տիկնայք կքողքեն կզարդարեն զհարսն , ու սենեակի մ' անկիւնը կկանգնեցնեն . այրերն ալ զփեսայն շրջապատելով կնստին :

— Աղջիկանս տրտմութիւնը կերպով մը չկրցանք փա-

րատել, կըսէր Տ. Հեղինէ տանտիկնոջ մը որ Աղաւնիին գաղանեացը տեղեակ չէր :

— Տիկին, կըսէ այն տանտիկինը, որերնի՞ս անանկ չէինք, անցուկը մոռցուկ կըլլայ հոգիս. առջի օրերը քիչ մը սիրա չունենար մարդ. այն ալ ուրախութեան մեծութենէն է. բայց քանի մը օր ետքը ամեն բան կանցնի կերթայ : . . . Ձե՛ս յիշեր Տիկին, ամենուս գլխէն անցած է այս բանը : Մանաւանդ որ, հոգիս դուք ալ հինաուուրց սովորութիւնով վարուեցաք. պէտք էր որ փեսադ գար երթար, մինչև որ աղջկանդ սիրտը վրան տաքնար : . . . Ի՞նչ գիտնամ, հիմա կուաններն ասանկ են . . . հոգ մի ընէր Տիկին քանի մը օր մէկտեղ նստին երեսն, այն սէր կկապէ վրան :

Տ. Հեղինէի աչքերը թրջեր էին. Մարիամ որ այս խօսքերն եղած ատեն տեսնեալն էր, գուրս ելաւ ըսելով ինքիւրեն .

— Շիտակը Աղաւնիին տեղ ես ըլլամ, սայլ մը փայտ ալ վառեն, գարձեալ սիրտս չտաքնար անանկ իւրֆած մարդու մը վրայ, մանաւանդ երբ Արշակը սիրեմ :

Տանը մէջ իւրաքանչիւր որ իւր քմացը համեմատ կըրարձանար. վասն զի հարսանեաց տունը սովորաբար Յսպերական պարտիզի կնմանի ուր քանի մը ժամու համար հանդիսականք կմոռնան իրենց ամեն միշտերն ու սիրաերնին միայն ուրախութեան զգացումներու կբանան. Աբրահամ Աղա գո՛հ էր անանկ հարուստ փեսայի մը տիրանալուն որ միանգամայն Ակնցի ըլլալով իւր աղջիկանը համար ունեցած բաղձանացը լրումն կհամարէր : Պօտոս Աղա գո՛հ էր այնպիսի կողակից մը ստանալուն, որ թէպէտ ի Պօլիս մեծցած, սակայն այնչափ ամօթխած որ մինչև այն օրը անգամ մը երեսն անգամ չէր նայած. սպասուհին Մարիամ, զուարթաբարոյ աղջիկ, ուրախութենէն կցատկըռաէր և անհամբեր տեսնել կուզեր որ այս տարօրինակ հարսնիքին վախճանն ո՛ւր պիտի երթայ : Միայն Տ. Հեղի-

Պէ քիչ մը տրտում էր . զանի ալ դժբաղի տանտիկիները կմխիթարէին . իսկ Աղանի Այպիոնի անտարբերութեամբը կարծել կուտար որ այն առուր հանգէսն իրեն համար չէ :

Գիշերի ժամ հինգին կերակուրի կիջնեն : Քառասուն հոգի նստելու լայն արձակ սեղան մը պատրաստ էր սրահին մէջ . առաջին կարգի շքեղութեամբ զարդարուած էր այս սեղանը , Պօրտոյի գինի , Ռուսիոյ խաճար . Հոլանտայի տեսակ տեսակ թանկագին պանիրներ , կեսարիոյ ապուխտ բան մը պակաս չէր , ձենական ընտիր սկաւառակներ , դանակ և պատառաքաղ արծաթեղէն , մէկ խօսքով ճոխութիւնը կմրցեր շքեղութեան հետ : Տանուտեարք , հարս և փեսայ , կնքահայրն իւր լայն զգեստները հագած կամ լաւ ևս է ըսել , իւր լայն զգեստներովը բեռնաւորուած և հրաւիրեալք սեղան կըսլմին . սպասաւոր մը շէքիքի ապուր կըսփնէ . հանդիսականք դրայնին ձեռքերնին կառնեն և կսկսին իրարու երես նայիլ . հաց չիկար սեղանը . Տ . Հեղինէին աչքին բան չէր երեւար . սիրտ չունէր՝ Աղանի կերակուր չէր ուտեր . Արրահամ Աղա ապուրը առանց հացի խմելու սովորութիւն ունէր . և սպասաւորք զարմանալի մտազբաղութեամբ հացին պակասութիւնը չէին նշմարեր : Հանդիսականք առանց հացի ապուրը խմելով հանդերձ կսկսին իրարու հետ մրմնջալ :

— Հաց չիկայ . շատ բան . առանց հացի կերակուր ուտել :

— Թերևս նորաձևութիւն մ'է որ այսօր ելաւ . Փարիզէն եկած նորաձևութեան լրացրին վերջին թիւը կարգանք վաղը :

— Խնայողութեան համար է ըսեմ , այսչափ ծախք ընողը հաց մ'ալ կառնէ :

— Չես գիտեր ինչ կծծի քե . . . է , գոնէ հացէն շատ ըսած ըլլալու է :

— Ես խորհրդածութիւնը կընէին հանդիսականք իրա-

րու հետ, սակայն հաց ուզել համարձակող չիկար : Խնճոյքին նախագահող եկեղեցականաց երիցագոյնը խօսք բանալով .

— Այլիչէ՞ք, բարեկամք, կըսէ, Ս. գրոց մէջ խօսք մը կայ . . . ոչ միայն հացիւ կեցցէ մարդ : . . .

— Հա՛, Հայրսուրբ կընէ Ս.բրահամ Աղա աչքերուն բիբերը ծաւալելով և զանոնք արտորնօք սեղանին վրայ պլտարոցունելով, ազէկ նշմարեցի, հաց չիկայ : Տիկին, կըսէ կնոջը նայելով, «բնէ հրաման անէիք : . . .

Տ. Հեղինէ Մարիամին կնայի. Մարիամ մատակարարին կնայի, մատակարարը տակառապետին կնայի, ասի ալ ինքզինքը սրահէն դուրս կնետէ պռտալով .

— Վազէ՛ խաչեր, հաց չեն աւեր, շուտ հաց առ, տասը հօխա, ճերմակ . . . շուտ : . .

Խոհարար խաչերն ալ վասպուրական լուտանքներ արձակելով, ու տակառապետն ալ, Աղան ալ, հարսնիքն ալ կռողին զրկելով բոկոտն ինքզինքը դուռնէն դուրս կընետէ :

Ասանկ մեծ երեկոյ մը հացին մոռցուիլը թերեւս արտաքոյ կարգի պատահմունք երեւի ընթերցողին . շատ պարզ էր ասոր պատճառը . բարի հացավաճառ մը ամեն երեկոյ որոշեալ ժամուն հաց կձգէր Աբրահամ Աղային տունը : Աբրահամ կամեցեր էր կնքահայրութեան պատիւն իրեն շնորհէ . որովհետև մէկ երկրէ և տղայութեան բարեկամ էին . հացավաճառը քաղաքավարութեամբ մերժեր էր այս պատիւը . սակայն Հաճի Աբրահամ մինչև հարսնիքէն երկու օր յառաջ կնքահայր չգտնելով, և գլուխը շատ նեղը մնալով ըսած էր իրեն որ աղջիկանը խաչը իրեն բռնել պիտի տայ ուզէ չուզէ : Իլրոյ իմացեր էր որ Աբրահամ Աղա մինչև հարսնիքին կիւրակէ օրը կնքահայր գտած չըլլայ . ուստի բարի մարդը խոհեմութիւն չէր համարած երեւալ ու հաց բերելը զանց ըրաւ նոյն երեկոյին : Հացն ալ որչափ

պիտանի, այնչափ պարզ բան ըլլալով, անոր անպտորաստ ըլլալը սպասաւորք չէին նշմարած :

Սակայն խաչեր դնաց ու չղարձաւ. հարսնեւորները ապու-
րը կխմեն կլմնայ. կուշանայ հացը. ժամի չափ սպասելէ յետոյ
կարճահասակ պարոն մը որոյ ը գիրն — հնչելէն պիտի յիշէ
անշուշտ ընթերցողը որ զանի Չամբճա տեսաւ, նստած
աթոռին վրայ կեխէ կկանդնի՝ անձեռօցը ճիտը կապած և՛

— Տեսաւք իմ, և մատամք կրտէ, կառծեմ թէ այն
ամեն բան որ բազադուեալ է յայլուէ, հացին դեռ դատա-
նէն համառելի է. զու օռինակ, խմուռեղէնք ազդի ազգի.
զբախլավայն ասեմ և զպօղաչայն, զլօգմա պէօռէին ա-
սեմ և զպէօռէին առմառենի, զթաթառ պէօռէին ասեմ
և զպանուալից պէօռէին. զէքմէք խատաիֆին ասեմ և ըզ-
թեին վեռլապէս միով բանիւ ասելով, ամենայն ինչ որ յա-
լիւուէ պատուաստի, մեռձաւոր ազգակա՞ն է հացի : Առդ-
քանի որ այս այսպէս է ըստ իմ տկառ կառծեաց, կառա-
չարկեմ որ փոխանակ հացի ասու մեռձաւուռ ազգական-
ները բեռուին. քանզի տառակոյս չունիմ որ այնպիսի մե-
ծաշուք եռեկոյ մը Հաճի Աբրահամ Աղա շնուհ ընելով,
խմուռեղէն ալ շինել տուած է :

— Աեցցէ պարոն Մարգար, կազաղակէ ամբողջ խոււմ-
բը, շատ ազէկ ըրիք այդ գիւտը :

— Ի՞նչ խելացի տղայ, կրտէ հինաւուրց մարդ մը քո-
վինին. ինչ ալ աղւոր կոյ խօսեցաւ :

— Արփնական է, կրտէ միւսը :

— Հա՛ կոռ կարդացող է հա՞ :

— Ենորհակալ եմ, Պ. Մարգար, կրտէ Աբրահամ
Աղա, որ այդ գիւտ արիք : Ամեն մարդ գիտենայ որ խը-
մորեղէնները ալիւրէ կշինուին, բայց եֆէնտիֆ «եօյէյե՛»,
մարդու միտքէ չէր անցներ որ անոնք հացի տեղ կրնան
դործած ուիլ :

Այս շնորհակալութենէն յետոյ Հաճի Աբրահամ պէտք

եղած հրամանները կուտայ և սպասաւոր մեծ ամանով բռնակը կըբերէ հացի տեղ կըբաժնէ : Աորամարգի խորտիկ կուգայ . Պօրտօյի շիշերն հետզհետէ կպարպեն . հարսին , վեսային և Աբրահամ Աղային կենացը բաժակներ կշառաչեն . Աբրահամ Աղա գինի մ'ալ Պ . Մարգարի կենացը կառաջարկէ որ հացին սրակասը լեցնելու համար այնչափ հանճարեղ գիւտ մ'էր ըրեր : Պաւաթները լեցուելուն պէս Պ . Մարգար կինդրէ որ չխմեն մինչև որ ինքը կացրդական ատենաբանութիւն մը խօսի զոր յանպատրաստից պիտի ընէր . վարդապետէն հրաման կառնէ և գլուխը բանայլ , նստած աթուին վրայ ելնել կանդներլէ և ձեռքի դաւաթը վեր վերցնելէ յետոյ , այսպէս կսկսի .

— Տեսա՞ք և Մատամք , հառկաւ կյիշէք ինչ որ ըսաւ քիչ մը յառաջ , մեռ բառեչնոռհ հայռ սուռքը . ոչ միայն հացիւ կեցցէ մառդ . ճշմարտութիւն մը ոռոյ փորձը ահաւասիկ ըռինք . ըստ իմ տկառ կառծեսաց ըսել կըլլայ որ մառդոյս այդ փորը կշտացնող միայն հաց չէ , այլ նաև

— Մե՞նք , . . կպռայ մէկը սրահին դռնէն ներս մըռնելով . հանդիտականաց աչքը նորեկին վրայ դառնալը և ահագին քրքիչով սկաւառակներուն որոտալը մէկ կըլըլայ : Նոր եկողը Սաչեր աղբար էր . երկու թեւերը խաչաձև բացած և ուսերուն ծայրէն մինչև ըթամատերուն ծայրը «ԲԷ» անցուցած . վիզէն մինչև աչքերն ալ ծածկուեր էր «ԲԷ»-ով , վասն զի թեւերը չկրնալով սղմեցրնել քսան հատ մ'ալ վիզն էր անցուցեր , բնականաբար Պ . Մարգարին ատենաբանութիւնը կրնդ հատի , ինքն ալ հացին ազդականները հաշուած միջոցին «ԲԷ» մօռցած ըլլալուն ամօթահար , աթուին վրայ կիծկտի կնոտի : Սակայն Աբրահամ Աղա չէր խնդար :

— Մո շան տղայ , կըսէ կրակ կարած , «ԲԷ» քեզի ո՞վ ատայ որ «ԲԷ» առնես :

Խաչեր որ անշուշտ այս ծառայութեան փոխարէն չընորհակալութիւն կոպասէր, կպաղի կմնայ . և առանց բեռ ուր վար գնելու ,

— Ի՞նչ անեմ , Աղա , կըսէ խեղճուկ եղանակաւ մը , Քէկ փուռ գնացի Խոյ չիկայ . միւս փուռ գնացի Խոյ չիկայ . իջայ մինչև Կողմնահողմ . հոնի Քէկ փուռ կար խուռոմներ սիմիթ կհանէին , դպիս շաբթու իրանց պահք քլլալուն , ես ալ սիմիթ առի . իմ հոգի բերան եկաւ . ասի ալ հաց ասել չէ՞ , Աղա՛ , ո՞րէ կերորոն :

Այս խօսքերուն վրայ Աբրահամ աւելի կը արկանայերբ ,

— Ֆարաշ , կըսէ հանդիսականներէն մին , ազէկ գրտեր է . գէշ չէ ըրեր , հասցար մի Ֆարաշ , շատ յողներ է :

Այս համոզիչ խօսքերուն վրայ Աբրահամին սիրտը կիջնէ , սակայն հանդիսականք Պորտոյի շողիներով բըռնկած կաւեյցներն ժխտըր ,

— Շատ աղէկ է ըրեր . կեցցէ՛ Խաչեր աղբար , պարոն Մարգարէն շատ աւելի խելացի . հարկաւ սիմիթ պանաւից պեռեկէն շատ աւելի մտիկ ազգական է հացին . կրնամք ըսել որ եղբայրն է , Քինի մ'ալ Խաչեր աղբոր կենաց խմելու եմք :

— Այո՛ , այո՛ , կըսեն ամենքը մէկ բերան . դաւաթ մ'ալ Խաչերին մատուցին . խեղճ մարդուն սիրտը կիջնէ և գոհ սրտով խոհակերոցը կգառնայ գաւաթը պարպելէն ետև :

Կարգին մտցայ յիջելու որ այս ամեն աղմուկներու մէջ Պոտոս Աղա Խաչարարայել լոյսովեմաք լուռ կեցաւ , և միայն մէկ անգամ կէս ժպիտով շքեղացուց այս հանգէսը . Թագաւորավայել ըսի , վասն զի ըստ վաղեմի աւանդութեան Հայոց նորապսակ փեսայն Թագաւոր և և Հարսը Թագուհի կանուանի :

Վերջապէս ճաշը կաւարտի . գուրճերը կը բերուին , և պահ մը հանդիստ ընելէ յետոյ պսակի արարողութիւնը

կսկսի, Պսակիչ քահանայն, Աղաւնիին ձեռքը Պօտոսին կուտայ, աղջիկը ձեռքը կքաշէ. Պօտոս այս բանը Ռուհայն ամսթխածութեանը տալով կստիպուի քողքին մէկ կողմը բռնել ձեռքը բռնելու տեղ : Անքահայր Աղան որոյ լայնարձակ գգեատները արդէն երեսունըհինգ տանթիկրատի աստիճան ջերմութիւն արտադրեր էին վրան խաչը բռնելու դժուարութենէն ալ սաստիկ հողնած քրքրտինքը վտակի պէս կվազէր երեսէն . վասն զի Աղաւնի միշտ գլուխը կբաժնէր Ռուհայնի գլուխէն և Արթին Աղաստիպուած էր պղինձ խաչը Քաղուհւոյն գլխուն վրայ կխելու, որպէս զի գլուխներն իրարու կցէ, և չէր կրնար : Աւանդական սովորութիւն կայ որ պօսկն աւարտեղէն քիչ մը յառաջ պսակիչ քահանայն գինի կբաժնէ . այս անգամ գաւաթին մէջ երկու հարիւր տրամ գինի կար հանդիսականաց բազմութեան համեմատ . բաժակը, ինչպէս որ օրէնք է, նախ թագաւորին կմատուցուի ասի իւր նոր զգեցած գերագոյն իշխանութենէն այլ յայլմէ եղած, գաւաթին մինչև մրուրը կծծէ :

— Աչքդ խաղայ, կրտէ պսակիչ քահանայն որ զուարճախօս մարդ մ'էր . գրամագլուխս հատուցիր :

Կրկին լեցնել կուտան դաւաթը : Հարսներուները պարելու փափաք կյայտենն թագաւորն ու թագուհին պարագլուխ ընելով որպէս զի հանդէսին շքեղութիւնը կատարեալ ըլլայ . առանց պարի հարսանիք չըլլար արդարև : Կառաջարկուի Պօտոս Աղային որ հարսը հրաւիրէ իսկ ասի ամսթխածութենէն մի ըսեմ, պարկեշտութենէն մի, տեղէն չերերաց . հարսին քոյրերը սուս մը կշինեն,

— Արան մարելիք եկաւ, հանգիստ ընելու պէտք ունի, կրանն :

Աւրիչ խումբ մը այր ու կին հարսներուներ կերնեն պարելու պարագլուխ ընտրելով զՊօտոս Աղա, որ ուրախութենէն, ինչպէս նաև սեղանին վրայ խմած գինիէն, մանա-

և անդ օրհնած գինիէն ողի առած և Արթին Աղա կնքահայ-
 ըը իրեն երկրորդ բրած , կանցնի պարելու ելած խումբին
 գլուխը : Պօտոս Աղա ոչ « գուք մէջէն ևս քովէն » գլտէ ,
 սչ ալ « սլար բռնելով երթանք լեռ ձոր » : Տղայութեան ա-
 տեն երկիրն ինչ որ սովորած էր նոյնը պիտի երգէր . ուստի ճեր-
 մակ ճուրջով կապոյտ թաշկինակին ծայրը կուտայ Արթին
 Աղային և կսկսի ,

Մառնուս ակը մալի է*

Այս ինչ խտար տարի է .

դաւառական երգը որոյ ամեն մէկ տողն ինք երգելէն անմի-
 ջնապէս յետոյ պարող դասը պիտի կրկնէր :

Այս երգին նախաբանն էր .

Ղերմակ ճակտիդ կարմիր ոսկի

Շարեմ նազերով նազերով :

Պօտոս Աղա պարած միջոցին երբեմն սիրաբորոքը աչերն
 Աղանիի վրայ կգարձունէր բիբերուն այնպիսի անոյշ դարձ-
 ուած մը տալով որ կարծես թէ պիտի մարի . և ամեն նա-
 յելուն թագուհիին աչքերը դոց կդտնէր . այս բանը Աղա-
 նիին ամօթխած ութեան չտուաւ . Պօտոս , այլ պարին սրաա-
 շարթ ըլլալէն անոր վրայ արտադրած սրտայոյզին :


Սակայն , ընթերցող , թեթև դատողութիւն չընեմք այս
 օրինակ պարին վրայ . արևելեան տարան է այս , այնչափ
 հին , այնչափ հին , որ Երբայեցիք այսպիսի պարով կաւան-
 դէին իրենց զաւակներուն ինչ որ հայրերնին իրենց աւանդեր
 էր իրենց ղազին անցելոյն վրայ : Հոմերոս այսպիսի պարուց
 շնորհիւ անմահացուց իւր անմահական գիւցազներգութիւն-
 ները , վասն զի հին ժամանակները գիր չըլլալով այսպիսի
 պարերու համար յօրինուած աւանդական երգերը մինչև ի-
 րեն ժամանակը հասուցին Տրովայ տասնամեայ պաւարումը .
 ո՞վ գլտէ , թերևս մեք ալ այս օրինակ պարերու կար-

*Մասնին քարը կապոյտ է :

տիմք մեր Հայկ նախահօր , Արամայ և այլոց գիւցազանց յիշատակին պահպանուելով մինչև մեզի հասնելը : Պեղեցիկ տեսարան է արդարև երբ հայր մը ամեն տարի մէկ քանի տօներու մէջ իւր նորաբողբոջ սերունդը կիմբէ նախնեացը պատմութիւնը երգ յօրինած թէ սովորեցնէ և թէ զբօսցնէ զանոնք : Հիմակու հայրերը ազատ են այս հոգէն . կրնան գրել . գուցէ մէկն առարկէ ըսելով որ ամեն հայր գիր չգիտէր . աղէկ , բայց գիր չգիտցող հօր մը աւանդական պատմութիւններն գիտնալու արժանի ինչ բան կրնայ ունենալ :

Պիշերը կ'առաջանար . հիւրերը մէկիկ մէկիկ երթալ կսկսին . գլուխները ծանրացեր էին . մնացածներն ալ կը հանդչին , և հոն ուր քանի մը ժամ յառաջ կ'սօսային կկանչէին , կ'պարէին ու կ'երգէին , խօր ըութիւն կ'ախրէ : Այսպէս է յայսարհ . ամեն բան վախճան մը պիտի ունենայ հոս , կանուխ կամ ուշ :

Հետեւեալ առաւօտ Հաճի աբրահամ իւր միակ աղջիկը հարսնացնելէն , ու արժանաւոր փեսին թագն ու պսակը համբուրելէն յետոյ ճամբայ կենէ Պրուսա երթալու համար . ինչպէս որ խոստացած էր Տ . Մաքրիկին :



Ժ

Հարսնիքին երկրորդ ու երրորդ օրերը բարեզուշակ նշաններով կանցնին Պօտոս Աղայի համար . երբեմն խօսք կուղղէ հարսին . ասի պատասխան չտալէ զատ գտնուած սենեակէն դուրս ալ կենէ . Պօտոս Աղա այս բանը ճշմարտան կուտայ . իրենց երկիրը հարսերը քառասուն օր խօսելու հրահրման չունին : Սբրահամ հարկաւ նոյն կրթութիւնը աղջկան ալ աւանդած էր : Հօրսին երեսը նայելով Պօտոս Աղա

կհառաչէ, Աղանի կյօրանջէ. նա կժպտի, հարսը կունակը կդարձունէ միով բանիւ Աղանի ամեն կարելի եղած ձևերով դժգոհութիւն կյայտնէ, իսկ Պօտոս Աղա անոր այս շարժմունքը ամօթխածութեանը կուտայ և անոր վրայ Պօստսեցի ազլիկներուն մէջ սքանչելի օրինակ մը կգտնէ դաւառաբնակ օրիորդաց :

Չորեքշաբթի գիշեր հարսը մեծ հանդիսիւ կբերեն վե սին սենեակը կյանձնեն. ընթերցողը կընայ դատել Պօտոս Աղային բերկրութիւնն ու հեշտութիւնը :

— Որկանէ, կըսէ Աղանիին մտենալով, ճան, քեզի Աղանի են անուաներ Թեմէեյի չեն անուաներ, աղանիի կը նմանիս :

Պօտոս Աղա՛ ճարտասանութիւն չէր կարդացած, սակայն մտքին բնական լուսովն այս նմանութիւնը դորժածած միջոցին ,

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, կընէ Աղանի այս ինչ գլուխցաւ սա պահարանը օրը օրօ՛րէն կայ, գլուխս քսեմ :

Աղանի պահարանը կբանայ, մէջը կմտնէ :

— Քսէ ճան, քսէ ճիկերս, կըսէ Պօտոս Աղա :

Աղանի կուշանայ, պահարանէն դուրս ելնելու :

— Որկանէ մութ ըլլալուն շաշա՛ն չգտա՞ր ճան, կեցիր ճրագ բերեմ,

Ըսելով Պօտոս Աղա աշտանակը կառնէ պահարանին մէջ կմտցունէ. ի՞նչ տեսնէ աղէկ. մարդ չիկայ պահարանին մէջ. Նոր փեռայն որ հարկաւ այս դիպուածին պատճառ նոր հարսին ամօթխածութիւնը չպիտի գտնէր, կսկսի խօրհչիլ :

— Ո՞ւր դնաց, ի՞նչ եղաւ. պահարանին մէջ դուրս ելնելու տեղ չի կայ, տախտակները ամուր գամուած . . . : Աղանի էր թուաւ քսեմ, դուռը գոց, պատահանները գոց. արդեօք սատանաներու հետ յարաբերութի՞ւնն ունէր, առին տարին, ի՞նչ ըրին : Խեղքս չհասաւ այս բանին :

Պօտոս Աղա լի դարմանօք աթուղի մը վրայ կնստի . Ա-

զաւնին առաւ , տատրակը յապուշ հարաւ , քառորդ մը յետոյ դուրսը ոտքի ձայն կըսէ , կցատկէ նիզը կըաչէ , կըանայ դուռը : Մարիամն էր որ սանդուղքէն վեր կեւնէր . կկանչէ և Ազաւնին կհարցունէ :

— Արեւուդ մեռնիմ Պօտոսիկ Ազա , կըսէ սպասուհին կոտորուելով : Այս երեկոյ Ազաւնի Հանըմին գլուխը սաստիկ կցառի , մինակ ըլլալու պէտք ունի . կաղաչեմ , ներեցէք :

— Որչա՞նք դիտեմ գլուխը ցաւելը , կըսէ Պօտոս . անոր համար պահարանը բացաւ որ օրօք , օրօք . . . դեղ առնէ որ պահարանին մէջ անյայտ եղաւ , ասոր կզարմանամ :

— Ա՛հ , ա՛հ , ա՛հ , կընէ Մարիամ բարձրաձայն խընդարով , իմին սիրուն Պօտոսիկ Ազաս , ա՛հ , ա՛հ , ա՛հ . . . : Ազաւնի Հանըմը պահարանին մէջ անյայտ ըլլա՛յ , կարելի՞ թան է : մուկ ըլլալու է որ . . . ա՛հ , ա՛հ , ա՛հ . . . : Դըռնէն դուրս ելած է , դուք չէք նշմարած :

Մարիամին քրքիջը կշփոթեցնէ զՊօտոս , որ դուռը դոցելով կմտնէ անկողին :

— Իբաւ անանկ է , կըսէ ինքնիրեն : Ի՛նչ կոշտութիւն էր ըրածս . կարծե՛լ որ Ազաւնի պահարանին մէջ անյայտ ըլլա՛յ , արժանի էի որ սպասուհին խնդար վըաս : Հա՛ . . . նիզը դըռած էր իբաւ . . . կարելի է դըռած չէր : Դուռը ե՞րբ բացաւ , ե՞րբ դոցեց . . . կարելի է որ չսեցի : Պահարանին մէջ մարդ մը անյայտ ըլլայ , միայն այս անկարելի է :

Սոյն մտածմունքներով Պօտոս Ազային քունը կտանի , և արդէն շատոնց աւատու էր եղած երբ կրանայ աչքերը ու կերթայ սուրճը զօքանջին սենեակը խմելու , և խօսք բանալով :

— Խա՛նտ մարիկ , կըսէ , Ազաւնի Հանըմի գլուխը քեզ մը կցաւէր . հիմայ ի՞նչպէս է , ինչպէ՞ս ուրիշ է :

— Տիկին Հեղինէ , երեսուն և ութ տարեկան մանկամարդ կին , այս ոնդամ փետային Խա՛նտ Մարի պատուօր .

ևունը ականջին սակաւ ինչ անախորժ գալով ,

— Ջարմանալի հարցումներ կընես , Պօտոս Աղա , կըսէ սրանեղութեամբ . Աղաւնիին ինչպէս ըլլալը ես քեզի պիտի հարցունեմ . հիմա դու քովէն կուգաս :

Պօտոս շուարեցաւ :

— Կոչտութիւն մ'ալ հիմայ ըրի , կըսէ ինքնիրեն , ժայրը չգիտէ եղեր այս դիշեր մինակ պառկելս , մագ մընայ պիտի գիտցունէի ու պատիւս ստակի մը պիտի ըլլար :

Այս պակասութիւնը ծածկելու համար մէկէն վրայ կըբրէ ,

— Այն ըսել չէ . Խեղճ մարիկ , առջի երեկոյին . . . քիչ մը դլուխը կցաւէր , այսինքն շատ կցաւէր . այս առտու ալ . . .

— Սիրտս դող հանեցիր , Պօտոս Աղա , կըսէ Տ . Հեղինէ ոտք ելնելով . երթամ նայիմ աղջիկս ի՞նչ է եղեր , իմ մէկ հատիկ աղջիկս :

— Ահաասիկ կոչտութիւն մ'ալ , կըսէ մինակ մնալով Պօտոս . խեղճ կնոջ սիրտն դող հանեցի աղջիկան գլուխը շատ կցաւի ըսելով . շատ անխոհեմ մարդ եմ , շա՛տ :

Հարսանեաց հինգշաբթին ալ երեկոյ կըլլայ առանց կարելի ըլլալու որ փեսայն հարսին երեսը տեսնէ : Երեկոյին հարս ու փեսայ դարձեալ կառանձնանան . այս անգամ Պօտոս իւր ձեռօք դուռը կգոցէ ու նիգը կզնէ : Մինչգեռ հանուելու վրայ էր , Աղաւնի՝

— Հագուստներս պահարանը դնեմ որ չաղտոտին :

Ըսելով պահարան մտնելու միջոցին , Պօտոս Աղա աչքերն ուղղակի սննեակին դրան վրայ կտնկէ որ տեսնէ թէ կբացուի՞ . դուռը տեղէն չերերար : Այս երեկոյ Աղաւնին չթռցնելուն վրայ ապահով ըլլալէն յետոյ , պահարանին կմտնեայ ըսելով ,

— Խոսիս , որքէն դեռ չհանուեցա՞ր :

Բայց ի՞նչ կտեսնէ , պահարանին մէջ դարձեալ մարդ

չիկայ : Դրան նիդը կխառնէ , տեղէն լուխաած չէր , կը-
մանէ պահարան , և կսկօի տախտակները մէկիկ մէկիկ ե-
րերցնել ու հրել . մէյ մ'ալ դուռի պէս բան մը կբացուի .
և բաւական լայն սանդուղք մը կերնէ առջին :

— Խնդիրը լուծուեցաւ , կրտէ Պօտոս , Սղաւնի վան-
դակին այս կողմէն կթռի եղեր , բայց ինչու . հոս բազէ
չիկայ , « Դ՛նէ ո՞րմէ կվսխէ : Հասկցայ , ասոր ալ պատճառ
ամօթխածութիւնն ըլլալու է . շատ պարկեշտ է . աչքը
գոց մեծցած է . հարկաւ կամաց կամաց կսովորի . . . այս
դիչեր ալ ասանկ անցունեմք :

Որչափ որ այս գիչեր ալ ասանկ անցունել կուզէ Պօ-
տոս , սակայն չլընար . կէս գիչերին Սփրող խոեայ լսթա-
նը կարթնցնէ զինքը :

— Ս,յս ի՞նչ ըսել պիտի ըլլայ , կրտէ ինքնիրէն Պօտոս .
Սստուծոյ հրամանաւ իմ կողակիցս ըլլայ ու գիչերները քո-
վէս փախի . . . այս ըլլալու բան չէ : Եթէ այսչափ ա-
մօթխած էր , թող չպսակէին . պէտքէ որ թուրութիւն ա-
նեմ . երէկ գիչեր գլխու ցաւ ունէր ասեմ , « Դ՛նէ այս գի-
չեր ի՞նչ ունի : Հիմայ անպատճառ գտներու եմ զՍղաւնի
ամուսնական անբռնաբարելի իրաւունքս է այս :

Ս,յսպէս խորհելով կառնէ աշտանակը , գիչերին մնա-
ցած մասը մինակ չմնալու համար հաստատ որոշմամբ կեր-
թայ պահարանին մէջի սանդուղքին գլուխը . հոն վարան-
մունքը գլխուն կը պատէ իջնա՞յ մի . չիջնա՞յ մի . տան ա-
մեն անկիւնը չգիտեր . հապա ելնէ սխալ տեղ երթայ . . .
ի՞նչ ընէ յետոյ : Ս,մեն ճամբայ Հոսովմ կտանի , կրտէ
գաղղիական առած մը . այլ նա ոչ Հոսովմայ կնջրքով կերթար .
Քիչմնաց որ միտքը պիտի փոխէր երջնոր զօրութիւն զգենլով :

— Աերթամ , կրտէ , քանի որ Գաւիթ մարգարէն այս-
պէս հրամայած է . « Ս,յր թողցէ զհայր և զմայր , և եր-
թիցէ զհետ կնօջ իւրոյ » ես հայր մայր չունիմ , այս սեն-
եակն ունիմ , կթողում ու կնօջս ետեւէն կերթամ :

Պօտոս Աղայ Ա. Գրոց մէկ վճիռը , զոր սխալմամբ Դաւիթ մարդարէին խօսքը կկարծէր , իրեն օգնական առնելով , ամեն բան աչքը կառնէ , կիջնէ վար . քառակուսի փոքրիկ սրահի պէս տեղ մը կը հասնի . ճախ կողմը ուրիշ սանդուղք մ'ալ կգտնէ , ասի ալ իջնելու համար նոր զօրութիւն ժողվելու վրայ էր , երբ կնշմարէ որ աջ կողմը դուռ կայ . կըսնայ , կնայի որ պղտօիկ սենեակ մ'է , սեղանի վրայ դրուած կանթեղը աղօտ լոյս կարճակէր անկողինի մը վրայ . մէջինն ով ըլլայք ստուգելու համար հազիւ քանի մը քայլ յառաջ կերթայ Պօտոս , մէյ մ'ալ աղաղակ մ'է կվերթի :

— Հասէք . . . զիս կմեռցնեն կոր , դող է եկեր :

— Մի' վախեր , Խուս , կըսէ թաղաւոր Աղայ , թաղաւորացի ճայնը ճանչելով , և համազուած ըլլալով որ եթէ ինքն ըլլայր դիտնէ , կհանդարտի , բայց ընդհակառակն Աղաւնի ճայնը քանի մ'աստիճան ևս բարձրացնելով :

— Կմեռցնեն կոր զիս , հասէ'ք , կպօռայ :

Մարիամ կհասնի :

— Ի՞նչ եղար , մի' վախնար , բան չիկայ , Ո՞վ ես դու , կըսէ ձեռքի ճրագը Պօտոս Աղային քիթը խօթելով :

Նոյն միջոցին Տ. Հեղինէ կհասնի .

— Ո՞վ է աղջիկս մեռցնողը , Մարիամ . վազէ Խաչեր աղբարին ճայն աւուր , թող ոստիկանութեան իմաց տայ :

— Ո՞հ , մայրիկ , հիմա կմարիմ , այս ի՞նչ վախ էր . կըսէ Աղաւնի : Այս գիշեր շատ ակար ըլլալուս հոս եկեր կհանգչէի . . .

Եւ կօկս լալ :

— Բան չկայ , կըսէ Մարիամ , Պօտոս Աղայ վար իջեր է . . .

— Այս ըրածիդ հաւնեցա՞ր , կըսէ Տ. Հեղինէ փեփն , Աղաւնիին երեսը ջուր սրսկելով . աղջիկանս մահուանը պատճառ պիտի ըլլաս . ակտեղու հանդիպցուցիր . ամօ՛թ ,

ամօթ . այս գիշեր հանգիստ պիտի ընէ եզեր : Այս վար-

մունքդ շատ անվայել է , Պօտոս Աղա : . . .

— Խախտ մարիլի , ինչպէս ըլլալը հասկնալու եկայ , չէ
թէ . . .

— Հերիք , հերիք , գիշերները ժամը վեցին հիւանդ-
տես երթալ լսուած բան չէ . տես ինչ կերպարանքով ալ
գիմնացս կայներ է : հօրս տեղ մարդ . . .

Պօտոս Աղա շապիկովը կուրծքը ծածկելէ և վարտիքին
կապերը վեր վերցնելէ յետոյ թողութիւն խնդրելով դուրս
կելնէ :

— Գարձեալ կոչուութիւն , կըսէ ինքիբեն սանդուղքէն
վեր ելնելով , պէտք չէր որ ներս մանելուս պէս ինքզինքս
ճանչեցնէի . խեղճ աղջիկը զիս դող գիացաւ . եթէ գիտ-
նար որ ես եմ հարկաւ ճայն չէր հաներ :

Վերջապէս հակառակ իւր անդրդուելի կամաց , կըս-
տիպուի այս գիշեր ալ մինակ անցունել Պօտոս :

Հետեւեալ երեկոյ պառկելու գացած ատեն Աղանի
բնաւ չերեւիր . բնաւ հող չըններ Պօտոս , վասն զի սովորած
էր արդէն թէ ո՛ր գիշերը կանցունէնա : Այս գիշեր վեր-
ջին ճիգ պիտի թախէր յաղթանակը կանգնելու համար :
Յորեկէն պատրաստեց յատակադիծը , որոյ գլխաւոր մասը
զգուշութիւն և խոհեմութիւն էր կհանուի կհագնի ցայցա-
լզգեատը , և կնստի . չքնանար առաջադրած արշաւանաց
մեծութիւնը քունը փախուցեր էր : Ժամը հինգն էր ճիշդ-
երբ կառնէ ճրագը , կիջնէ սանդուղքէն , շունչը բռնելով
կբանայ դուռը , ճրագը կմարէ , և աշտանակը սեւամին վը-
րայ կգնէ . կմտնէ ներս , ինքիբեն զգուշութիւն և խոհե-
մութիւն պատուիրելով : Առջի գիշերուան սահմանը ոտը
կոխելուն պէս կանկ կառնէ և առանց յառաջ երթալու ,

— Աղանի , Աղանի , կըսէ կամաց ձայնով :

Պատասխան չառնէր : Անկողնոյ մէջինը շուրջանակի
քսան կանգուն հեռաւորութենէ լսելի ըլլալու չափ կխոր-

դար , Պօտոս Աղային ականջը քիչ մը ծանր էր . անկողինին աղէկ մօտենալէն յետոյ ,

— Ո՞հ , կրտէ , ինչ անուշիկ կնիւր հէ Սղաւնիս . ինչպէս խանդարեմ անոր քունը . հարկաւ թէ որ գիտնայ որ ես եմ , շատ գոհ կըլլայ . բայց չէ . թող ինքիւրեն արթննայ . այսչափ համբերեցի , քանի մը վայրկեան ալ կապատեմ . ո՛հ սիրելիդ իմ Սղաւնի . որչա՞նչ չես գիտեր , երանելի աղջիկ որ վրադ ունեցած սէրս հիմա տամապատիկ աւելցաւ :

Բազդն անանկ էր բերեր որ այս երեկոյ նոյն անկողինին մէջ պառկողը խոհարար Խաչերն էր . և այն կողմն ուր առջի գիշեր Սղաւնի դէտիսն էր դրեր , հոն Խաչեր աղբաշոտ քերն էր երկնցոյցեր : Պօտոս Սղա իւր սիրահարական խանդէն յափշտակեալ ալ չկրնար գիմանալ , կրանայ վերմակը , և ամենայն ջերմեռանդութեամբ ու կատարեալ սիրով կ'համբուրէ բարի խոհարարին վարի կողմէն : Խոհարարըն է կարթննայ , և ձախ ձեռքովը այնպիսի զօրաւոր ապտակ մը կիջեցնէ խեղճ սիրահարին քիթին բերնին որ արձագանգ կուտայ սենեակին մէջ :

— Հա՛յ իրաւ գող կայ եղեր , կրտէ Խաչեր տեղէն շատկելով և Պօտոս Սղային վիզը երկու շղապին ձեռքերովը սեղմելով . ասա նայիմ , գու ո՛ւստի մտար Քերտուն :

— Խաչեր աղբար , թող տուր . գող չէ , ես եմ , կրտէ Պօտոս մամուլին տակէն խղղուկ ձայնով մը :

— Պօտոս Աղա դու ես , տես ինչ ի՞նչ որոց . . . կնեբնս Աղա , չը խանալով էր : Ո՞րք հո՞ն եկաք , Աղա :

— Բան չիկայ . սրունդներս կ'քերուէին . հոս եղ մը կար , ան առի կերթամ :

— Ադ եղբ անկողինիս մէջ էր , Աղա :

— Չէ . . . քովեդ անցնելու ատենս վրադ ինկայ : . . . Բայց սա պրուցէ ինձի . ինչպէս եղաւ որ այս գիշեր հոս ես պատկեր :

— Մեծ խանձ ասաց որ ասկէ ետք հոս պառկիմ, գող կուգեալ ըսելով մարդ չուզեր հաս կենալ:

— Գիշեր բարի, Խաչեր աղբար, պառկէ, պառկէ, . . . միայն կաղաչեմ որ այս գիշեր հոս գալ մարդու չըսես:

— Չէ, Աղա:

Սենեակը կերթայ Պօտոս, այս դէպքը իւր ամեն յոյսերը յօդս կ'յնդեցնեն. հաստատապէս կ'համոզուի որ անկարելի պիտի ըլլայ բերդը յարձակմամբ առնել. և այս գիշերային արշաւանաց մէջ միայն ապտակով մը գլուխն ազատելուն սիւսք կուտայ:

— Այս վիճակին դա՞րման, կ'հարցնէ ինքիբեն, թէ որ իրաւ հիւանդ էր Աղաւնի, թող հարսնիքը չաբաթ մ'ալ յետոյ ընէին. Աբրահամ Աղա ինքնին փութաց որ ժամ յառաջ կատարուի, եթէ հիւանդ չէ, ինչո՞ւ կ'իտիսի ինէ աներս հոս չէ որ գործն անոր հասկցնեմ. մօրը հետ խօսք չըլլար, նեղ սիրտ կ'ին մը. բայց ինչ օգուտ . քանի որ մայրըն է, ասանկ խնդիրներու մէջ հօրմէն աւելի ձեռնհաս է: Մասնաւորաբար խօսիմ հետը այս գործին վրայ, և անոր համեմատ գիտնամ ընելիքս:

Առաւօտուն կանուխ Պօտոս կերթայ զոքանչին քով, և խօսք բանալով,

— Խաչան մարիկ, կըսէ, ձեզի խօստովանաբար խօսք ունիմ, և այս խօսքը անոր համար կ'համարձակիմ ձեզի բանալու, որ կողակիցիս մայրն ըլլալովսիդ, ինձի ալ մայր կ'համարիք, և . . .

— Ինչ խօսք, կ'հարցունէ Տ. Հեղինէ խիստ կերպիւ փեսին խօսքը կտրելով,

— Սա է որ, խաչան մարիկ, Աղաւնի Օրիորդը . . . Տիկին Աղաւնին . . . ինչպէս ասեմ: . . .

— Կաղաչեմ, Պօտոս Աղա, սիրտս մի հատցուներ:

— Չէ, ո՞չ ասեմ. Տիկին Աղաւնի մինչև այսօր ինձի հետ . . . իմ քովս չէ եկած, ասոր պատճառը կուզէի

հասկնալ քանզի գիտէք անշուշտ որ պատկի սուրբ խորհուրդը

— Այդ ինչ ըսել է, կպտտասխանէ Տ. Հեղինէ լի սրտամոութեամբ. կհասկնամ ինչ է միտքդ, իբր թէ աղջիկս վախնալու տեղի ունենայ

— Չհասկցաք, բախան մարիկ, ես

— Խօսքդ գիտցիր, Պօտոս Աղա, այդպիսի պարզ խօսք մը չհասկնալու չափ անմիտ չեմ, Անցեալ գիշեր աղջիկս մեռցնել փորձեցիր, երբոր չյաջողեցար, հիմա ելար, սե ու վատ զրպարտութեամբ բարոյսպէս մեռցնել ոչ միայն Աղաւնիս այլ նաև մեր ամբողջ գերդաստանը : Ըսածդ հասկցե՞ր եմ թէ ոչ : Ինչ անխղճութիւն, ինչ վատութիւն : Ես Աղաւնիս վարդի պէս հոտտտելով մեծցունեմ ու

— Բայց մարիկ, այդպիսի բան մը միտքէս անգամ չէր անցնէր երբ

— Բաւական է, Պօտոս Աղա, վերջ տանք այս խաղին որ ծանր կերպարանք կառնէ երթալով : Ահ, ջըղային տկարութիւնս բռնեց . Մարիամ, հասիր

Սպասուհին երբ « Երկրէն » սրուակը ճեռքը ներս կվազէ, և թագաւոր Աղային ականջն ի վար կըսէ որ երբ Տիկինին մազձը բռնէ, քոյը մարդ չախորժիր : Պօտոս դուրս կելնէ տունէն առանց ինչ ընելիքը գիտնալու : Տարտամունք թեամբ քանի մը քայլ առնելէ յետոյ, շատ հեռուն, Պաշլար Պաշի մեծ փողոցին գրեթէ ծայրը քահանայ մը կը նշմարէ որ կուգար : Յանկարծ Պօտոս Աղային մտքին մէջ խորհուրդ մը կճնանի,

— Երթամ, կըսէ, այս եղելութիւնը տան հոգեւոր հովուին հասկցնեմ, և այս ցաւերուս դարման անկէջ բընտրուեմ : Հարկաւ նա խոստովանահայրնին և Աստուծոյ պաշտօնեայ ըլլալով ինձի համար փրկարար աղակեցութիւն կըրնայ ունենալ զքեանչիս և կողակիցիս վրայ,

Բազդը բերաւ որ եկող քահանան զինքը պսակողն էր
— Ինչ բարեդուշակ պատահմունք , կըսէ Պատու , հի-
մա սիրտս կվկայէ որ կրկին յարձակմամբ չյաջողածս եր-
կու խօսքով պիտի կարենամ դուրս հանել :

— Օրհնեա՛ Տէր Հայր , կըսէ քովը մօտենալով :

— Օրհնեսցէ գրեզ Տէ՛ր . Ինչպէ՛ս է կենցաղավարու-
թիւննիդ , կյուսամ որ աղչի էք :

— Փառք Տիրոջ : Չեզի խօստովանանք ունիմ , Տէր Հայր :

— Խօստովանանք , ո՛հ , շատ աղէկ , օրհնած . . . դի ոչ
գետէք երբ գայցէ տանուտէրն . . . ամենայն ժամ արթուն
կացէք » : Այս անցաւոր աշխարհիս մէջ ամեն օր ամեն
ժամ պատրաստ գտնուելու եմք . . . ասկէ զգոտ խօստովա-
նանքով մարդոյս մեղքերը քաւուելով , թիղծը հանդիստ
կապրի , ուստի :

— Չէ՛ , Տէր Հայր , խօստովանանք ըսելով գաղտնի խօսք
ըսել կուզեմ ,

— Հա՛ , այդ ուրիշ խնդիր : Արդ , կեցիր նայիմ . . .
հիմայ Պարոն Կովիկին տունը կարդալիքի կերթամ . . . անկէց
ալ ելնեմ , ձկավաճառ Անդրէասին մամուն վրայ արձա-
կում են ուզեր , հոն պիտի երթամ . խեղճ կինը չորս օր է
որ հոգեվարք է . ոչ ասդէնինը ոչ անդէնինը , երեկոյին ալ
անգամ մը նաւավար Սուգիասին հանդիպելու միտք ու-
նիմ . էրիկ կնիկ կուիւ են ըրեր , մարդը հաց չտանիր .
խեղճ կինը վեց զաւակով երեսի վրայ մնացեր է , « քե մէյ
մ » ալ փորը չունենար , տեսնեմ ինչպէս կընամ հաշտեցը-
նել . . . ըսել կըլլայ որ , օրհնած , այսօր մինչև երեկոյ
դրազեալ եմ : Ուստի վաղը եկեղեցւոյ աւարտմանէն ժամ
մը յետոյ տուն հրամայէ , սուրճը մէկուեղ կխմենք և . . .

— Ասելիքս հիմա ալ կընամ անել կարծեմ , երկան
բան մը չէ :

— Քանի որ ատանկ է , օրհնած , ինչո՞ւ այսչափ խօս-
քը կերկարես . Անդրէասին մամը կերնէ տունաց արձակու-

մի կռուների . խօսէ ուրեմն . սիրելիս :

— Գու զիս Աղաւնիին հետ պսակեցիր , անանկ չէ՞ , Տէր Հայր :

— Ես քեզ Աղաւնիին հետ պսակեցի՞ մի , ե՞րբ պսակեցի , կրսէ բարի քահանայն ոտքը ձեռքը դողալով :

— Հապա անցեալ կիւրակէ դու չէիր որ Աբրահամ Աղային ազջիկը . . .

— Հա , հիմա հասկցայ , ես կարծեցի որ ժամագործ Մարկոսին ազջիկին համար կըսես . այն ալ Աղաւնի է . հըրամանին երէկ առի . վազն ալ հարս պիտի ընեմ : Սիրոսս դող հանեցիր , օրհնած , գիտես ա , եթէ սխալմամբ անդամ մը պսակուածը անդամ մ'ալ պսակեմք , ետքը մօրուքնիս վրայ կուտանք : Ծատ աղէկ , ես պսակեցի քեզի : Յետոյ :

— Արեւնէ , Տէր Հայր , ինչո՞ւ համար պսակեցիր :

— Աչքդ խաղայ , սիրելիս , կերթաս հացագործէն հաց կառնես . ինչո՞ւ կառնես . ասոնք անանկ բաներ են որ ինքնին կհասկցուին , բայց չեն զրուցուիր :

— Ես ուրիշ բան ոչ ասեմ , անոր համար հարցուցի : Ձէ որ պսակեցիր որ հետս նստի , երնէ , և . . .

— Պառկի . մի քաշուիր , սիրելիս , մեք քահանայ եմք : Շիտակը ըսե՛մ սիրելիս . վարդավառին ճիշդ քսանուհինգ տարուան քահանայ կըլլամ . և դեռ այսպիսի հարցում չըրաւ ինծի մէկը : Աստուած լուսաւորէ հօշին , Աարապետ Սրբազանին քով խոհարար էի . վարդավառին պահքին երկուշաբթին անանկ ալւոր քահանայն ոտքսէ մը գրի , որ ի վարձատրութիւն զիս քահանայ ձեռնադրեց : Ան ըսել չէ եա , Հիմա , սիրելիս , հրամանքդ գնա՛ , կնոզդ հետ նստէ , ելիր , կեր , խմէ որչափ որ կուզես : Մնաս խաղաղութեամբ ողջոյն կընեմ Տ . Հեղինէին , Աբրահամ Աղան ալ դուրս գնաց , երթամ Կոմիլին տունէն կարդալիքի կպասեն : Քահանայն ճամբան կերթայ , Պօտոս Աղա կպաղի կը-

մնայ, և քանի մը վայրկեան ետեւէն նայելէ՝ յետայ :

— Գատարանը դատաւոր չի կայ, դատաւորի հասկցնեմ :
Ըսելով տուն կ'գտաւնայ, սենեակը կ'բաշտի, կ'սկսի
խորհիլ :

— Ի՞նչ վարմունք բռնելու է ասոնց հետ, ի՞նչ անե-
րեւոյթ փորձանք էր որ եկաւ գլխուս : Աչ աղջիկը խօսք
կ'հասկնայ, ո՛չ մայրը, ոչ քահանայնին և սակայն անհրա-
ժեշտ հարկ է որ մէկուն հասկցնեմ միտքս . այսօր ճիշդ-
եօթ օր կ'ընէ որ իբրև յանցաւոր կ'մտնեմ կեխեմ այս
տունը . իբր թէ աղջիկնին բռնի առած ըլլայի : Երբ Ա.բ.
բահամ Աղային բայի ամուսնանալու միտք ունենալս, որ-
չափ աղաչեց ինձի որ իւր աղջիկն առնեմ, ըսելով որ Պօլ-
սոյ մէջ ինէ արժանաւոր մէկը չէ գտած . ես իրեն հասած
աղջիկ ունենալն անգամ չէի դիտեր : Աւրեմն այս դիպուա-
ծին ի՞նչ պատճառ գտնեմ . հապա զօքանչիս ինձի դէմ
բանեցուցած խտուրթեան . . . ենթադրեմք որ առաջին
անգամ աղջիկանը գլուխը սաստիկ ցաւելուն վրայ ինչ ը-
սելիքը չ'զիտցաւ . հապա այս առաւօտ երբ յանդիմանելով
պարզապէս թշնամանելով կ'խօսէր հետս : Իրաւ այսօր ալ
մտղձ եկաւ վրան . հիմայ անշուշտ հանդարտած է : Եր-
թամ անգամ մ'ալ փորձեմ միտքս հասկցնել . ապա թէ
տեսնեմք :

Պօտոս Աղա Մարիամը կ'կանչէ :

— Ի՞նչ հրաման ունիս, Պօտոս Աղայ, կրսէ ասի կ'ծու-
ծի՞ծաղով ներս մտնելով :

— Մեծ Հանրմլին հետ տեսնուիլ կուզեմ . ինտո՞ր է :

— Երթամ իմաց տամ :

— Երթալ իմաց տալ մի, կրսէ ինքնիրեն Պօտոս երբ
դուրս կեչնէ Մարիամ . որչա՞նչ այս ի՞նչ ասել ո՞ր լինի . այս
Բեւեռեմն ալ հիմայ ելաւ . փեսայի անելու համար է այս :

— Տիկինն ըսաւ որ, կրսէ Մարիամ պահ մը յետոյ ներս
մտնելով, ձեռքի ոչ հիմա կ'ընայ ընդունիլ, և ոչ ուրիշ ատեն :

Պատու Ազա ստքի ելնելով և լի սրամտութեամբ ,
 — Գնա՛ , առէ՛ Հանըմիդ , կըսէ Մարիամին , որ ես ալ
 ոչ հիմա կուզեմ զինքը տեսնել և ոչ ուրիշ ատեն . քանի՞
 կառնեմ ես այդ Ստրմպօցի գահը . ես որ Ակնի երեւելի
 գերդաստանէ եմ և ամսական վեց հազար զուրուշ եկա-
 մուտ ունիմ , ինք ո՞վ կ'սլէ . որի՞ աղջիկ է :

Մարիամ կեղնէ դուրս . Պատու Ազա պայուսակը կկա-
 պէ , կիջնէ Պօլիս . շոգենաւ կմտնէ , կերթայ Ս. Ղեքսանդ-
 րիա . ուր կենաց մեծադոյն մասն անցուցեր էր . ուխտը-
 նելով որ ա՛լ ոչ Պօլիսին անունը տայ և ոչ կողակիցին ,

ԺԱ.

Գեղեցկազիր քաղաք է Պրուսա , փոքր Ասիոյ մէջ Օ-
 զիմպոս լերան ստորոտը : Այս քաղաքը Օսմանեան տէրու-
 թեան որրանն եղաւ գրեթէ . հոն խորունկ թաղուին Օս-
 ման և Օրխան իրենց իշխանութեան արմատը որ հարիւր
 տարուան միջոցին մէջ զօրաւոր ճիւղերով ծածկեց Ասիոյ
 այն ամեն երկիրները որք ժամանակաւ Հայոց , Յունաց ,
 Ասորոց և այլ շատ մը տերութեանց իշխանութիւնը կկազ-
 մէին : Սակայն վերջին ժամանակները երկրաշարժը դրեթէ
 այնչափ վնաս տուաւ այս քաղաքին , որչափ հրդեհը ամեն
 տարի կուտայ Պօլիսին : Այսու ամենայնիւ Պրուսա իւր շքը-
 ջակայ երկիրներովը ոչ նուազ շէն ու բարեբեր մէկ կուսա-
 կալութիւնը կկազմէ Բարձրագոյն Դրան՝ Խիւտավէնտի .

Ընթերցողը դիւրաւ կհասկնայ որ Չարէհ հօրը միակ
միջոցառումն է ծերութեան մէջ, ուր ամեն կիրքերն
հանդարտած և առ կողակիցն ունեցած զգացումը բա-
րեկամութեան փոխուած ըլլալով, աւանց այս տղուն, ու-
րոյ վրայ կեդրոնացած էր իւր ամեն սէրն ու գորովը,
Յակոբին սրտին մէջ մեծ պարսպ մը պիտի մնար: Մեծ
բան է զուակ մը, ոչ այնչափ երիտասարդ հօր մ'աչքին.
որչափ ծեր հօր մը համար:

Ս. Ա. Ա. Օ. մը Յակոբ նստեր իւր կնոջ Տիկին Հոռովին
հետ խօսակցելու ետեւէ էր, խօսքերնուն նիւթն է Չա-
րէհ որոյ մէկ նամակն էին աւեր այն օրերը:

— Իրմէ լուր առինք վերջապէս, կրտէ Յակոբ, ե-
րեք ամիսէն աւելի էր որ դրած չունէր: Նամակներնուս
չպատասխանէր. ինչպէս ըլլալը դիտնալու համար անհամ-
բեր Պօլսեցւոյ մը Պրոսա դալուն կազանեմք: Երթալով տար
օրինակ տղայ կըլլայ Չարէհ:

— Կտեսնաս որչափ ալ կարճ եմ նամակները. կրտէ
կինը. առողջութեան կողմանէ աղէկ է եղեր, ասոր ա-
ւելի գոհ եղայ:

— Չեմ հասկնար ինչ պատճառ կրնայ ունենալ այս-
չափ կարճ, այսչափ ուշ գրելու. մինչև հիմա կկարծ էինք
որ բժշկականութեան կպարսպի. չե՞ս յիշեր, Տիկին,
վեց ամիս յառաջ դրած մէկ նամակին մէջ կրտէր որ տա-
րիէ մը ութերորդ կարգը պիտի անցնի, այն ատեն ուս-
մունքը կատարելագործելու համար Փարիզ երթալը հարկ
պիտի ըլլայ: Ելլուսամ որ, ըսեր էր, կատարեալ բժշկ
ըլլալով ձեզի արժանի զուակ ըլլալու ամեն յատկու-
թիւնները կրնամ ստանալ: Ս. յս անգամ կգրէ որ զա-
նազան պատճառներ արգելք են եղեր ուսմունքն յառաջ
տանելու. քաղաքական ասպարէզին մէջ աւելի փառք և
համբաւ ստանալ կարելի ըլլալով, բժշկականութիւնը ձը-
ղեր, և քաղաքական ասպարէզը մտնելու համար իրուս-

գիտութիւն կտուրի : Բժշկականութեան համար երկու սաս-
րի աշխատելէ , և իւր մտաւոր կարողութիւններուն շնորհիւ
այնչափ յառաջ երթալէ յետոյ , ասանկ յանկարծ վիճակը
փոխելը շատ վարմանալի կթուի ինձի , Տիկին :

— Ահ , Յակոբ Աղա , դու հոգ մի ընեւր . Չարեհ իւր
աշխոյժ բնաւ որութեամբը և մտաւոր բարեմասնութիւննե-
րովը կրնայ շուտ յառաջ երթալ այն ասպարէզին մէջ ալ-
ես բնաւ տարակոյս չունիմ : Ասկէ զատ , չէ՞ որ դու ինքը
ազատ թողուցիր որ մտած է , ու որ վիճակը որ յարմար
դատէ շահաւէտ ապագայ մը իրեն պատրաստելու , առանց
քու կամքի հարցնելու նոյնն ընտրէ :

— Չարեհ աշխոյժ է , Տիկին , և մտացի . այդ չեմ ուրա-
նար : Սակայն եթէ կարծես այն վիճակին մէջ փայլելու
համար տաղանդը բաւական ըլլայ , մեծ ապէս կսխալիս . ա-
ռանց աւելի հեռուն երթալու , սա չափը միայն կըսեմ որ
Չարեհի միտքը խորամանկութեանց ու նենգութեանց ա-
նընդունակ է . դուցէ ըսես որ այն ալ հոգ չէ . ուղղութիւն ու
անկեղծութիւնը երբ որ ըլլայ յաղթանակը կկանգնէ . բայց
չատ ուշ Տիկին , և շատ դժուար , եթէ արտաքին պատճառ-
մ՞ իրեն օգնական չունենայ :

Ասկէ զատ Չարեհի սիրաբ բարի է , այնչափ բարի որ-
չափ որ քաղաքական անհատի մը պէտք չէ ըլլալ : Անոր
ազատասէր բնաւորութեան շատ յարմար էր բժշկականու-
թիւնը , Տիկին :

— Տղադ ամենեւին վաճառականութեան միտում չու-
նեցաւ :

— Չունեցաւ , Տիկին , շատ կցաւիմ ասոր : Մեր հոյրե-
նի վիճակն էր առևտուրը . թողումք այն անկախութիւնը
զոր մարդ կրնայ վայելել վաճառականութեան մէջ , այս
վիճակէն միշտ ապահով շահու մը կրնայ ակնկալել մարդս :
Ամեն դարու մէջ վաճառքի փոխանակութիւն է եղած աղ-
բիւր աղղոց ճօխութեան և մեծութեան : Չարեհ ի ման-

կութեան, շուայլ բնաւորութեամբը ցոյց տուաւ որ ի բնէ տրամադրութիւն չունի այս դործին . դեռ տասնուչորս տարեկան չիկար , երբ արդէն ընտանիք մ' ապրեցնելու բաւական գումար մը պէտք էր իւր մանր ծախուցը համար :

— Այիշեմ . դու ալ ատոր համար շատ խիստ կ'վարուէիր հետը . մինչև անգամ սիրտը կ'վիրաւորէիր առանց նկատելու որ մեր միակ միսիթարութիւն է . ա՛հ իմ սիրելի Զարեհ :

— Գորովանացի չափազանցութիւնը այդպէս կ'կարծեցընէր քեզի . թէպէտ իմ միտքս ուղղել էր դանի այն շուայլ բնաւորութեան : Ինչ մեղկութիւն , ինչ կանացի տկարութիւն , մայրերը որչափ ալ կըթեալ ըլլան , չպիտի կարենան երբէք լաւ և անաչառ դատարակ ըլլալ իրենց զաւակնուն : . . . Թէպէտ կ'խոստովանիմ , յարեց Յակոբ ձայնը մեղմացնելով , որ ես ալ քեզմէ նուազ տկար չեմ Զարեհի նկատմամբ . կողամ որ այս հիւանդաղին ծերութեանս մէջ անկէ դատ սկիտիանք չպիտի կարենամ գտնել : Կտեանե՞ս , Տիկին , որչափ ալ չար է տղայդ , քանի քանի անգամ դրեցի որ գայ մէկ երկու շաբաթ քովերնիս անցունէ . պատասխան անգամ չտուաւ : Հարկ պիտի ըլլայ որ ես անձամբ երթամ այս տկար վիճակովս առնեմ բերեմ զինքը :

— Եստ ազէկ մտածեցեր այդ բանը , Յակոբ Աղա , թող գայ դարունը Պրուսա անցունէ :

— Այո՛ , օդափսխութիւն ըրած կըլլայ . հարկաւ մտաւոր այնատուութիւններն առողջութիւնը խանգարած ըլլալուն : Կըսէի որ , Տիկին , Զարեհ վաճառականութեան սէր չունեցաւ , տղայութեան միտքը վերացեալ խնդիրներով ըզբաղեալ էր , դպրոցական ընթացքը երբոր աւարտեց , ուզեցի զինքը դործերուս մէջ մտնանել . թերեւս մինչև հիմա Զարեհ ինէ քանի մ'աատիճան բարձր դիրք մը կըըռնէր վաճառականութեան մէջ : Ափսոս որ չյաջողեցայ .

երբէք չուղեց զիսն ալ թէ ի՞նչ տարբերութիւն ունի մե-
 տաքսի գինը Եզմիրէն Մարտիրեայի վաճառատեղին . որ մը
 չհարցուց որ մեր երկրին մէջ յառաջ բերուած բամբակն
 ու Սմերիգայինը մի և նոյն յատկութիւնն ունի՞ն թէ ոչ .
 Գիրքի համար չորս հարիւր ոսկի ծախք ըրի թերեւս , որ
 մը սենեակը մտայ տեսնելու . համար որ եղած ծախքին
 համեմատ ճշտութիւն ունի՞ գրքատուներ , գիրք մը անցաւ
 ձեռքս , բացի կարդացի քանի մը տող , երկար բարակ լոյ-
 սին ինչ ըլլալը կհասկցնէր . իբր թէ եթէ լոյսին ինչ ըլլա-
 լը չզիսնամք , զմեզ չլուսաւորէր : Ուրիշ մը բացի , այս
 եւեւ ընն , պակաս գիմ , հաւասար քէ , չեմ գիտեր ինչ .
 հանրահաշիւ է եղեր . զոր տղայութեանս կարդացի . բայց
 հիմայ մէկ կանոնն անգամ չեմ յիշեր : Իսկ սումարակաւ
 լութիւն , ոչ անգ զիտրէնին երեան է նայեր , ոչ դադղիտրէ-
 նին և ոչ հայերէնին . ինչպէս որ անուեր են անանկ
 նոր կկենան :

— Չարե՞ք բնագիտութեան , հաշիւի , երկրաչափու-
 թեան ի վաղուց սէր ունէր . դու ալ կիսոստովանիս որ ա-
 նոնք վաճառականութեան հետ բարդատութիւն չընդու-
 նելու չափ գերազանց են անկէ :

— Վիտեմ , բայց ինչ օրուս որ ձերութիւնս կոխեց ,
 դործերս չիրցայ յառաջ տանիլ և 1862 ին երբ առաւօտ
 մը չերամի սերմերն շուր կտրած դտանք , այն օրը մեր ե-
 րեք հազար ոսկին շուր եղաւ , ըսաւ Յակոբ հառաչելով
 և աչքերը լենալով :

— Անցեալը մտնալու է , Յակոբ Ալա :

— Սա ըսել կուզեմ որ , կրտէ Յակոբ պահ մը լուռ կե-
 նալէ յետոյ , եթէ Չարե՞ք դործիս մէջ մտած ըլլար , այն
 փաստը գոյեւր համար չէի պարտաւորուեր դործէ քաշ-
 ուիլ . դույցէ հիւս անոր կրկնապատիկն ալ չահած կէնք :
 Սա անակնիս մնաց ձեռքերնիս և չորս հազար ոսկույ ար-
 ժէթուղի՞մ զոր եթէ ծախեմ , հազիւ երեք հազար ոսկի ես

բունէ , գինեւնին իջած ըլլայով : Ահ , Տիկին , ճախորդու
թիւն մի զմիոյ կնի , և այս ծերութեանս մէջ . . . :

— Որչափ որ գինեւնին կտորած ըլլայ , չէ՞ որ մեւնոյն
հասոյթը կուտայ . . . : Մյու ի՞նչ պիտի ըլլայ : Յակօր , աւ
պագային վրայ բոլորովին յոյսը կտրել . այդ ալ այսօր հա-
նեցիր . . . երթալով բնոյթը կիտխես . . . տղայի ուէն :

— Չէ , Տիկին , անոր համար չէ , կըսէ Յակօր արտա-
տուքը սրբելով , վասն զի կզգամ թէ տխուր կանխազգացում
մը կըսէ որ . . . ի՞նչ գիտնամ Տիկին :

— Գիտեմ ես քեզի , կըսէ կինը տրանջալու և զանախաւ
զիս վշտացնելու համար կընես այդ բանը . գութ , սէր ա-
մենեւին չունեցար դու իմ վրայ :

— Ահ , Տիկին . կըսէ Յակօր խորշումած դէմքը թեթե-
ւապիտով վայելելով . ինձի է այդ յանդիմանութիւնը . Ես
որ քու սիրոյդ համար աշխարհ զոհեցի : Ես քու սեւեղ-
քով անդուծ առիւծ էի երիտասարդութեանս ասեմ ,
սակայն դու զիս դառնուիլ պէս հլու , հնազանդ բրիւր քե-
զի : Գու սիրտդ ալ կխտտովանի , յարեց Յակօր խամրեալ
ու թալկազին աչերը կնոջը երեսը ուղղելով ու ժպիտն
աւելցունելով , որ աշխարհիս վրայ բան մը քենէ աւելի խը-
նամոցս առողիկայ չըրի , Տիկին : 1846 ին էր , Օրէնհայմի
ընկերութեան հետ հաշիւ մը կարդաղըրելու համար Պօլիա
եկեր էի . հան գիշեր մը դքեղ տեսայ Նառւմին թատրոնը .
երբէք չպիտի մտնամ այն գիշերը . . . այն վայրկենին
աշխարհ մթաղնեցաւ աչքիս առջև . մինչև որ ամուսնական
ոսկի շղթայն զմեզ միացուց , անզգայ էի ինքզինքէս , և . . . :

— Ասղաչեմ , Յակօր Ազա , հիմա այդ խօսքերուն տե-
ղը չէ , կըսէ Տիկին Հօռով սրտին դահուսակութիւնը սքո-
ղելու համար թեթեւ բարկութիւն մը կեղծելով :

— Տիկին , կըսէ Յակօր , քեզի ալ խօսք հաւնեցնել
չաս դժուար կըլլայ . ասկէ յետոյ խօսելիք նիւթերուս
ծրագիրը պատրաստեմ , ու քեզի տամ . որմէ որ չես անոր-

ժիւ սրբազրէ որ ես ալ գիտնամ թէ ինչ խօսք հաճոյ կըր-
նայ բլալ քեզի :

— Եսա վայելուչ երիտասարդ եղաւ Զարեհ , ըստ ա-
մենայնի քու պատկերդ :

— Այո , Տիկին , հրանի թէ չնրաչար չգործածէ իւր
երիտասարդութիւնը , շատ դառն բեռեր կան խղճիս վը-
րայ : Տասը տարի յառաջ ի Պօլիս վաճառական ընկերու-
թեան մը վրայ երկու հազար ոսկի պահանջը ունէի . այս
ընկերութիւնը անանկանալով , այն ատեն ինձի չորս հար-
իւր սակի բաժին էր ինկած , զոր չընդունեցի : Անյեախնե-
րն իմացայ որ այս ընկերութիւնը գարձեալ գործի սկսեց
է . Եիշեանց պարոն Մկրտիչին դրեր էի որ բանակցի հե-
տը և թեր հաշիւ մը ձեռք անցունէ . ինչ օգուտ , Տիկին ,
Զարեհիդ շուայութեան դիմանալ պէտք է : Պարոն Մը-
կրտիչ ի պատասխանի , առ այժմ այս ձեռնարկութեան
չյաջողին իմացունեցէ յետոյ , Զարեհի վրայ ալ լուր տը-
ւած է , ըսելով որ ո՛ր տեղացի , ո՛վ և ի՞նչ կարգէ բան
բլալը գաղտնէօք չըլապատեալ կոտմը հետ դողունի յա-
րաբերութիւններ ունի եղեր . և նա է եղեց տղուդ շուայ-
ութեան սրտածառ : Եսա ազնիւ տղայ է Մկրտիչ , անոր
լուսահաղի հօրը հետ իմ բարեկամութիւնը գրեթէ սրբա-
նէն սկսած է :

— Աւրեմն թէ որ դայ ու քանի մ' ամիս քովերնիս ան-
ցունէ Զարեհ , այդ ախտէն ալ կրժշկուի :

— Ճիշդ այդ մտօք է որ կխօսրհիմ երթալ քերել զինքը :
Մամակով պիտի չկարենամ խօսք հասկցնել . ինչքն օ-
տար տեղեր տուած , թէ երեսնամակներս չկարդար անգամ :
Սքրահամ Աղային հետ ալ հաշիւ ունիմ , այն ալ կպուլի
գնելու է :

— Սարաֆ Սքրահամ Աղայն Պօլիսն և կեր ձեզ
տեսնել կուզէ , կձանուցանէ սպասաւորը սենեկին դռնէն :

— Եստ ազէկ . թող հրամայէ : Ինչ գործեմապի գիպէ

ուած , կրտէ կնոջը դառնալով . ես ալ զինքը յիշեցի հա-
զիւ ակնթարթ մը եղաւ :

— Բարի լոյս ձեզ Հոռոյի հանրմ , բարի լոյս ձեզ Յա-
կոբ Աղա :

— Հրամայեցէք , Աբրահամ Աղա , երդում կընեմ
որ ես ալ դեռ հիմա ձեր անունը կուտայի :

— Հասցար Քեֆէնոյի «եօլէյի» , շատ ազնիւ էք , Աղա ,
դիտեմ որ զիս բնաւ չէք մոռանար : Ես առտն եղաւ որ
չեմք տեսեր զիրար : Պիտէ՛ք ա՛ , Յակոբ Աղա , մեր բա-
րեկամութիւնը վազեմի է . վա՛վաքեցայ դալ ձեր տեսու-
թիւնն ալ վայելել , այս օրերս այս կողմերը քիչ մը դորձ
ունենալով :

— Բարի եկաք , հազար բարի , Աբրահամ Աղա . սա
կէտիս դանձ որ դտնէի , այսչափ չէի ուրախանար . ձեզի
պէս բարեկամ մը տեսնել դանձե աւելի է ինձի համար :

— Հասցար Քեֆէնոյի «եօլէյի» . Տիկին Հոռոյի ինչպէս որ
էր անանկ կտեսնեմ , բայց դուք Յակոբ Աղա , աւելի նի-
հարցեր էք , հիւանդութենէ նոր ելածի պէս

— Պօլիս ին՞չ կայ ին՞չ չիկայ , կհարցունէ Տ . Հոռոյի
խօսքը կարելով :

— Աղջութիւն , Տիկին . ամիսէ աւելի է որ միայն իմ
գործերով կզբաղիմ . ասոր համար ուրիշ տեղէ լուր չունիմ :

— Ին՞չ գործեր , բա՞րի է :

— Հասցար Ք , շատ բարի , Տիկին , աղջիկս հարս «ել» :

— Օ , կչնորհաւորեմք : Արի տուիր :

— Աստուած կեանք տայ , տիկին , մեր երկրէն մեծ
գերդաստանէ անձի մը : Ես հարուստ ու շատ բարի
մարդ է :

— Բայց , Աբրահամ Աղա , աղջիկդ կարծեմ դեռ
պզտիկ էր թերեւ . . . հիմա տասնութեց տարին մը-
տամ ըլլայ : Բա՞նի տարեկան կայ փեսայդ , Աբրահամ
Աղա :

— Հասցար Բ Էֆէնոթի՛ն Եփէնի՛ն . . . փեսաս շատ ատեն Ս. Ղե. քսանդրիա կեցած ու հոն շատ մեծ գործեր է ըրած հարկ չէ ասել որ ստակին առատ ժամանակները . հիմա շատ դէշ ատենի մէջ կապրինք . ծախք շատ, շահ նուազ Տէրն ողորմի :

— Մա չհասկցայ, կըսէ Տ. Հոռոփ . փեսիդ տարիքը աղջիկանդ տարիքին յարմար է :

— Հասցար Բ, Տիկին, հարսնիքին գիշեր փեսաս անանկ պատուական մատնի մը ըռզակ տուաւ աղջիկանս, որ ասի չի՛նչ մատը դնել, ու սպասուհիին տուաւ որ տանի պահէ :

— Զարմանալի բան, կըսէ Տիկին Հոռոփ, և սակայն աղջիկ մը էն առելի թանկազին զարդերը հարս եղած գիշերը վրան կառնէ :

— Աղաւնիին բնութիւնը չես գիտեր, Տիկին :

Ս. յն չէ ըսելըս, ժամանակին ներդուծեան վրայ կխօսէի այս հարսնիքն ալ վրայ եկաւ . յայտնի է որ ասանկ հարսնի մը կայ չիկայ չգիտեր . ծախք ընելու է . անանկ որ հարսնիքին երկրորդ օրը մտրթը հանուած ոչխարի դարձայ : Աստիլ հին տետրակները խառնել պէտք եղաւ յարեց Ս. բրահամ ժպտելով :

— Ես ալ միտք ունէի, կըսէ Յակոբ, որ այս անգամ Պօլիս գալով ձեզի հետ ալ մասնաւորապէս տեսնուիմ . բայց քանի որ գործի համար այս կողմերը կդանուիք, հոս ալ կրնամք տեսնել գործերնիս : Մեր Զարեհն ինչ կընէ :

— Պարոն Զարեհն հարսնիքէս ութ օր յառաջ տեսայ հարսնիքիս հրաւիրեցի, չեկաւ : Աղէկ է, շատ դբաղեալ ըլլալու է : Ձեր հրամանին համեմատ ամսականները, հասցար Բ Էֆէնոթի՛ն, կանոնաւորապէս կվճարեմ :

— Շնորհակալ եմ : Զարեհ այդ մասին ամենին բան մը զըրած չունի, ըսել է որ դո՛հ է :

— Էֆէնոթի՛ն Եփէնի՛ն, ծառադ ալ ազպիտի կարծիք չանէ,

որովհետև որոշեալ քսան ոսկի ամսականէն զառ որչափ որ ստակ ուզեց որեցի :

— Երանի թէ խնայողութեամբ վարուած ըլլայիր հեռալ, Արրահամ Աղա, որչափի՞ կհասնի պարտերնիս :

— Արեանէ այնպէս որոշի, հոն վերջին անգամ չորս հարիւր ոսկի ուզեց, միտակ երկու հարիւր որեցի : . . . Էջնի . . .

Թուղթ կայ հարիւր ոսկինոց և տասնամէկ թուղթ երկու հարիւրնոց . . . Մեծ բան չէ, ընդ ամենը երկու հազար երեք հարիւր ոսկի հան. սովորներնիս ալ զառ հաշիւ հանեմ, այն գիւրին է, յարեց Արրահամ թղթապահարկինմէջէն կապարեայ գրիչ ու կտոր մը թուղթ հանելով . . .

— Երկու հազար երեք հարիւր ոսկի . . . Արրահամ Յակոբ զարմանքը չկրնայով բռնել :

— Այինչ բան :

— Բաց ի տակա՛ն :

Էջնի . . . տակոսներոց հաշիւը շատ ինքնով որեմնեմ . մեք բարեկամ ենք : Միայն թէ դուք ասեր եիք որ ամսականները մէծիտիյէ վճարեմ . Պարոն Չարեհ հինգ ամսականը ոսկի առաւ . որեմն հարիւր ոսկին ստակի տարբերութիւնը, մէկ ոսկին յետոն փարայ հաշուելով, հարիւրքսանըհինգ զը թեպէտ հիմակու փրացան վախճուն փարայէն է . հող չէ, մեք բարեկամ եմք . . .

— Այս ըսելով Յակոբ Աղային բարեկամը ձեռքի թուղթին գլուխը կնշանակէ հարեհարսանընէն :

— Կաղաչեմ, Արրահամ Աղա, կըսէ Յակոբ, սխալ մունք չըլլայ, այդ դամարը շատ մեծ կերելի ինձի :

— Արեանէ դամար մը թուղթի վրայ միշտ մեծ կերելայ, բայց ինքն ժամանակնիս հովի պէս կերթայ . . . Հարիւր ոսկինոց թուղթին թուականն է 18 յուրիս . ըսել կլինի տասն ամիս ու հինգ օր . չորս ժամ ալ կայ որ չեմ բնորուեր . բարեկամ եմք : Արդ՝ հարիւրին երկու հաշուելով, հանէ երկու հազար վեց զը շքսանըտօթը փարայ . . .

— Բայց, Աբրահամ Աղա, շնորհ ըրէք, ամեն ժամանակ մէկ առ հարիւրին տոկոս կհաշուէինք, ամուսկան հարիւրին երկու տոկոս չըլլար, այդ վաշխ ըսել է :

— Հիմա Պօլիսին բնացած վաշիւր հարիւրին երեք, չորս է . հիմա ստակը նուազնալուն տոկոսները բարձր են, կըսէ Աբրահամ :

Առանց աչքը թուղթին վրայէն վերցունելու, և ամիս, օր, ոսկիի, արծաթի տարբերութիւն, զրշ. փարա ըսելով, և Յակոբին խիտա դիտողութիւններուն որ մէկ կարճ պատասխաններ տալով հաշիւը կշարունակէ ու կըսէ .

— Երկու հազար երեք հարիւր ոսկիին վրայ որ աւելցնեմք տոկոսը, տասն հազար հինգ հարիւր եօթանասունըմէկ զրշ. երսունըհինգ փարա, կանէ ամբողջ երկու հարիւր քառասուն հազար հինգ հարիւր զրշ. երսունըհինգ փարա . լիրան հարիւր զրշ. էն . Այս հաշիւով, կյարէ Աբրահամ, քսակէ կերթայ հինգ հարիւր զուրուշի շախ : որովհետեւ փոխառութիւնները տարբեր թուականով ըլլալով, առջիններուն տոկոսին տոկոսն ալ վրան չդրի, հոգ չէ, բարեկամ եմք :

— Բնականաբար Յակոբ Աղա Աբրահամին բարեկամական ցոյցերուն անտարբեր կկենայ, ձեռքը ճակովն վըրայ դրած պահ մը խորհելէ յետոյ,

— Չարեհին վերջի փոխանակալիրը, կըսէ, ասկէ ճիշդ տասն ամիս առաջի թուականով էր. տասն ամիսի մէջ երկու հազար երեք հարիւր ոսկի փոխ առնէ Չարեհ, բացի ամսականներէն որ կընէ երկու հարիւր ոսկի, արդ տասըն ամիսի միջոցի մէջ տղաս երկու հազար հինգ հարիւր ոսկի ծախք ընէ, այդ նիւթապէս անկարելի կերելի ինծի Աբրահամ Աղա, եթէ կատակ կընէք, այդ տըրիշ :

— Աղա, տղուդ կնիքը կճանչե՞ս, կըսէ Աբրահամ կըրքա կերպով մը, և ձեռքի վարադայի սակիհները բացած դէպ ի Յակոբին նետելով : Արեւն եթէ ինծի հաւատարմութիւն չունիս :

— Այ, ես ձեր արդարութեան վրայ երբէք տարակուսիլ չեմ ուզեր . . . գոնէ ինձի նկատմամբ, վասն զի թողումք բարեկամութիւնը որոյ նշանակութիւնը անըմբռնելի է շահադէտ մարդոց, կարծեմ ժամանակաւ շատ իրաւունք ունեցած եմ ձեր երախտադիտութեան վրայ :

Սոյն միջոցին Յակոբ մեքենայաբար աչքը փոխանակաւ գրերուն վրայ կարտոյունէ, որոյ ծայքը բացուած խը քով կէկնային :

— Մակայն, յարեց Յակոբ, մեկ հասար ձեռքն առնեներլով, ասոր դիրք կարծեմ տարբեր է, այո . . . սա հինգ թուղթերուն գրերը Չարեհինը չին . . . ասոնք աղէկ : Ս.յս ի՞նչ բտել է, չհասկցայ, արդեօք այնչափ դրազեալ է որ պարտասներն ինքիր ձեռօք գրելու ալ ժամանակ չունի :

Յակոբ ակնոցը դրած սկսեր էր գիրերը մանրամասնաբար քննել : Սբրահամ կշիփթի ու թեթեւ կարմրութիւն մը երեսները կգունաւորէ, ոչ ամօթէն, վասն զի վաշխառունները ասանկ բան չեն գիտեր, այս կարգի մարդիկ երբ երկաթ անտուկին գլուխն անցնին դործի սկսելու համար շատ չտեսէր դէմքերնին, խիղճերնին ու սիրտերնին ոսկեղէն թալուկ մը կտրատէ այլ բարկութեանէն, վասն զի կկարծէր որ բարեկամը թուղթերը տեսածին պէս ստակները կը համրէ առանց թեթեւ տարակոյս մը յայտնելու խը ուղղութեան վրայ, ինչպէս որ բրած էր միշտ : Սբրահամ ալ չըկրնար զսպել ինքզինքը, թուղթերը թղթապանակին մէջ կգնէ բտելով :

— Աղէկ հա՞յեցար, Աղա, կնիքն ալ ուրիշներ չըլլայ :

— Կներէք, Սբրահամ Աղայ, բայց մտած եցէք անգամ մը երկու հազար երեք հարիւր ոսկի է այս, չէ թէ փարա :

— Ուրիշ, աղա, այս վարանմունքդ ինձի թշնամանք ասել է, չեմ ընդունիր :

— Մինչդեռ մինչև հիմայ տղուս բրած փոխառութիւնները երկու հարիւր ոսկին անցած չեն, այսչափ դու մար մը

պատր դուք տեսնէք իմ տեղս, չէ՞ք զարմանար :

— Ի՞նչուի՞նչ «եղբայր» ընաւ լո՞ք զարմանայի, երբ Չարեհի պէս շուայլ տղայ մի ունենայի : Տէ՛ վճարէ՞ք, սա կուզեմ գիտնալ :

— Շնորհ ըրէք, Աբրահամ աղա, մինչև որ աղէս ուղղակի տեղեկութիւն չառնեմ այս մասին . . . :

— Ասել կու՞ն որ ես ալ հոս դորժ չունիմ :

— Ա՛ր կերթաք, Աբրահամ աղա :

— Ես գիտեմ երթալիք տեղս, եֆնորի «եղբայր», դու աղէդ տեղեկութիւն առնելու վրայ եղիր :

— Ի՛նչ անկիրթ, ի՛նչ բիրտ մարդ, կըսէ Տիկին Հոռոսի Աբրահամ սրամտութեամբ դուրս ելնելէն յետոյ . եկաւ չեկաւ խօսքը կոշտութեամբ սկսաւ ու կոշտութեամբ աւարտեց :

— Սնհասկանալի բան մը կայ հոս, Տիկին. Պօլիսի մէջ միայն մէկ հողի այնչափ կարճ միջոց երկու հազար երեք հարիւր ոսկի ծախք ընելը անհաւանական է, եթէ ոչ անկարելի . թողումք այս կէտը . չեմ ալ յուսար որ Չարեհ այսպիսի անդթութիւն մը ընէ ինձի . քանզի արդէն գիտէ վիճակինս : Մանաւանդ թուղթերուն մէջ գիրերու տարբերութիւնը տարակոյներ զարթոյց սիրտս : Աբրահամէն ալ ասանկ վատութիւն չեմ յուսար : Աերջապէս Տիկին, անստոյգ վիճակի մէջ մնացի, անպատճառ աղադ տեսնելու եմ այս բանն սողողելու համար :

— Ես անանկ դձուճ ողւոյ տէր մարդէ ամեն վատութիւն կարելի կկարծեմ, չտեսա՞ր, հասցար թ Քորեկոս եմ ըսելով, հարիւրին երկու տոկոս, օր, ժամ, և եթէ չամս չեր, տոկոսի տոկոս անգամ պիտի հաշուէր : Ի՛նչ անշահ մարդ, զգուանք եկաւ վրաս :

— Ինչ որ ալ ըլլայ, ասոր հետեանքը բարի չկրնար ըլլալ, Աբրահամին վերջին շարժմանքը դժբաղդութիւն մը կասկածիլ կուտայ ինձի :

Անհիմն չեղաւ Յակօբին մտատանջութիւնը, քանզի այս տեսակցութեան երկրորդ օրը Քիճարէթի Գաւառ մը ներկայանալով, հետեւեալ օրը դատարան դարուն համար հըրաւիրագիր ստորագրել կուտայ Յակօբին:

Արշեալ ժամուն դատարան կեներկայանայ Յակօբ, ոսկըն արդէն շատ յառաջ եկեր կապանէր:

Ետտ պարզ եղաւ հարցափորձը. վասն զի խնդիրն ինքնին պարզ էր:

— Տղուդ պարտուցը երաշխաւոր ես, կհարցունէ դատաւորը:

— Ա, յո՛ւ:

— Մինչև ցարդ վճարած պարտատուներդ սոյն կնիքը կկրէի՞ն:

— Ա, յո՛ւ, բայց այս անգամ դիրերու տարբերութիւն ըլլալով ժամանակ կուղեմ որ տեսնուիմ հետը:

— Երբ որ ուզես կրնաս տեսնուիլ: Սակայն դու այսչափ ատեն գործ ես ըրած, զիանալու ես որ օրէնքի առջև դիրը կարևորութիւն չունի, միայն սա զրուցէ որ սոյն կնիքը տղուդ կնիքն է:

— Ա, յո՛ւ, բայց . . .

— Գուրս ելէ՛ք կըսէ դատաւորը:

Վասն զի վիճաբանութիւնը երկարելու տեղի չէր մընացած: Հետեւաբար Յակօբ երկու հազար երեք հարիւր ոսկի, բանած տոկոսը և դատատանի ծախք վճարելու կը դատապարտի և ըստօրինի պայմանաժամ կարուի որ մինչև այն ատեն եթէ օրինաց առջև ընդունելի բողոք ունի՛ յայտնէ:

Ի զուր կաշխատին կառավարութիւնները որ անհատական իրաւունքը ըստ արժանւոյն պաշտպանուի, օրէնքներ կհեղինակեն, կանոններ կընեն, իրաւաբանութեան դպրոցներ կբանան, վաստաբաններ կյարուցանեն, բայց չեն յաջողիր ու չպիտի յաջողին. Ի զուր ուղղախոհ ու արդարա-

սէր գառաւորներ կճղենին որ օրէնքն ուղղութեամբ գործադրեն անմեղին իրաւունքը վնաս զերծ պահելու համար, չեն յաջողիրու չպիտի յաջողին : Բանի որ դատելիքնին մարդ է, ոչ թէ հրեշտակ . մարդ սրոյ վտարը ՚ի մանկութենէ ՚ի խնաման չարին է արձանադեալ . այսպիսի անիրաւութիւններ միշտ պիտի բլլան Երկրիս վրայ, և ոչ մէկ հանճարաւոր օրէնք չպիտի կարող բլլայ այսօրինակին գարման ասնիկ :

Արբահամ թէպէտ գառը կիւստիկ, արկացն յաստիկ մտատանջութեան մէջ կճփայ, կարելի է որ Յակոբ արուած պայմանաժամին մէջ տղուն հետ տեանուելով, խարդախութիւն մը երեան հանէ, այն ատեն յուսացած ուղբերթէ ապահոված հազար ոսկի շահը կորուսանելէ դատ, խարդախութեան ու անպատուութեան գատակնիքն ալ կարելի է կրէր : Իսկոյն կվազէ հեռադրով այս յաջողութիւնը Տ. Մարրիկի աւեաելէ յետոյ, այս մասին ալ խորհուրդ կը հարցունէ որմէ իկստ համառօտ պատասխան մը կրնդունի Արբահամ :

« Մի վախնար, գործերը կարգին են, »

(Մարրիք)

Նոյն երկոյն ժամ երկուք կար . Յակոբ կերակուրէ ելած, նստեր կնոյր հետ այն աւուր եղելութիւններուն վերայ կխօսէր, կյուսար որ իրեն դէմ արձակուած վճիռը կարող կրբլայ ջրել, եթէ անիրաւութեան զոհ եղաւ, վրձիւ մը որոյ գործադրութիւնը բոլոր ստացուածքը պիտի վճացներ, և այս տկար ծերութեան մէջ դասն չքաւորութեան պիտի ենթարկէր զինքը, եթէ չկրնար վճիռը ջնջել տալ, կյուսար որ շատ մը վաղեմի պարտականներ վրան զթան, և սրարտքերնուն մէկ մասը վճարեն, և այնչափ ճոխութեամբ սկսած կեանքը թերևս յաջողի վերջացնել գոնէ առանց օրսպահիկի կարօտութիւն քաշելու, երբ դուռը զարկին, ու հեռադրատան թղթատար մը

Նամակ մը բերաւ Յակոբին : Ասինամակն առնելուն պէս ձեռքերը կակտին դողալ . մինիւր կկտրի դէմքը : Աինը որ ասանկ անպատեհ միջոց մը բերած նամակին ինչու համար ըլլալը կը բնութէր մտքին մէջ, ամուսնոյն յուզմունքը կը նշմարէ :

— Ի՞նչ եղար , կըսէ , կերևի որ կաւրուիս , քիչ մը դինի կամ ջուր կուղե՞ս :

— Բան չկայ , կըսէ Յակոբ ինքզինքը ժողովելով , և հանդարտ կերպարանք մը ցուցնելով , յայտնի է որ այսօր շատ մտայոյզ ժամանակ անցուցի . շլլային թեթեւ սարսուռ մը եկաւ վրաս , հիմայ անցաւ :

— Այդ հեռագիրն ու՞րկէց է ,

— Ոչինչ բան , գործի համար , որ հիմայ չեմ կրնար ըսել : Հարկ է որ քանի մը աւուր համար քենէ բաժնուիմ և հիմա :

— Ապաղատիմ , Յակոբ աղա , կըսէ Տ . Հոռոտի լաւալորին ձայնով և թեւերը բացած դէպի ամուսինը երթալով որ ոտք էր ելեր , կաղաչեմ , դրուցէ , ո՞ւր կերթաս . արդե՞օք նոր դժբաղդութիւն մը կայ դիտուս վրայ :

— Դժբաղդութիւն . . . ոչ : Հանդարտէ Տիկին , բան չիկայ , կըսէ Յակոբ բռնադրօսեալ ժպիտով , դիտես որ մինչեւ հիմա բան մը չեմ ըրած որ դու չդիտնաս , կենացս մէջ մէկ անդամ քենէ գաղտնիք մը պիտի պահեմ . և կյուսամ որ զայն թափանցելու համար ի դուր չպիտի հողնեցընես դիս : Հարկ է որ հիմա ճամբայ ելնեմ :

Յակոբին լուրջ խօսուածքն ազդեցութիւն կընէ կողակիցին վրայ . սակայն ասի դարձեալ ինքզինքը չկրնալով զսպել ,

— Բայց ո՞ւր , գոնէ այսչափն ըսէ , կաղաղակէ :

— Աղաչեմ , Տիկին , կըսէ Յակոբ : Երկու , առ առուելն երեք օր , անկէ յետոյ հոս եմ :

Չարմանալի կանխազգացութեամբ որոյ ինչ բնական

պատճառի արդիւնք ըլլալն անբացատրելի է մնացած մինչեւ այսօր ,

— Ա՛հ , կազաղակէ Տ . Հոռով , սոսկալի թալուկ մը դէմքին վրայ . վախնամ Զարեհս ձեռքէս դնաց , իմ անմեղ զաւակս

Եւ կիյնայ կմարի երբ Յակոբ առանց ուրիշ խօսք ընելու , կամ լաւ եւ է ըսել , կարենալ ընելու , վասն զի սիրտն այնչափ յուզեալ կերելէր , որ վանկ մը չպիտի կարենար բերնէն հանել առանց աչերուն արտասուքը զսպելու : Հրաժարական ողոյնը Տ . Հոռովին տալէն յետոյ , բերել տուած ձին նստած ու արդէն անյայտ էր եղած քաղաքէն , առանց մարդ գիտնալու թէ ո՞ր կերթայ եւ ինչու համար :

Հիմա զարմանալի պիտի թուի ընթերցողին Յակոբայ յանկարծական ճամբորդութիւնը եւ դիշեր ատեն . քանզի ժամը երեքն էր երբ ձի հեծաւ . սակայն աւելի զարմանալին սա է որ հետեւեալ առաւօտուն անոր անյայտ ըլլալուն լուրը նախ եւ յաւաջ Աբրահամ էր առեր ե նա եղաւ որ տարածեց զայն բոլոր քաղաքին մէջ : Առանց ժամանակ կորուսանելու կաղերսադրէ Աբրահամ իշխանութեան , զՅակոբ իբրև փախստական ներկայացնելով , վասն զի ոչ ոք զիտեր անոր ուր երթալը , ե բարձրագոյն հրամանաւ կառավարութիւնը կոխել կուտայ Յակոբայ սունը . թշուառ կինը դուրս կհանեն , սնտուկ , պահարան , սենեակներուն ու տան դռները կկնքուին պաշտօնապէս իբրև գրաւեալ պարտատիրոջմէն : Աբրահամ քանի մը օր ալ Պրուսա կենալէ յետոյ Պօտոս Աղայն կկարօտնայ եւ առանց առնելիքին վճարման սպասելու երկու հազար չորս հարիւր ոսկի տակոսով մեկտեղ պահանջքն հարիւրին հինգ կղեղէ , ե երեւելի սեղանաւորէ մը ստակներն առնելով , ոսկի դրամք երկու հազար երկու հարիւր ութսուն Օսմանեան լիրա համարովէ պայուսակին մէջ ե կպատրաստուի Պօլիս դառնալ :

արչարարյաւ, որոնք լեան անտեղ մշտապես լուսին հեղեղներովը կտրորուէին : Նայն միջոցին զանազան թուշոց արտորնօք երթեկեալ թիւեր, ճառարուք, քաղցրաշունչ վեփուքն իւր անհանդարտ ընթացքն սակաւ ինչ սասակացնելով տեղ տեղ բուսած վայրենի թուփերուն վրայի ցօղային մարդարիաները թափելէ և ճամբուն վրայ հանդիպած ծառոց տերեւներուն մէջ խաղալէն արտադրած թէպէտ աններդաշնակ սակայն սրտազրեցիկ սոյլը, շուրջանակի որ մէկ ազարակներու վաղադարձոց արազդներուն խօսիլը սպաններուն մայելը, ամեն բան վերջապէս, մարդոյս սրտին ամեն մէկ թերերը կթուփուէին, և անբայազրելի յափրշտակութեան մէջ կը թողէին. անուշիկ անմահութիւն կը բուրէ ամեն բան. բայց այնպիսի տեսարաններէ զբացւելու տրամադիր վտարուկ սիրտ կրելու երանութիւնը ամենուն շնորհած չէ բնութիւնը :

Մեր Հաճի Արրահամ Աղայն աչքին առջև ծաւալած ահեղահատոր գրքին մէջ աստուածային անսահման զօրութիւն կարգալով, միտքը բարձր խորհուրդներով զբաղեցնելու, և անյագ ընչարարոցութեանը սահման դնելու տեղ, առանց իսկ օրինակ առնելու իսլամ Հասանէն սրտոնը հեղ մը արարելէն « գոհութիւն Տեսուն, Արարչին տիեզերաց » կըսէր, միտքը դրամական հաշիւներով էր զբաղեցուցած :

— Ի՛նչ յաջողութիւն. կըսէ ինքիւրեն. հազար ոսկի շահ ութ աւուր մէջ... հինգ հարիւր հարսնիքի ծախք վախճաուն ոսկի մ'ալ Արթիւնին տալով երկիրը ճամբելու է, մեղք, վախճաուն ոսկի, այս որչափ ստակ, տանեմք իչ մի բան կրնամ կտորել. շատ ալ հոս վար դնելու չիդար. անպիտանը երթալով համարձակութիւնը շուել ցընէ, և կուր տես որ ստակնալ ին՞չպէս կտրեմ. հասպա երէ Պօտոս Աղային քով « այս ստակը ես տանս սարկի մէջ եմ վաստկեր, ցերեկները անօթի պահեցիր, ճմուռ

ները մտեցոյ քսելով բերնին եկածը թող տա՛յ, ստակի մը կըլլայ պատիւս փեսիս քով: Եսա անիրաւ, ապերախտ տղայ է Արթինը, վարի ճակատի չէ՞ մի, ամենքն ալ առնանկ կըլլան: Իսկիւ տար երթալուս պէս ճամբեմ: Ինծի կմնայ չորս հարիւր քառսուն ոսկի, այս ալ տոկոսի կուտամ, դրամագլուխս շառցաւ ըսել է, ասկէ յետոյ հարիւրին երեքի պիտի բարձրացնեմ տոկոսը, ուզողը թող առնէ: Բայց այս հարստութիւնը ո՞րու կը պարտիմ Տ. Մարբիկի՞ն, ոչ, նա այս մասին միայն դորձիք եղաւ, այս շահը ինձի առաջարկուեցաւ հարսնիքին շարժուն, և ձեռք բերի Պօտոս Աղայն տունս ոտք կտիւած օրը գրեթէ, ըսել կըլլայ որ փեսիս ոտքին բարդաւորութիւն է, փեսաս ալ արդէն վեց հազար ոսկիի տէր: Այլիկս շատ աղէկ տեղ ինկաւ. արդէ՞ օք որչափ շնորհակալ է ինձ: Ի՞նչ օգուտ որ այս ամենը բան մը ըսել չէ. հարուստնալու ճամբան նայելու եմ: . . . Աեցիր, միտքս բան մ'ինկաւ. Արթին երկիր պիտի երթայ, ըսել է որ տարին տասը ոսկի ասկէ պիտի շահիմ: Մարիամ մինակ Աղանիին կծառայէ, պէտք է որ ամսականը փեսաս տայ. տարին տասնևութ ոսկի ալ ասկէ շահ, կընէ քսանկութ: Երեք հարիւր յիսուն զուրուշ խոհարարի ամսական ի՞նչ ըսել է. յիսուն ալ ասկէ կկտրեմ, որ շնորհի, կճամբեմ. կընէ տարին վեց ոսկի ալ այս, եռսունըչորս: Տան ծախքերէս հարիւրին քառսուն ալ ի հարկէ կըլեզլուի, քանի որ Պօտոս Աղայն ալ ծախք ո՞ր մէ, տարին երկու հարիւր ոսկի ալ ասկէ կշահիմ, կընէ երկու հարիւր եռեւսունըչորս: Ես այս խնայողութիւնը չորս հարիւր ոսկիի կհասցնեմ, օրինակի համար, Արթին որ երթայ, լրթեքս ուշ կհանեմ, կոչիկներս շատ կհագնիմ եայլն եայլն: Արդ տասը տարին չորս հազար ոսկեոյ խնայողութիւն ըսել է: Եւ քանի որ . . .

— Բիչ մը կենալու շնորհ կընէ՞ք. Աղա, կըսէ յուս

նակա՛ն արտասանութեամբ ձիաւոր մը յանկարծ գէմն ել-
նելով, և ետօթ հարուածեաց ըէվթովէրի մը խողովակը գէպի
մեր խնայագեատին ուղղելով :

Հաճի Արբահամ Աղա լի սոսկումով ձիին ասնձը ետ
կրպշէ և գլուխը ետին կդարցնէ պօռալով,

— Հասա՛ն, ին՞չ կուզէ ինէ այս մարդը :

Մակայն ետին փոխանակ Հասանի ուրիշ երեք ձիա-
ւոր ալ կտեսնէ գժոխագէ՛մ, և սպառազէն, թէ ասոնց
և թէ մեր ճանսպարհորդին ճամբան կտրող ձիաւորին
կերպարանքին վրայ ամենին նշան մը չկար իրեն նպաս-
տաւոր : Իսկ Հասան, որչափ քաջ այնչափ խոհեմ, պատ-
շած չէր դատած անձն ի կըշիռ դնել այս չորս լեռնաշըր-
ջիկ ասպետներուն գէ՛մ, ինչպէս որ Հաճի Արբահամ
ինքնին, եթէ բըրեբոբէն տեսնէ ըլլար, համանման պարա-
զայի մը մէջ անոր համար գլխէն թել մը մազ չպիտի զո-
հէր (եթէ ունենար) : Մաշափ միայն կնշմարէ Արբահամ
որ հարիւր քայլ հեռու հասան, մկրատ ի կուշտ երիվա-
րին, գէպ հարկուն փոշեղէն ամպ մը կհասնէր :

Հաճի Արբահամ ասոր վրայ ալ ըտլոտլին շփթած,

— Ի՞նչ կուզես ինէ, ինչո՞ւ կենամ, կրտէ գիմացկնին
սակայն առանց երեսը նայելու, վասն զի մարդուն արիւ-
նացայտ նայուածքը կարող էր խեղճ ծերուկին իջուածք
բերել :

— Աներեք համարձակութիւնս, Աղա, մեր գնդապե-
տին կէզմանէ կուդանք ձեր մեծութիւնը իրեն քով հրա-
ւիրելու, շատ կիսափաթի ձեզի հետ պահ մը տեսնուիլ :

— Ձեր գնդապետը, կրտէ Արբահամ, մարդուն քա-
ղաքավար կերպերուն վրայ քիչ մը հանդարտելով, բայց
եւ ձեր գնդապետը չեմ՝ ճանչեր :

— Նա ձեր մեծութիւնը ճանչելու պատիւն ունի :

— Ի՞նչ նա զիս կճանչէ՞ մի . . . բարեկամ, երբ ու՛մ
կընեմ որ կսխալիս . թող որ ճամբաս երթամ :

— Որի խօսելու պատիւն ունենալս շատ աղէկ զխտեմ , կըսէ մարդը . եթէ չէմ սխալիր , դուք էք Սբրահամ Աղայն , որ ի Պրուսա դատ մը ունեցար և հիմա Պօլիս կը գառնար :

— Սբրահամ Աղայն ես եմ մի' . . . կըսէ միտքէն մեր ճանապարհորդը , անունս ալ զիտէ եղեր այս անիծից արմատը : Տեսնեմ կրնամ խարելով ձեռքէն ազատիլ :

— Բայց , կըսէ մարդուն գառնալով , հիմա ստիպողական դործեր ունիմ , ուշ կմնամ . բարեւ ըրէք ձեր զնդապետին , կխոստանամ դալ քսնի մը օրէն յատկապէս տեսնուիլ հետը :

Անկարելի բան . մեր զնդապետը վաղը ճամբորդ է :

Խեղճ մարդուն այս նրբամտութիւնն ալ չյաջողելով , կշուարի կմնայ ու ինքիբն կխորհի .

— Պիմադրութիւն ընել երկար դործ պիտի ըլլայ . դէշ մարդիկ ալ ըլլալու չեն , եթէ ըլլային , փոխանակ զիս տեսնելու վրայի ունեցածս չունեցածս տանելու էին , հապա քաղաքավար ու բարեբարոյ խօսուածքը . ո՞վ զիտէ , թերևս Պօտոս Աղա փեօիս բաղդաւորութենէն այս գլխուածէն ալ նոր հարստութիւն մը ալ ձեռք ձգեմ . յայտնի է որ այս օրերս բաղդա բացուեր է . դուցէ ասոնց զնդապետն անունս լսեր ու կուզէ որ իմ ձեռքս դրամական դործառնութիւն մը ընել : Ինչ ըլլայ ըլլայ . կերթամ . բայց Պօտոս Աղային ճակատոր քիչ մը ուշ պիտի պահնեմ եղեր հոգ չէ , ուշ ըլլայ , անոյշ ըլլայ :

Այսպէս խորհելով Սբրահամ ձախ ուսին վրայէն դադունի նայուածք մը կնետէ գէպի կրնակը . և կտեսնէ որ միս երեք ձիաւորները ընկողմէրնին տեղը տեղաւորեր և առջի պէս սարաւանական կերպարանք չունին , այս բանէն քիչ մ'ալ կհանգարտի սիրար :

— Երթանք , կըսէ զիմացինին , ձեր զնդապետը հեռո՞ն կրնակի :

— Աչ Տէրիմ, սա տեղ, գրեթէ երեք ժամու ճամօայ :
Ղամբայ կելնեն : Աբրահամ ասպետին « սա տեղ »
ըսելով մատով ցոյց տուած վտղմը ոչ քաղաք կտեսնէ, ոչ
զիւղ, և ոչ որ և է մարդկային բնակութեան շաւիղ . ընդար-
ձակ դաշտ մը, տեղ տեղ քանի մը բլուր . աւելի հեռուն
լեռ մը, ասոր ստորոտը մարտիլապատ տեղ մը կնշմարէ,
որ անտառ ըլլալու էր : Երկար ատեն ելթալէ յետոյ վեր-
ջապէս անտառի մը սահմանը կհասնին : Հետը բարեկամա-
ցոյ ասպետը յարդական եղանակաւ քովը մտնենալով,
կըսէ որ անկէ անդին իրենց գնդապետին իրաւասութեան
դտնուած երկիրներն են . և քանի որ ինքն ալ հոն ոտք պի-
տի կոխէ, հարկ կըլլայ որ անոր օրինաց համակերպի . և
թող տայ որ կապեն աչքերն : Աբրահամ առանց դժուա-
րութիւն ցոյց տալու կթողու որ ընեն ուղածնին, և ինք-
զինքը նախախնամութեան յանձնելով կոյր զկուրայն կեր-
թայ մարդուն ետեւէն, որ Աբրահամին ձիուն սանձը իրն-
նին թամբին կկապէ :

— Երբ աչքերը կբազեն, դարեւոր կաղնիի մը առջև կը
դանէ ինքզինքը Աբրահամ . այս կաղնին այնչափ ծեր էր
որ կոճղին մէջ պարպուեր ու խուռը բոլորակաձև սենեա-
կի մը կերպարանք էր առեր : Խուռին առջև մեծամեծ
ծառերու ճիւղեր իրարու պատատուեր արևին կիպիչ ճա-
ռապայթներուն դէմ կամարաձև հովանի մը կձևայնէին .
թէպէտ արևը դիւրաւ մուտ դանելու չէր այս անտառին
մէջ . հոն շատ խիտ էին ծառերը, անանկ որ լոյսն այնչափ
կրնար թափանցել որչափ հին շէնքերու առաստաղները
դտնուած ապակի պատուհաններէն :

Խուռին մէջ տեսակ մը աթուակի վրայ մարդ մը նրա-
տեր էր երսունուհինգ քառասուն տարեկան կարճահասակ
դեղին մազերով, ընչայքը զարդարուն, գլուխը նոր ֆէս մը
կզմիր ձեով . կուրծքը բաց մետաքսեայ բաճկոնին տակէն
կերեւէր չեղտաւոր ճերմակ ու բուր ևզած շապիկը, որոյ վը-

բայ կրկայլէր ոսկի ժամացոյցին ադամանդադարժ ոսկի շղթայն : Վրայէն սալխամարգոն էր հաղեր կարճ ունեղ, վիզին կողմը պիստակ և ձեռք շալիկին սուտ օձիքը սպիտակ ծիր մը կպատէր . թեւերն ալ նոյն ձեռք թեւերն սոյնպէս բուսկապիտակ , և դոհար սքուռուած ոսկի ճարմանդներով կոճկը ուած : Սալխամարգոն որ կարճ էր ըսի , կիսով չափ բաց կը թողուր մեռաքսեղէն Բարսապուլուս երկններանդ դօտին , որ վայելչապէս կապուած էր սալխամարգոյն պէս խահուէի դոյնով ընտիր ասուի շալխին վրայ , սարքերը բարձր մտրթով նոր դոյնի այս ամեն զարդերուն վրայ աւելցուր ալ ձեռքին սքուռուտիկ մատը կրած թանկագին մատնին , ուսընդանու թկապած ժողաւենին ծայրի անգլխական եօթ հարուածեաց բէվօլվէրը , աչքիդ առջև կանենաս , ընթերցող , Արքահամին առաջնորդող ձիաւորաց դնդապետը , ըստ ամենայնի կատարեալ քաւարեայ մը :

Առաջնորդը կիշնէ ձիէն և խոնարհելով քանի մը խօսք կրնէ յունարէն լեզուով դնդապետին . ափ խկոյն տեղէն կիշնէ և դոհ գէմքով դիմաւորելով իւր հիւրը թեւ կմտնէ և աթոռակի վրայ իւր քով նստեցնելով կըսէ ,

— Եստ ուրախ եմ , Արքահամ Աղա , որ հրաւերս չըմերժեցիք :

Արքահամ այս մարդուն գէմքին վրայ երկիւղ ազդող բան չտեսնէր , աչքերէն զատ սրոյ բիւրերը իրենց շրջանակին մէջ անհաստատ նայուածքով մը անդադար կէտնային : Սակայն խոռովին դիմացը , հինգ կանգունի չափ հեռու , սղահակ սպասող երկու հրացանակիրներուն գէպ իյալ կտարած բարձրագիր Փէսերնուն , երկու հարիւր քիւրճի ծանրութեամբ ծոպքերնուն , և մտատանջ գէմքով մէյ մը յալ մէյ մը յահեակ դիտելուն , շատ բան հասկցաւ Արքահամ . այնպէս որ եթէ իւր կամօքը եկած ըլլար , գլխաւուն տարակոյս չունէր , քանի որ բազմը զինքը հասէր բերնը , աւանց իւր կամօքը հարցնելու , ինքիրեն կխոս-

տանար որ խոհեմութիւնը չթողու ձեռքէ :

— Աստուած կեանք տայ, Քիբիէ կըսէ Աբրահամ, ձեր մեծութիւնը ճանչելու պատիւը չունիմ, բայց քանի որ դու ուզեր էիք, . . . կյուսամ որ ծառայիդ հրաման կուտաք շուտ երթալու, նոր հարսնիք ըրի քանի որ է տունը չեմ, փեսաս շուտ կարօտցայ . . .

Աբրահամ այս կցկառուր խօսքերով սիրտին անհանգըստութիւնը կմտանէր, դնդապեան ալ հասկցաւ և ժպտելով,

— Ո՛չ, ըսաւ. չըլլար այս տաքին թող չեմ տար որ երթաս, ժամ հինգուկէս. հիմա կերակուրնիս պատրաստ է, կուտեմք, գործերնիս կտեսնեմք, քիչ մ'ալ կըբօսնուեմք այսօր հանդէս ունիմ ի պատիւ քեզի ապա թէ երեկոյին ժամ տասնումէկին ատենները հետդ երկու մարդ կուտամ ու անվտանգ քաղաք կդառնաս :

Գնդապեան իւր մարդոց դառնալով քանի մը յունարէն բառ կըսէ, իսկոյն վրան նստած տեսակէն ախտուակ մը կը բերէ մէկը, միւսը պղինձ սեղան մը վրան կընէ. երրորդ մ'ալ որ խոհարարն ըլլալու էր, փայտէ շամփրի վրայ խորված դառն մը կըբերէ սեղանին վրայ, ուր գինիի շիշեր, չոր ձուկ և խաշած հաւկիթ առատօրէն շարեր էին արդէն : Մայիսի մէջ ասանկ գեղանկար տեղ մը հաց ուտելու համար քաղաքացի գերդաստաններ կառքեր կվարձեն, շատ դժուարութիւններ կկրեն, շատ ծախք կընեն. Աբրահամին այս անտառային խնջոյքը ճրի էր, ստամոքսն ալ արդէն շատոնց ձայն էր տուեր, ուստի ախորժակով պիտի ուտեր եթէ սիրաը հանդարտ ըլլար : Սեղանին վրայ անուղղակի խօսքեր կբանայ դինքն ասանկ պատուով հիւրընկալողին ով ըլլայը գիտնալու համար.

— Չեմ գիտեր թէ նուաստս ձեր մեծութեան ի՞նչ ծառայութիւն կընամ ընել :

— Իմացայ որ, կըսէ դնդապետը, հետեւնիդ երկու հազար երկու հարիւր ութսուն օսմանեան լիրա դրամ ունիք :

Աբրահամ կայրայի , և նոր բերանն առած միտի մեծ կտոր մը դեռ չծամած ըլլալը մտնալով , կուլ կուտայ : Հիմա ի՞նչ ընէ . ուրանալ չըլլար . վասն զի այն ստակը պարունակող պայուսակը ձիուն թամբին վրայ էր . և քանի որ այս մարդը իւր անունը քովն ունեցած գրամին տեսակըն ու քանակութիւնը դիտէր , ստակին ուր ըլլալըդ իտնալու համար ի հարկէ դժուարութիւն պիտի չկրէր : Միտին կտորը բռնի կուլ տալուն , աչքէն վազած քանի մը կաթիլ արտասուքը թաշկինակովը սրբելէ յետոյ ,

— Այո՛ , կբսէ , բայց ձեր մեծ ութիւնը գիտնալու է որ այն ստակներն իմա չեն :

Գնդապետն առաջին անգամ ըլլալով , աչքին բիւրր յոհ մը Աբրահամին վրայ ուղղելէ յետոյ , որով բսել կուզէր ,

— Այդչափ դիւրահաւան մարդ մի կարծեր դիմայինդ , վրայ կրերէ ,

— Կհատկնամ , Աբրահամ Աղա , անշուշտ բսել կուզես որ աշխարհիս հարստութիւնը կանուխ կամ ուշ աշխարհիս պիտի մնայ . մարդս մերկ եկաւ մերկ պիտի երթայ : Ես ալ համազուեցայ այդ իմաստասիրական սկզբունքին ճշմարտութեանը ուստի որոշեցի որ ալ քաջուիմ գործէ :

— Ձեր մեծութիւն ինչ գործ կընէ , կնեքէք հետաքրքրութեանս , հարցուց Հաճի Աբրահամ :

— Հը , կընէ գնդապետը քիթին տակէն խնդալով , ինչպէ՞ս հատկցնեմ : Ձեր քաղաքացւոցդ լեզուաւ խօսելով , մինչև երէկի աւուր երեկոյին ըրած գործերնիս . . . աւազակութիւն էր , բայց չմտնաք ըսածս քաղաքացւոց գործածած բառն է այս :

Աբրահամ նստած աթոռակին վրայ ետ ետ կերթայ . արքայութիւնը սուրբ չմնար որ իրեն պաշտպանութեան չը կանչէ և բոլորովին շիտթած ձեռքին ռուր գլուխէն կսկի խածնել : Բայց քիչ մը կհանդարտի , յիշելով որ երէկի երեկոյն ի վեր հրաժարեր է այս պաշտօնէն :

— Չես գիտեր, Ս.բրահամ Աղա, յարեց զնդապետը որչափ անիրաւ են քաղաքացիք որ այսպիսի թշնամանիչ անուն մը կուտան մեր պաշտօնին : Մեր ըրածը պարզապէս բաղդախնդրութիւն է . դուք քաղաքներու մէջ կը բնութեք ձեր բաղդը, մեք լեռներու մէջ, ուստի գործերնիս և նպատակնիս միևնոյն, միայն տեղերնիս տարբեր . դուք զանազան նենդ ու դաւերով ձեզի կը քաշէք ուրիշին ստակը, իսկ մեք կուզեմք, թէ որ չտան, ձեռքովնիս կառնեմք . վասն զի մեք նենդութենէ չեմք ախորժիր . անկեզժ ու բարի մարդիկ եմք : Կտեսնէք որ այս ամեն վարմունքներնուս մէջ կատարեալ զուգակշռութիւն ունիմք քաղաքաբնակ առաջիններսն հետ : Սակայն գիտէ՞ք Ս.բրահամ Աղա, որչափ գերազանց է մեր դրամագլուխը ձերինէն . զոր օրինակ հրամանքդ դրամ շահելու համար դրամ դրեր ես, որ եթէ կորսուի, անդարմանելի կորուստ չէ . իսկ մեք կեանքերնիս եմք դրեր, բարեկամ, կեանքերնիս որ անհամեմատ գերազանցութիւն սենի դրամէն : Ի՞նչ պատիժ կուտայ քեզի կառավարութիւնը երբ դու ազքատիկ ընտանեաց հացի փարայ փոխ տաս և հարկւրին չորս, հինգ վաչխ առնես . ժողովրդեան կարօտ մասին կարօտութիւնն աւելցընես, մոխիրի վրայ նստեցնես : Ոչինչ : Իսկ մեք, ո՛հ, բարեկամ, որչափ տարբեր, ոստիկանութիւնը կատակ չընէր մեզի հետ . անգամ մը որ ձեռք իյնամք, ինքզինքնիս Կիպրոսի անմատչելի բերդերը կդանեմք, եթէ ոչ Պօլսոյ կամուրջին գլուխը, տաքերնիս գետնէն կտրած :

Գնդապետն այս խօսքերը ըրած ատեն Ս.բրահամին երեսին վրայ երևցած սոսկումը նկարագրել անհնար է, սաչափ միայն կրնամ ըսել որ խեղճ մարդուն երեսն ու շքրթունքը մէյ մը կկարմրին, մէյ մը կկանանչան, մէյ մը կը դեղնին :

Կեննեն կերակուրէն, սուրճ կուդայ ու զնդապետը կաթիլ մը քաշելէ յետոյ, խօսքը շարունակելով,

Արդ, կրօն, անշուշտ համոզուեցար, սիրելիս, թէ որչափ անիրաւ են քաղաքացիք երբ աւաղակ կանուանին մեղի: Մեք միայն հարուստներուն ստակը կառնեմք, այն ալ զանոնք սնանկացնելու չափ չէ. սակայն աղքատներուն միշտ կը թամբ, եթէ չես հաւտար, առջի հանդիպած գիւղիդ աղքատ բնակչացը հարցուր զիս, պիտի տեսնես որ միշտ կօրհնեն Լէֆթեր:

Այս սոսկալի անունը լսելուն պէս Աբրահամ որ նոյն կէտին սուրճին դաւաթը շրթունքին էր մօտեցուցեր, մէջը պարունակուած ամբողջ հեղուկը բռնն և ակամայ շնչառութեամբ ներս քաշելով կուլ կուտայ, և մէկ կողմանէ սուրճին տաքութենէն բերանն ու կոկորդը բռնկած, միւս կողմանէ ալ ոտքը ձեռքը դող ելած, ետ ետ քաշուելով,

— Գու, գու.բ . . . լէ . . . Լէֆթերն էք, կըսէ խղուկ ձայնով մը Աբրահամ:

— Նոյն ինքն, կպատասխանէ զնդապետը, բայց Աբրահամ Աղա, կարծեմ բան մը կըլլաս:

— Ոչ, սուրճը շատ տաք էր. բերանս էրեցաւ:

Սակայն մեր բարեկը միայն բերանն այրած ըլլալու կերպարանք չունէր. տենդը բռնածի պէս կը ողոր:

— Կըսէի որ, Աբրահամ Աղա, երկու հազար երկու հարիւր ութսուն օտմանեան ոսկի ունիք հետերնիդ . . . Աբրահամ Աղա, քիչ մը ջուր կուզե՞ս:

— Ձէ, բան չունիմ, անցաւ:

— Ես ալ այս օրերս Ամերիգա ճամբորդելու միտք ունենալովս, կուզէի որ քովս գտնուած արժէթ ուղթերուս մեկ մասը դրամի միոխեմ: Աւտի սա կաղաչեմ քեզի, սիրելիս, որ այս ծառայութիւն ինծի ընես. ամեն մէկ ոսկիէն հինգ դուրուշ շահ կ'առնեմ քեզի, արժէթ ուղթը օրուան գինով հաշուելով: Ի՞նչ կըսէք, Աբրահամ Աղա, չէք մերժեր կյուսամ. մանաւանդ որ ոսկին ծանրութիւն է:

Գնդապետին այս վերջին խօսքերը լսելքը գլուխը կը-

բերեն Սրբահամին , որ մաղ մնաց գղայութիւնը կտրու , սսծ կրնակին վրայ պիտի լինար . և պահ մը շունչ առնելէ յետոյ ,

— Փառայ եմ , Տէր իմ , կրտէ մեծկակ թէմէլլահ մը ընելով , ձեր հրամանը կատարելու պատրաստ եմ :

Լէֆթէր յունարէն քանի մը խօսք կրտէ մարդոցմէ մեկուն , ասի անյայտ կ'ըլլայ և քանի մը վայրկեան յետոյ մեծ ծրարով մը կուգայ , կրանայ զայն , մէջը քսան հաղար լիւրայի արժողութեամբ դժնսօլիտէ կար : Երաղիը մը կհասնէ Լէֆթէր , և պահ մը աչքը վրջան պատոյունելէ յետոյ ,

— Երէկի փայտն քառասուննվեց , կրտէ Սրբահամին դառնալով , ես հինգէն կը հաշուեմ , թերեւս զինը կտարի մինչև որ ծախ հանես , չեմ ուզեր որ վնասուիս իմ երեսէս : Սրբ երկու հաղար երկու հարիւր ութսուն ոսկին հարիւրին հինգ շահով , և արժէթուղթը քառասուն հինգէն հաշուելով , կրնէ հինգ հաղար երեք հարիւր տասնեկնը դժնսօլիտէ : ասաւասիկ հատ մ'ալ աւելի , հոգ չէ , մեք բարեկամ եմք :

Սրբահամ հոգի առած պայուսակը կրանայ , կհամրէ ոսկիները , և թուղթերը տեղաւորելով կակի խորհիւ ինքիրեն :

— Սրդեօք կատակ չե՞ այս մարդուն ըրածը , աւազակներն ամեն մարդ հանւեցնեն , սակայն ինէ ստակ մը շառնելէ յետոյ վրայ ալ տան , թէպէտ Լէֆթէր անունը լսած կէտիս լեղիս պատուեցաւ . հարկաւ այսչափն ալ պիտի ըլլայ . ստակ շահիլը դիւրին՝ բան է : Ուտել , խմել , հարիւր տասնուչորս ոսկի ալ ակուայի վարձք առնել : Սատուամ՝ իմ , ինչ յաջողութիւն : Ո՛վ սիրելիդ իմ Պօտոս Սաղա , քեզի կպարտիմ այս ամեն քան . տունս ոտք կտխած օրէդ ի վեր ամեն դօրծս յաջող կերթայ , ի՛նչ բաղդաւոր ոտք ունիս եղեր . ուր էր հոս ըլլայիր ու անդամ՝ մը այդ երիտասարդ ճակտիդ վրայէն համբոյր մը քաղէի : Թէպէտ

չստը դնաց , քիչը մնաց . կուղամ կոր , Պօտոս Աղա , կու-
ղամ կոր :

Գնդապետը նոյն միջոցին սնտուկ մը կրամ այ , և առած
սակիները մէջը կ'ընու : Աբրահամին աչքերը կըլանան երբ
կնայի այն սնտուկին մէջ . մէկ աչքը լեցուն սակի . միւսը
արծաթ գրամներ . բաղում թանկագին գոհարներ ու մար-
դարիսներ :

— Չարմանալի չէ , կրտէ , Աբրահամ ինքիբեն , որ իմ
սակիներու աչք չունեցաւ . այսչափ հարստութիւն ունե-
նալէն յետոյ թող յաւիտեան գործ չընէ :

Ժամը տասը կերթար , գնդապետը հրաման կընէ , ճի
կրերեն , Աբրահամին աչքերը դարձեալ կ'կապեն , և քը-
սանի չափ հեծեալներով ամենքն ալ սպառաղէն , ճամբայ
կեննեն նոյն օրն ի պատիւ Աբրահամ Աղային տրուելիք
հանդէսին տեղը երթալու համար : Մէկ կողմանէ մեր բա-
րեկամը գոհ էր աչքերը կապուած ըլլալուն , վասն զի ա-
մեն սնդամ որ զանոնք անխորհրդաբար գնդապետին մար-
դոցվրայ դարձուցեր էր , մաղերը վրան փուշ փուշ եղեր էին :

ԺԳ.

Ժամի չափ երթալէ յետոյ երբ Աբրահամ Աղային աչ-
քերը կ'քակեն , ինքզինքը բաւական բարձր սարի մը վրայ
կ'դնէ : Գնդապետին քով երկու հոգի մնացեր , միւսնե-
րը անյայտ եղեր էին : Գորդ մը կտարածեն դալարին վրայ
և լէֆթերի հետ քովէքով կնստին . երկու մարդիկը , քը-

ասն քայլի չափ հեռու , սլահակ կիենան : Արբահամ կրս-
կրսի եղած տեղը զննել . սարին ստորտար լայն արահետ մը
կար . դիմացի եզերքը ուղիղ գիծի մը վրայ բարձր տպա-
ուածներով սահմանուած . այս արահետին երկու կողմերը
երթալով կնեղնան , և երկու ծայրերը մէյմէկ նեղ անձք
կային կիրճի նման , յորմէ դուրս ելնողը ընդարձակ դաշ-
տի մը մէջ կգտնար ինքզինքը :

Նստեցնուն կէս ժամ յետոյ գեղացի արանց ու կանանց
բազմութիւն մը արևելեան կողմի կիրճէն ներս դրոհ կա-
տան , ոմանք ձիաւոր , ոմանք աւանակ հեծած , շատերն
ալ հետիտտ , այս ճամբորդներն ուտեստի ու հազուատի
վերարբերեալ վաճառք ունէին հետերնին . ոմանք ալ կե-
րեէին որ տնական պէտքեր էին հոգացեր , վասն զի կըր-
նակնին տոպրակներ ունէին բրինձ , ալիւր , շաքար խահուէ
և այլ ասոնց նման պարէններով լեցան : Մէջերնին քանի
մը խօսք հասկցող մարդիկ դիմացը բերել կուտայ զնդա-
պետը , և հրաման կընէ որ սակաւ ինչ հողնութիւն առ-
նեն :

Արդէն միւս պէտք եղած հրամաններն արուած են ե-
ղեր . ժողովուրդին մէջ գտնուած քանի մը նուագածուք
խումբ կկազմեն , և կսկսին զանազան եղանակներ հնչեցը-
նել երգախառն : Երգը կգաղբի , խումբ մը գեղջկուհիներ
թեթեի կուտան և նուագարաններուն հնչեցուցած եղա-
նակին համեմատ կսկսին սլարել ,

Էյ զէյնօ , զէյնօ զէյնօ ,

Տաղլար տիւմանտըր զէյնօ :

Գնդապետն ու բարեկամը Հանի Արբահամ որոյ ի
պատիւ այս պարահանդէսը կկատարուէր , իրարու կենաց
օգիտ գաւաթներ կսլարպեն հետոհետէ : Ժամ տասնեւե-
րուքը շատ անցեր էր երբ Աէֆթէրի հրամանաւ կգաղբի
հանդէսը . նուագածուք և պարող կանայք մէյմէկ ոսկի
կընդունին և բազմութիւնը ճամբան կչարունակէ :

Աէֆթէրի ամբողջ խումբը հաւարուեր էր երբ Հաճի Սրբահամ հրաման կուզէ ճամբայ ելնելու :

— Սյս կողմերը քեզի անձանօթ ըլլալու են , կրսէ դնդապետը , թէ ճամբայ ցուցնելու և թէ ապահովութեան երգ համար երկու մարդ ընկերացնեմ հետդ :

— Որչափ բարեսրտութիւն , կրսէ Սրբահամ , չեմ դիտեր ինչպէս յայտնեմ շնորհակալութիւնս ու երախտագիտութիւնս :

Եւ դնդապետին հրածեչտի ողջոյնը տալէ յետոյ , երկու աւազակաց առաջնորդութեամբ ճամբայ կեղնէ առանց ու՛ր երթալիքը գիտնալու , վասն զի այս անդամի ընկերները տաճկերէն չհասկնանուն , կերպիւ մը չկրցաւ հասկըցընել թէ նաւամատոյց երթալ կուզէ : Մութը երթալով կաւեղնար . վերջապէս երկու առաջնորդները կդառնան Հաճի Սրբահամ Աղային , և յունարէն շատ մը խօսքեր կընեն , որոցմէ բան չկրնար հասկնալ Սրբահամ . միայն ձիերնին դարձունենուն կգուշակէ որ ալ իրենք ետ պիտի դառնան . վասն զի կէս մընի չափ հեռուն ճրագի լոյսեր ու նոր ծագած լուսնոյ լուսովը շէնքեր կնշմարէր :

— Անշուշտ , կրսէ ինքիբնէն Հաճի Սրբահամ , ասոնք ինձի Աէմլէ յիկ բերին , իրենք պիտի դառնան , և ինէ նըւէր մը կուղեն . դորժ տեսնեմ , առատաձեռնութեան ատենը հիմայ է , մարդը « տէն էքի թի բօթա » ըսաւ , որ « մեզի նուէր մը չե՞ս տար » ըսել է , այսչափ յունարէն գիտեմ : . . .

Սյսպէս խորհելով քսակը կհանէ , և ամենայն առատաձեռնութեամբ մէ յմէկ պղինձ դրշնոց . կերկնցունէ մարդոց : Իսկ ասոնք միայն հետաքրքրութենէ շարժեալ ձեռքերնին առած պղինձ դրամը գետինը նետելնին և Սրբահամին ձիուն թամբէն արժէթուղթերը պարունակող պայուսակը քաշել առնելով կայծակի պէս վախչելնին մէկ կընեն :

Անկարելի է նկարագրել Հաճի Արբահամին յուսահատութիւնը : Ի դուր կաղաղակէ որ կենան, ձին ետ կգար ձունէ ու քանի վայրկեան կփորձէ ետեւուն երթալ, բայց ո՞ր կողմէն, արդէն անոնք մտթին մէջ անյայտ ելեր, և ձիերնուն տրոփիւնը անլսելի ըլլալու չափ հեռացեր էին : Բոլորովին շուարած կգառնայ գէպի այն կողմ ուր ճրագէր տեսեր, և հոն հասնելով կիմանայ որ դիւղ մ'է այն երեք ժամ հեռու չէթէ Նէմլէյիկէն, ուր որ կուզեր երթալ, այլ Ինիմիտէն : Խըրճիթ մը կմանէ զիչերն անյուսնելու համար . ինչ մտատանջ, ինչ ծփայոյլ զիչեր, մինչեւ լոյս անկարելի կըլլայ որ աչքերը գոյց . նոյն աւուր մէջ պատահածներն անդադար աչքին առջև կուդան, անտառին մէջ ըրած ճաշը, յանակնկալս հարիւր տասնեչորս ոսկի շահը . սարին վրայէն օդին դաւաթը ձեռքը վայելած պարահանդէսի տեսարանը, այս ամենն աղէկ . սակայն յանկարծ սրայուսակին համբաւնայը . այս մտածմունքը խեղճին խելըը դլխէն կթռցնէ :

— Գոնէ, կրճէ, իմ արդար իրաւունքս եղած հաղար երեք հարիւր ոսկին խնայէին, շան տղայները : . . . Աւաղակապեալին սիրտը կնեղանար, +էյճ անելու համար այս խաղը խաղաց ինձի, ուրիշ ինչ ալ կրնայի անել, անհնար էր փախչիլ ձեռքերնուն : Այո՛, առաւօտուն քաղաք իջնելուս պէս ոտիկանութեան բողբոմ :

Արշալոյսին ձի կնստի և շատ չքչէր կհասնի քաղաք : Փողոցներուն մէջ աս ու ան դինքը կլխան . տեղ տեղ ալ քանի մը հողի խումբեր կաղմած փարտալալ կխօսին իրարու հետ Արբահամ Աղայն դնելով .

— Ահաւասիկ այս մարդն է որ Նէթթէրի հեանստեր էր երէկ երեկոյ :

— Այո՛, այս է, Ֆէսը մինչև ականջը իջած . ինչ կայներ եմք, երթամք խնայ տամք պէտք եղած տեղը, տորովն եկաւ :

Հաճի Աբրահամ Ալա այս ցոյցերէն կհետեցնէ որ զլիսուն եկած փորձանքին լուրը իրմէ յառաջ քաղաքն հաւասած ըլլայ . և մեծ յուսով սատիկանութեան պալատին ճամբան էր ըսներ երբ քանի մը պահապան զինուոր զինքը կգլխաւորեն :

— Ես ալ ձեզի կուգայի , կրտէ չավուշին :

— Եստ աղէկ , կրտէ ասի դուլին երեքցնելով ու քիթին տակէն խնդարով , քեզի ընկերանալու եկանք որ ճամբայդ չխորտանես : . . .

Եւ զինքը սատիկանութեան տեսչին կհանրկայացնեն : Արդէն ասոր քով քսանի չափ քաղաքայի ժողովեր էին , որք Հաճի Աբրահամ ներս մանելուն պէս ,

— Այս մարդն էր , կրտէն միաբերան , որ երէկ Ղէֆթէրի քով նստեր օղի կխմեր հետը , երբ ասի տօնավոճառէն դարձած ժամանակնիս , մեր ճամբան գոցեց ու կիրճին մէջ ըսնի վար գնելով , մէջերնիս դանուած նուագածուններուն խաղ կանչել , և գլուղայի կանանց պարել տուա :

— Կերեւի թէ , կրտէ տեսուչը Աբրահամին , այդ աւազակապետը մաերիմդ ըլլալու է . մինչև քսանուչորս ժամ մեր ձեռքը տալու ես այդ մարդը . ապա թէ ոչ ճանրը պատասխանատուութեան տակ ես :

Խեղճ Հաճի Աբրահամ Ալա շատոնց աչքէն կհանէ իւր երկու հազար երկու հարիւր ութսուն ոսկին . զլիսուն եկածը պատմելով , կճգնի հասկցնել որ ինքն ալ երեկ առաւօտ Պրուսայէն դառնալու ատեն , այն աւազակաց մէկ նննգութեանը զոհ եղած է , բայց ի զուր . չին թողուր զինքը : Աերջապէս տեսուչը սատիկանութեան ժողովին հետ երկար խորհրդակցութենէ յետոյ ,

— Հարկ եղաւ որ հոս կենաս , կրտէ Հաճի Աբրահամին , մինչև որ այդ ըսածներդ հաստատող տեղեկագիր մը բերել տանք Պրուսայի կուսակալութենէն :



Զարեհ Տիկին Մաքրիկին հետ ունեցած վերջին տեսութենէն քանի մը օրէ յետոյ առաւօտ մը սպասաւորը կը դրկէ սիրուհւոյն տունը որ հօն ըլլալուն տեղեկանայ և իրեն այցելութեան երթալիքը իմացունէ : Վերջին անցաժութենէն շատ զայրացեր էր Զարեհ, և կուզեր անգամ մ'ալ երթալ տեսնել զանի այն դիշերին վարմունքին բացատրութիւն ուղելու և վերջնական կերպիւ յարաբերութիւնը դադրեցնելու համար :

— Ալ տարակոյս չմնայ, կկորհի Զարեհ, որ այս կինը գեղեցկութիւն իրեն դրամադուլէս ըրեր, սիրահարներուն ծախիւքը կուզէ ապրիլ : Սա չուրացուիր որ այդ պըշրող կինը շատ ճարպիկ է իւր տեսակին մէջ, ինչ վարպետութեամբ բռնեց քիթէս տարիէն աւելի, բայց ալ հերիք եղաւ, ըսեմ իրեն որ ասկէ յետոյ դիմակն ստակ չընէր, ինչ բան ըլլալը հասկցայ : Մեղք այնչափ ծախքերուս, ես հիմա անոր քիթէն բերնէն կըրեմ : Հապա ժամանակիս կորուստը, ամսոս : . . .

Կէս օրէն քիչ յետոյ կերթայ Տիկին Մաքրիկին տունը, սպասուհին դէմը կեընէ :

— Այլուսամ որ Տիկինդ զիս կրնայ ընդունիլ :

— Այո՛, Պարոն, արդէն ինծի հրաման տուած է որ եկած ժամանակնիդ քովը հանեմ :

Զարեհ վեր կեընէ սպասուհւոյն ետեւէն, ասի սենեակին դրան մօտեցած կէտին, քանի մը քայլ շուտ կառնէ, և վարպետը ուրին ճեղքը աջ ձեռքով բանալով :

— Պարսն Չարեհ, կծանուցանէ և դուրս կեննէ :

Ներս կմտնէ Չարեհ, կծու դէմքով, գլուխը յարդահան եղանակաւ կխոնարհեցնէ Տ. Մաքրիկին կողմը. ասի ամենեկին տեղէն չշարժիր. և հազիւ դպալի ըլլալու չափ գլուխը Չարեհին կգարձնէ : Մաքրիկ մինակ չէր, քովն ուրիշ մարդ մը նստեր էր. բազմոցին վրայ, և այնչափ իրեն մօտ որ սփէն շրջապահասին լայն քղանցքը օտարականին մէկ ծունդը ծածկեր էր :

Չարեհ այս օտարականը տեսնելուն պէս ասանկ վիճակի մէջ նստած, արդէն դունատ դէմքերը բոլորովին կը դեղնին. զայրութէն ու կատաղութենէն ոտքերը կսկսին դողալ : և մէկ կողմը դանուած թիկնաթուռի մը վրայ աւելի կիյնայ քանթէ կնտի. ինքզինքէն դուրս էր ելեր Չարեհ, և դիտուն սկաւառակը կթնդար :

Առանց բերնէն բառ մը հանելու Չարեհ կսկսի այս օտարականին կերպարանքը դիտել. բառական բարձրահասակ անձ մ'էր քառասունէն սակաւ ինչ աւելի տարեկան : Գլուխը բաց էր և կերեւէր որ բազմոցին քով դանուած անթուռն վրայի բարձր գլխարկը իրենն ըլլայ : ձենական մշտանի դոյնով թուխ մազերը որ գլխուն մէջ տեղէն ճեղքով ասնարուած տեղ տեղ խառն էին ճերմակ թելերով, և լայն ու բարձր ճակտին կողմերունը անդայտայտ թուխ յօնքերուն թելերը այնչափ երկար էին որ դէպ ի մեծ ճեղքուած խոշոր աչքերն եղած անըրպետը դըքեթէ կծածկէր : Արծուունցն քիթը, կուրս ու մաստ սյաները դէպի վար սանարուած լայն և երկարաթել, ընչայքը վէհ, միանգամայն կատաղի երևոյթ մը գրօշմեր էին այս օտարականին երկարաձկգ դէմքին վրայ : Անդդիական ձևով սեւ քաղերէ ճակթ էր հազեր, և ձախ ձեռքովը պալենայէ նորը գաւազանի մը հետ կխաղար, մինչդեռ անը քառասուն թիկնանոցին վերի եզերքին վրայ, Տիկին Մաքրիկի գլխուն կտին էր երկարեր : Չարեհ ներս մտած ասին

այս մարդը տեղէն չչարժեցաւ . միայն նստեղէն յետոյ , քը-
թան բաճկոնին վրայ սև երիզով կախուած ոսկեծիր ապա-
կին ձախ աչքին բոլորտիքի մասնին մէջ բռնել տալով , կէս
վայրկեանի չափ Զարեհի ոտքէն գլուխը չափեց այնպիսի
խրոխտ նայուած քով որ կարծես թէ ըսել ուզեր ,

— Ա, ս ո՛վ է :

Իսկ Մաքրիկ շատ պարզ և անզարդ կերպարանքով ըն-
դունած էր այս օտարականը , իբր թէ ասի իբն ընտանի
մէկն ըլլար : Սակայն այս պարզ կերպարանքը կրկին գե-
ղեցկայուցեր էր զանի , այնչափ ճշմարիտ է որ բնական
զեղեցկութեան գլխաւոր վարդը պարզութիւնն է :

Զարեհ զրեթէ ինքզինքէն անզգայ թիկնաթուռի վրայ
նստաւ ըրի . օտարականին խրոխտութիւնամանապիւր նայուած-
քը ևս առաւել գլուխը կդարձունէ . սրտմտութիւնը կատա-
ղութեան կլիտխուի . և քովի աթուռը այն օտարականին գլուխը
չանցունելու համար , ինքի վրայ մեծ ճիգ մ' ընել հարկը լայ :

— Այս դայն ո՛ւրկէ երևան ելաւ , կըսէ ինքիբն ,
այս դէմքով մարդ մանկիկները երազնուն մէջ որ տեսնեն ,
կվախնան : Սա անզգամ նայուածքը նայէ , զիս ալ
վախցնել կուղէ կարծեմ : . . . Փառազանս հետս վեր բե-
րելու էի զիս աղէկ ճանչեցնելու համար : Եղած բան չէ
այս աստիճան լրբութիւն ու անկրթութիւն . . . սա աթուռն
ալ անոր դորձը կրնայ տեսնել . . . Այ , կեցի՛ր Զարեհ , խո-
հեմութիւնը ձեռքէ չթողումք : Մաքրիկը նայէ ինչ անըզ-
գամ ընտանութիւն , և իմ առջևս . . . կարծես թէ ամու-
սինն է : . . . Ես այսչափ ատեն պաշտեցի զինքը , ու ասոր
կէսին չափ ընտանութեամբ չվարուեցաւ հետս : Հասկցաւ
որ ալ զիս չպիտի կարենայ խաբել , ուրիշ մը որսաց : Ա՛հ ,
չըլլար . կամ պիտի մեռնիմ և կամ այս բ . . . էն ու այն
անզգամ մարդէն վրէժս հանելու եմ : Հ՛ա , կերելի որ բա-
րեկամութիւննին նոր չէ , վաղեմի բարեկամներ ըլլալու են .
խօսակցութիւննին մտիկ ընեմ :

— Այսուայի որ աւելի շուտ կդառնաս, կրտէ Մաքրիկ օտարականին, վերջին երկու շաբաթները լուր մ'ալ չկըրցայ առնել քենէ. շխտակը գրուցելով շատ անհանդիստ ըրիր զիս. շատ չար ես, Ստեփան, յարեց Մաքրիկ ժըպտեղով, և խանդաղատանօք լինայուածք մը դարձնելով օտարականին վրայ:

— Զգրեցի, Տիկին, վասն զի այս կողմ բաւեալ էի. և յանկարծ երեքուամիս ձեզի զարմանք սլատճառել կ'ափեցուած էի. կսպտասիւսանէ օտարականը ռուսիական արտասանութեամբ:

— Վերջին նամակդ Փարիզէն գրուած էր, ըսել կրկնայ որ Լոնտրա չես դացեր. զոր տեսնելու այնչափ փափաք ունէիր: Հաւնեցա՞ր Փարիզին, վայելած համբաւին չափ կարժէ եղեր:

— Եւ քաղում աւելի, Տիկին, եղիւստան դաշան ու Պուլճնեի անտառակը քերականցած են այն ամեն ճոխութիւն և շքեղութիւն զոր երեւոյցիս է մարդ: Լնդես որչա՞ս եմ որ ի Լոնտրոն պիտ որ հանդիպումք միատեղ ի դարձին: Զարմացած եմ Տիկին, որ կ'ափեցուած ես զալ ինձ հետ այն սքանչելի երկիր կրկին տեսնելու համար:

— Սրբէն ըսեր եմ քեզի որ հայրս Եւրոպայի ամեն երեւելի քաղաքները ստացուց զիս և . . . քոյրս յարեց Մաքրիկ հառաչելով: Ս, յս երկիրը իմ հայրենիքս է, այս ճամբորդութիւնդ շատ յարմար առիթ ընծայեց ինձի հայրենիքս անգամ մ'ալ տեսնելու. որուն շատ կըփափաքէի. և որ տղայութեան ժամանակի անոյշ և տըխտուր շատ մը յիշատակներ կզարթուցանեն մտացս մէջ:

— Բայց Տիկին, այս երկիրներ Վիէնայի, Փարիզի, Հոտլմայ և Յլորանսի քով Անի աւերակաց նմանո՞ւ են:

— Հոգ չէ. ըսուական է որ իմ հայրենիքս ըլլայ: Իմ հայրենեացս մէկ անակը, Փարիզի կըսնիւթէն, ու մէկ աղքատիկ եկեղեցին Հոտլմայ մէջ Ս. Ալեարոսի հոյակապ

տաճարէն առելի արժէք ունի իմ աչքին : Այս մասին ձեր կարծիքն ի՞նչ է , Պարոն Չարեհ : . . . Չէ՞ք խօսիր , յարեց Մաքրիկ գլուխը կէս մը Չարեհին դարձունելով :

— Մտիկ կընեմ , Տիկին , պատասխանեց ասի առանց արտահանուհը վեր վերցունելու :

— Տեսնեմ սա ժամացոյցին կհաւնի՞ս , Պարոն Չարեհ . շատ ընտիր բան է , +բժշակչի ըսուած տեսակէն զոր իշխանը յիտուն անգղիական ոսկիի առեր է Փարիզէն , ինձի նուիրելու համար :

Չարեհ որ սրտին զայրոյթէն կզողար , և բոլորքելու համար կայծի մը կսպասէր , Տիկին Մաքրիկին գէպ իւր կողմ երկնցուցած ժամացոյցը ոտք ենելով կառնէ ձեռքը ինքիւրեն խորհելով :

— Իրեն նուիրելու համար . . . իշխանը . . . այս մարդը իշխան է եղեր . երդում կընեմ որ իւր իշխանութիւնը լէնկիթիմուրէն ժառանգած ըլլալու է , թէոր կունտ այտերովը թաթարի շնամիր , գլուխս կկտրեմ :

Չարեհ առանց նստելու մեքենայաբար ժամացոյցին ամեն կողմը կբանայ . և զիտմամբ կձգէ ձեռքէն . ժամացոյցն՝ է շառաչիւն մ՝ արձակելով քանի մը կտոր կըլլայ : Մաքրիկ բնական ցնցումով տեղէն կերերայ ու ,

— Ա՛հ , կընէ , այս ի՞նչ եղաւ . մեղքոյ , շատ սիրեր էի :

— Կցաւիմ , Տիկին , կըսէ Չարեհ առանց բան մը ըզգալու , առաջին տեսակի դործ էր արդարեւ , բայց ձեռքէս ինկաւ . . . դիպումս :

Օտարականը որում իշխան պատուանունը տուաւ Տ . Մաքրիկ , և որ Չարեհի ամեն մէկ շարժումը ուշի ուշով գիտեր էր , անգամ մ՝ ալ ասպակին աչքին բոլորտիքի մը տանին վրայ յարելով և ամենայն ծանրութեամբ և հանդարտութեամբ :

— Ես կարծուի որ , Պարոն , կըսէ Չարեհին , այս դործ

բոլորովին դիպուածի շարժումն է , և դու այդ անվայել վարմունքով զիս թշնամանել խնդրու՞մ ես :

— Ճշմարիտը սա է որ , կրտէ Զարեհ միլենոյն հանդարտութեամբ , բոլորովին այդ մտօք չէր ըրածս , ինչ և իցէ քանի որ ձեր իշխանութիւնը այդպէս կարծիք կընէ , ձեր այդ կարծիքը սխալ հանելու չափ անքաղաքավար ըլլալ չեմ ուզեր :

— Կարծեմ խօսքով ալ խնամանամ ես : . . . Ի՛նչ անզգամութիւն է այս , Տիկին :

— Ես չեմ կարծեր , կրտէ Զարեհ օտարականին և Մաքրիկին վրայ ծայրայեղ անարդանօք լի ակնարկ մը նետելով , այլ ապահով գիտեմ որ ձեր իշխանութիւնը և Տիկին Մաքրիկ երկուքնիդ ալ ստակ մը չէք արժեր :

— Ես ալ սակաւ օրէն քեզ պէտք հաղորդեմ յատկապէս ինչ որ քոյ մասիդ գիտեմ եմ , կրտէ օտարականը սպառնական դէմքով գլուխն երերցնելով , և աչքին վրաս յէն ապակին վար ձգելով :

Օտարականին այս վերջին սպառնական խօսքերը չըսեց Զարեհ , վասն զի սանդուխքէն վար կիջնէր արդէն :

— Կաղաչեմ , Ստեփան , կրտէ Մաքրիկ Զարեհ երթալէն յետոյ . սա անզգամէն փառաւոր վրէժխնդրութիւն մը :

ԺԵ

Հետեւեալ առաւօտ ժամը երեքն անցեր էր , և Զարեհ դեռ կընանար երբ սպասուհին սենեակը մտնելով կ'ստենայ անկողինին և վինքը կարթնցնէ ըսելով ,

— Պարոն Զարեհ , ել մարդ մը եկեր տեսնել կուզէ զքեզ :

— Ո՞վ է, ի՞նչ պիտի ընէ, կրտէ Զարեհ աչքերը կէս բանելով :

— Նամակ է բերեր :

— Ա.ռ. բեր դու նամակը, կրտէ Զարեհ, և անկողինին մէջ ինքիր վրայ մէյ մը կդառնայ :

— Ուզեցի, չտուաւ. կարևոր լուրեր ալ ունի եղեր քեզի հաղորդելիք :

— Չես գիտեր, Սուրբիկ, որչափ խառնաշփոթ երազներով յուզուած էի այս դիշեր. առաւօտուն դէմ հայրս ալ տեսայ. եթէ այս նամակը հօրմէս է, մամիկներուն միայն այս նախապաշարմունքին հաւատ պիտի ընծայեմ :

— Այո՛ւսամ որ այդ երազները բարի են, Պարոն Զարեհ :

— Մարդը թող վեր գայ . . . սուրճս չուշացնես :

— Գլխուս վրայ :

Սպասուհին կերթայ : Զարեհ կելնէ անկողինէն մուշտակը վրան առնելով դիմովի պէս գահաբէլ մը վրայ կընետուի ու կարծես որ կքնանար : Գլուխն այնչափ ծանր էր որ հազիւ կնշմարէ նամակաբերին սննեակէն ներս մտնելը : Առանց մարդուն երեսը նայելու, կառնէ նամակը կկարդայ հասցէն, և պահարանին վրայի կնքամամը քակելու էր զբաղած երբ մարդը անութիւն տակէն պզտիկ դաշոյն մը կհանէ. մարդը զէնքը դէպ ի Զարեհին սիրտն ուղղելը, և Զարեհ օտարականին այս յարձակողական շարժումն և ձեռքի դաշոյնը նշմարելով մեքենայաբար տեղէն ցատկելը զարմանալի պատահմամբ միւսնոյն արագութեամբ և միւսնոյն ակնթարիկ մէջ տեղի ունենալով, դաշոյնը սահմանուած տեղէն կշեղի և Զարեհի ձախակողմը արգանդին վրայ լայն ու խորարմատ վէրք մը կբանայ. Զարեհի երկրորդ շարժումը կըլլայ գահաբէլ վրայ իյնալ, գլուխը թիկնօցին խոնարհած և ինքզինքէն անըզայ. իսկ ռերագործը կայծակի արագութեամբ անյայտ կըլլայ :

Քանի մը վայրկեան յետոյ ոպատուհին , կաթով սուրճին գաւաթը ձեռքը սննեակ կմանէ , տէրը մեռելագէժ մարած , ցայգազգեստն արիւն թաթախ և գետինը արեան վտակ մը տեսնելով , սոսկումէն ձեռքի գաւաթը դորդին վրայ կձգէ , և

— Ո՛հ , աս ինչ կտեսնեմ , ըսելով , փողոցին դուռը կվաղէ և կսկսի պօռալ

— Հասէ՛ք , տէրս մեռուցեր են :

Ճիշդ այն կէտին որ սպատուհին դուռը կբանար , Մըկըր դէմը կենէ , որ բարեկամը տեսնել կուգար :

— Մեռուցեր են տէրս , հասի՛ր , կըսէ Սուրբիկ լուրագին եղանակաւ :

Մկըր շունչը բռնելով , Չարեհին սննեակը կվաղէ , ուր սրտածմիլի տեսարան մը կենէ առջևը . շատ կաշխատի բարեկամին խելքը գլուխը բերել , երեսները կլուսայ պաղ շուրով , ինչ որ կընէ , չյաջողիր . սակայն Չարեհի վրայ կենդանութեան նշան կար . իսկոյն կնետուի փողոց վերաբոյժ կանչելու համար , և սիրտը դառնակակիծ , ոտքին ամեն զօրութեամբը դեղաբան վագելու վրայ էր երբ մէկը կկտրէ ճամբան և զուարթ կերպարանքով Մկըրին ձեռքը սեղմելով ,

— Բարի ըյս , Պարոն Մկըր , կըսէ , կներէք , այսչափ ատեն ձեզի մտատանջութեան մէջ թողուցի սլատմութիւնըս չլմնցնելով , ի՞նչ ընեմ , քանի մ'ատենէ ի վեր բացակայ էի քաղաքէս :

— Ի՞նչ կըսես , մարդ , կպօռայ Մկըր աչքերը մթթադնած :

— Արեւմ որ ձմեռ գիշեր մը , ժամ իննին

Մկըր համբերութիւնը հատած , բուռն զօրութեամբ երկու ձեռքով կհրէ գիմացինը , որ մեր բաղմահմուտ բարեկամ Պարոն Մակարն էր դարձեալ , և անոր ծանրութեան կեղբունին վրայ ծանրագոյն նիստ մ'ընել տալէ

յետոյ կը վազէ գեղարան , վիրաբոյժ , բժիշկ , քանի մը տեսակ ուղիներ և ամեն ինչ որ կը պահանջէր անմիջապէս Չարեհի վիճակը , հեռն առած կերթայ բարեկամին տունը : Արջապէս կսթափի Չարեհ , վիրաբոյժը վերջը կը քննէ և պէտք եղած դարմանն ընելէ յետոյ , առանձին պաշտօնապէս կյայտնէ Մկրըն որ եթէ Չարեհ քսանուշորս ժամէն աւելի ապրի , հրաշք մ'է , վասն զի գլխաւոր աղիքները չարաչար վիրաւորուեր էին :

Բժշկին այս ցաւալի յայտարարութենէն գողցես կայծակնահար եղաւ Մկրը , որոյ սրտակիցը ասանկ դառնաղէտ վախճան մը կունենար : Աչքերը սրբելէ յետոյ , կուգայ Չարեհի քով զոր արդէն անկողինը տեղաւորեր էին , քանի մը հարցումներ կընէ ոճրագործին վրայ :

— Մարդ մը , կըսէ Չարեհ , խրվաթի կերպարանքով ահա բերած նամակը . . . :

Մկրը կառնէ նամակը որ Չարեհի ձեռքէն ինչպէս ինկեր , անանկ դրած էր գորդին վրայ . միայն պահարանին վրայ տեղ տեղ արեան բիծեր աւելցեր էին : Աես բացուած կնքամովը կըսակէ Մկրը , և մէջը ամբողջ թերթ մը կապոյտ թուղթ կգտնէ , որոյ վրայ մեքանի շաւիղ անդամ չիկար : Կգառնայ անկողինին քով և կաշխատի ուրիշ տեղեկութիւններ առնել .

— Չարեհ , ս'ըմէ կասկած ունիս :

— Չգիտեմ . մարդու վնաս չըրի մինչև ցարդ :

— Սպէկ մտածէ :

— Չեմ կրնար գտնել մէկը որոյ պատճառ տուած ըլլամ ասանկ թշնամութեան

Հաղիւ կհամէ բերնէն այս բառերը , դարձեալ կնուաղի Չարեհ : Բժիշկն արգիլած էր խօսիլ . Մկրը խոհեմութիւն չհամարիր ուրիշ հարցումներով զանի յոգնեցնել : Սակայն ժամանակ կորուսանել չէր ըլլար , իսկոյն կվազէ հեռադրատուն, եղելութիւնը Չարեհի հօրը Յակոբ Աղային կիմացունէ :

Այս դոյժն էր որ Յակոբ, Աբրահամին հետ ունեցած դատին աւուր երեկոյն մտանաւոր հեռադիրով առնելով, անմիջապէս անյայտ էր եղեր քաղաքէն, առանց կնոջը բան մը ըսելու, Իւսկիւտար գալու համար:

ԺԶ

Կենացը վերջին քսանուչորս ժամը կիպիչ տենդերով ու ջղային ցնցումներով անցուց Չարեհ: Նոյն աւուր մընացած մասը, դիչերը և հետևեալ օրը Մկրր բարեկամին անկողնոյն սնարէն չբաժնուեցաւ առանց կարենալու սիրտիւ անոր ցաւոց դոնէ մէկ մասը, աշխարհ կզոհէր Չարեհի կեանքն ապատելու համար, սակայն մարդկային ճարտարութիւնը իւր տկարութիւնը խոստովաներ էր, ուստի թևերը կուրծքին վրայ կապած, գլուխը ծռած, աչերն արտասուաթոր, դառն կակիծներով սիրտը կտառապէր: Ամերձենար բժշկին ծանուցած աղէտաբեր վայրկեանը:

Մահագուշակ թալուկ մը պատեր էր Չարեհի դեղանի այտերը. դեղին մազերը խառնիխուռն բարձին երկու կողմը ոսկեդոյն ծիր մը յօրիներ էին դիտուն շուրջը. յանկարծական ճիգով քանի մը վայրկեանը հեղմը աչքերը կը բանար և նուազեալ նայուած մը շուրջը նետելէ յետոյ դարձեալ կզոցէր, իբր թէ արտևանունքին ծանրութիւնը չկրնար կրել, կամ լոյսն իրեն համար ալ օտար բան մ'ըլլալ սկսէր: Աերմակէն դուրս երկարած թևերուն ծայրը խունկի գոյն առած փափուկ մատերուն ձկտումը, փայ-

լուն ու սիրուն ճակտէն յորդահոս բղխած քրտունքը , ամեն բան կծանուցանէին որ տաժանելի ճգնաժամի մէջ կտառապի Չարեհ . այն վերջին ճգնաժամը որ եօթ հազար և աւելի տարիէ ի վեր անմահութեան քնոյ ճանապարհը կհարթէ մեր ամենից սխալական Նախամօր սերընդոց առջև :

Յանկարծ ծերունի մը , յուզեալ և տառապադին , սենեակին դռնէն ներս կնետուի . Յակոբ էր նա , Չարեհի հայրը , և ժամանակ էր որ հասնէր : Մերունին , առանց շուրջը նայելու , մէկէն կմօտենայ անկողնոյն , երկու թևերը բաց , կիյնայ դժբաղդ տղուն վրայ , և անոր սառած մարմինը գրկելով ,

— Չաւա՛կս , սրտիս հատո՛րը , այս ի՛նչ աղէկտուր վիճակ . . . կաղաղակէ իողճալի եղանակաւ և աչքերէն վաղած արտասուքը տղուն այտերէն բղխած ոգեվարական քրտանց հետ կխառնէ :

Արդէն քառորդ մը կայ որ Չարեհի մարմինը չարագուշակ անշարժութեան մէջ էր . սակայն հօրը ճայնն առնելուն պէս , աղու աչերն ամբողջ կբանայ և զանոնք շեշտակի հօրը երեսը յառելով ,

— Հայրս , դ՞ո՛ւ ես . . .

կրսէ երեսի մասններն այնպէս երերցնելով ինչպէս որ կրնէ մարդ կարօտցած մէկը յանկարծ տեսած ատեն . բայց այսչափ : Կարծես թէ Չարեհի սիրտն իւր վերջին բաղխումը հօրը ներկայութեան ընելու սահմանած ըլլար , գողցես անոր որդիական զգացումը պահ մը զսպեր էր զքնութիւնը , և մահուան յաղթանակը քանի մը վայրկեան ուշացուցեր էր աչքերը բանալու , և « Հայր » բառը վերջին ճիգով մը արտասանելու համար : Չարեհի աչքին բիւրեքը ստակալի տարտամութեամբ Յակոբայ վրայ տնկուած մնացին : Իսկոյն Մկրը և բժիշկը որ մինչև վերջին շունչը հիւանդին գըլուխն սպասած էր , կքաշեն ծերունւոյն թևերէն և զանի

ուրիշ սենեակ մը կտանին : Հոս չեմ նկարագրեր Յակոբայ կսկիծը . կթողում որ երևակային անոնք որոց երկինք շնորհած է զիրենք « Հայր » յորջորջող էակ մը :

Զառակ հօր մը անմահութիւն է , անոր կորուստը , հօրն յաւիտենապէս մահացումը :

Աստուած ամբլթիւնը իբրև առաջին պատիժ տուաւ մարդկային ազգին , և զաւակի կորուստը իբրև ծայրագոյն պատուհաս :


Օրը կերեկոյանար : Արդէն Զարեհի անկենդան դիակը դորդին վրայ մահիճի մէջ դրուած ոտքէն մինչև կուրծքին ծայրը ծածկուած էր սև թաւիշով , որոյ վրայ չորս թեւը կտարածէր արծաթ խոչ մը որ քրիստոնէական խմաստասիրութեան խորհրդաւոր նշանն է : Մահիճի սնարին մոմը , իւր լոյսը խառնելով վերջալոյսին նուազման վրայ եղած նըշոյլին հետ , ծծմբեղէն նիւթերու նման դեղին ու կապոյտ լոյս մը կտարածէր հանդուցեղոյն սառուցեալ դէմքին վրայ : Յակոբայ բարեկամները բոլոր օրը եկած , և իրենց վշտակցութիւնը յայտնելէ յետոյ դացեր էին : Նրեկոյին մինակ կմնայ Յակոբ Պարոն Մկըրի հետ և որդւոյն մահիճին սնարէն չուզէր բաժնուիլ :

Մկըր դուրս էր ելած , և Յակոբ առանձին նստեր կմըտածէր երբ հեռագրալուր մը կբերեն . Յակոբ կբանայ զայն ու հոն կկարդայ հեռեեալ տղերքը զոր Պրուսայէն մէկ բարեկամն իրեն կգրէր :

« Տունդ պարտատիրոջմէդ գրաւուեցաւ . և անորամեն
« կողմերը կնքուեցան պաշտօնապէս : Այնդ որ միայն վրաս
« յի հադուտներովը կրցաւ դուրս ելնել , որդւոյդ պատա-
« հած աղէտից գոյժն առնելով , կաթուածամահ եղաւ , և
« վաղը յուղարկաւորութիւնը պիտի կատարեմք : Յաւալի
« է ինձ այսպիսի տխուր լուր մը ձեզ հաղորդելու պարա-
« գային մէջ գտնուիլ , սակայն քանի որ երբօր է պիտի ի-
« մանայիք , զայն ժամ յառաջ ձեզ զխոցունելով ձեր շա-

« հույր ծառայութիւն մը կընեմ կարծեցի : »

Այս նամակը կարդալէ յետոյ Յակոբ զտռամեալ ճակատը ձախ ձեռքին վրայ կկրթնցունէ , և աջովը միշտ նամակը բռնած , տարտամօրէն աչքը վրան կպտոցունէ , կարծես թէ չիշխէր անգամ մ'ալ կարդալ , և կսպասէ որ ամենազօր ձեռք մը փճայնէ այն թուղթը . նման այն մարդուն որ քնոյն մէջ հազարումէկ տառապանաց տակ կճնչուի սակայն անոնց երազը լլալը զդալով , կմխիթարուի որ արշաղոյսը գիշերային խաւարը հալածած ատեն , այն տեսիլներն ալ իմիասին հալածական կվարէ : Սակայն չէր քնանար Յակոբ , և այս ամեն տեսածն ու ըրածը իրականութիւններ եղելութիւններ էին , և ո՞վ կարող է եղած ու կատարուած բան մը իբրև չեղած ընել . ներուի ինձ ըսել որ զերբնական իշխանութիւն իսկ կտկարանայ այս մասին :



ԺԷ

Մանկամարդ կին մը , դեռահասակ աղջիկան մը հետ յանկարծ սենեակէն ներս մտնելով , զՅակոբ կարթնցունէ այս թմբուութենէն : Այս կինը թուի ճառագիւղ շրջապագետ էր հագեր , սև ձեռնոց դրեր , ուն ալ նոյն գոյնով շալ մը ունէր երեսը ծածկուած էր խիտ հիւստած քողով մը , միևնոյն էր հետի աղջիկան հաղուստն ալ , պարզ և սգաւորի կերպարանք :

— Յակոբ Աղա , կըսէ այս կինը Յակոբին մօտենալով , կարելի է վայրկեան մը առանձին խօսիլ ձեզի հետ :

Գլուխը կվերցնէ Յակոբ, և այս կնոջ վեհ կերպարանքը, (վասն զի իրեն մտենալու ատեն երեսի քողը դէպ ի ետին էր նետած, և հրեշտականման պատկեր մը երեւան էր հանած.) և խօսուածքին լրջութիւնը այն աստիճան ազգեցութիւն կընեն Յակոբին վրայ, որ ուրիշ խօսք չկրնար գտնել, այլ միայն,

— Նստեցէք, Տիկին, կըսէ անանկ դէմքով մը որոյ վըրայ կսկիճն ու յուսահատութիւնը սակաւ ինչ զարմանօք խառնուած կերուային :

Օտարուհին հետի աղջիկանը կը դառնայ և,

— Դու պահ մը դուրս ել, կըսէ անոր :

Ապա Յակոբին աւելի մօտը գալով, անանկ անձի մը պէս որ կերպարանքը դիմացինին յիշեցնել ուզէ,

— Զիս ճանչեցի՞ր, կըսէ անոր :

Յակոբ վայրկեան մը տրամազին աչերն այս կնոջ վրայ պտտցնելէ յետոյ ձեռքը ճակտին կտանի յիշողութիւնը ամիսփել ուզելու պէս, և զարմանքն աստիճան մ'ալ աւելցած,

— Կներէք ցաւոյս, Տիկին, կըսէ, ձեր կերպարանքը միտքս բերելու համար յիշողութիւնս այնչափ հեռուները տանելու եմ, որչափ որ այս կէտիս սիրտս խորտակող կըսկիճները չեն թողուր :

— Ոչ այնչափ հեռուները, կըսէ օտարուհին աչքին բիբերը Յակոբին աչքին բիբերուն վրայ ուղղել ջանալով որ կարծես թէ խուսել կուզէին իրեններէն և ակթու մը Յակոբին բառքէն մերձեցնելով կնստի : Այիշես անշուշտ կյարէ կինը, երբ քսան տարի յառաջ ընակութիւնդ Իզմիր հաստատած ատեն Գրիգոր Աղա անուն երևելի վաճառականի մը և անոր ընտանեաց հետ սերտ յարաբերութիւն ունեցար

— Ո՛հ, Տիկին, կընդմիջէ Յակոբ բազուկները բանալով, գթա՛ թշուառութեանս, շատ տխուր յիշատակներ կարթնցունես մտացս մէջ :

Գիտեմ , Յակոբ , բայց ի՞նչ օգուտ . զքեզ խորտա-
կող կսկիծներուն աղբիւրը գիտցունելու համար հարկ է
յիշեցնեմ քեզի այնպիսի եղելութիւն մը որոյ պարագա-
ները անշուշտ մոռցած չես . սակայն անոր եղերերդական
հետեանքը մասամբ ինչ անծանօթ ըլլալու են քեզի , ե-
թէ ոչ բոլորովին : Նախ սա գիտցունեմ որ ես նոյն Գը-
րիգոր Աղային կրտսեր աղջիկն եմ , Վարդուհւոյն քոյրը
այն Վարդուհւոյն զոր չեմ կարծեր բոլորովին մտքեզ
ելած ըլլայ , յարեց կինը դատան ժպիտով մը :

— Կաղաչեմ , Տիկին Մաքրիկ . . .

— Այն Վարդուհին զոր դու սիրե իր , կամ ճիշդը
խօսելով , նա զքեզ սիրեց , և դժբաղդաբար այնչափ սաս-
տիկ որչափ որ արժանի չէիր դու , Յակոբ :

— Ա՛հ , Տիկին . . .

— Հայրս ամեն ժամանակ զքեզ իբրև որդի հիւրըն-
կալեց դու ինքնին հետամուտ էիր Վարդուհւոյն , և ար-
դէն քրոջս հետ ամուսնութիւնդ որոշուած լինցած էր :
Այիշե՛ս այն օրը երբ իմ և ժօրս առջև քրոջս զոյգ մը օղ
և մարգրիտ վարդարան մը նուիրեցիր ըսելով . « Օրիորդ ,
« կզգամ որ առանց քու ընկերութեանդ աշխարհիս մէջ
« հաճոյք չիկայ ինծի համար : Մինչև այն երջանիկ օրն
« ուր կարող ըլլամ զքեզ ինծի կին անուանել , սիրոյս
« դրաւականն ըլլալու համար ընդունէ սա շնչին նուէր-
« ներս զոր ձեզ մատուցանելու կհամարձակիմ նախապէս
« Տիկին մօրմէզ հրաման տուած » : Ահաւասիկ այն օղերը .
« տես վրայէն քար մը կպակսի » , վարդարանն ալ քովս է .
« ահաւասիկ նայէ մարգրիտները միւսնոյն ոսկի շղթային վը-
« րայ են թէ ոչ : Մնողքս զքեզ խօսքի և պատուոյ տէր
« մարդ կարծելով անկեղծ վստահութիւն ունեցան վրադ
« այնպէս որ թող տուին որ քրոջս հետ յարաբերութիւնդ
« օր ըստ օրէ սերայնես և ընտանութիւնդ աւելցնես : Ար-
« դարև ծնողքս չարաչար սխալեցան այս մասին , քու կող-

մանէդ որ և է վատութիւն անկարելի կարծելով . վասն զի դու որ Վարդուհայն հետ յաւիտենական սէր և մշտնջենաւոր միութիւն ուխտեր էիր , օր մը անոր տկարութենէն օգտելով խաբեցիր խեղճ աղջիկը և այնպիսի վարմունքով որուն չզիտեմ ինչ մակդիր տամ այսպիսի հրեշտակի նման արարած մը երեւի վրայ թողիր ու փախար քաղաքէն : Վարդուհայն դաշտնիքն ինէ զատ մէկը դիտցող չիկար . և ամեն անգամ որ հետը քու ուշանալուդ վրայ կիսուէի , և քենէ ամենեւին լուր չտալուդ վրայ վարմանք կ'այտնէի , « Սհ , քոյրս , կըսէր ինձի , դու անհոգ եղիր « ես Յակոբայ սիրտը աղէկ դիտեմ , անոր սիրտն որ և է « անդթութիւն չկրնալ ունենալ ինձի դէմ : »

Դու ալ , Յակոբ , շատ չանցաւ անգութ չըլլալդ դործքով յայտնեցիր . յարեց Մարրիկ հեղնելով , Պօլիսէն եկող բարեկամէ լուր առինք որ Բերացի աղջիկան մը հետ նշանուեր , մօտ օրերն ալ հարսնիք ունիս եղեր . քու վրադ Վարդուհայն ունեցած կարծիքը չիտակ ելլաւ , արդարև ի՛նչ սէր , ի՛նչ գութ ի՛նչ բարի սիրտ :

— Տիկին , կազաչեմ , հերիք է . կսկիծներս աւելի կգառնացնես , կաղաղակէ Յակոբ պտղատագին , և դէմքին վրայ խղճի տառապանաց յայտնի նշաններ ցոյց տալով :

— Առանց ծնողացն առջև բան մը յայտնելու , խեղճ քոյրս այն օրէն սկսաւ ծիւրել , քանի քանի անգամ անոնցմէ դազտնի նամակ զրկեց քեզի , պատասխան չառաւ . վերջին նամակ մ'ալ գրեց . և այն անգամ մայրութեան վիճակն ալ յայտնեց ձեզի . այս նամակը քու ձեռքդ հասցնելու համար հաւատարիմ մարդ մը վարձեցինք և յատկապէս անոր ձեռօքը զրկեցինք , վասն զի քոյրս միշտ չէր հաւտար լսածին , և պատասխան չառնելուն հաւանական պատճառ իւր զիբերուն քեզի չժամանալը կկարծէր : Վերջապէս եկաւ այն մարդը որոյ դար-

ձին անհամբեր կսպասէինք ես և քոյրս , և արդէն քու վրայօքդ լրածնիս հաստատելէ զատ , սա պատասխանն ալ բերաւ Վարդուհւոյն :

Տիկին Մաքրիկ նամակ մը կհանէ ծոցէն ու կկարդայ .

« Օրիորդ ,

« Այսուիմ որ դորձերս ու նոր ստացած յարաբերո թիւն .

« ներս չեն ներեր որ հեռանամ ասկէ :

« Բաց յայսմանէ չեմ ուզեր ձեզի այնպիսի յոյս մը տալ որ երբէք իրականութիւն պիտի չկրնայ ունենալ

« Ասկէ յետոյ անգամ կթողում զձեզ , և կկնդրեմ որ

« այնպէս ընէք դուք ալ ինձի նկատմամբ : Արտէք որ

« ուխտ պայմանագրած եմք բնաւ չբաժնուիլ իրարմէ .

« այդ չեմ ուրանար , բայց երբ որ պայման մը երկու պայ-

« մանագիր մասանց կողմանէ աւրուի չեղածի պէս հա-

« մարելի է . ես կդրժեմ ուխտիս , դուք ալ ինձի պէս

« ըրէք , կըմնայ : Սէր ունեցայ արդարև ձեզի համար

« անկեղծօրէն բսելու եմ որ հիմա չունիմ : Դուք ապա

« էիք ինձի ականջ չկախելու , մեք երկուսսարդքս սիրոյ

« մասին յողովոյսմիտ կըլլամք :

« Ընդունեցէք , Օրիորդ , անկեղծութեանս հաւաստիքը :

« Յակոբ Աերսեսեանց »

— Անշուշտ կճանչես զիրդ ու ստորագրութեանդ , կըսէ Տիկին Մաքրիկ , ձեռքի նամակը Յակոբին երկնցունելով : Եթէ վագր մը երբէք գրել դիտնար , ասկէ աւելի անգութ ասկէ աւելի դաժան բան մը կարելի չէր որ դրի առնէր . վագրէ աւելի եղար դու Վարդուհւոյն դէմ որոյ քու վրայ ունեցած սէրը մինչև տկարութեան կհասնէր , և որ քու սիրոյդ ալ անմերժելի հաւաստիքը իւր վերայ կկրէր : Նրբ դու ի Պօլիս հարսանեաց պատրաստութիւն կատենէիր , դժբաղդ քոյրս աղջիկ զաւակ մը աշխարհ բերաւ , և ծնանելուն երկրորդ օրը սաստիկ տենդ

մը վրան դալով , և այս անպատուութիւնը հռչակելէ վախ-
նալնուս բժշկի ինամքէ զուրկ մնալով , տենդը խեղագա-
րութեան իփոսուեցաւ : Արդէն խեղճ աղջիկը շատ հալած
ու մաշած էր , ես ամենեւին չէի բաժնուեր անկողնոյն քո-
վէն : Քանի մը օր յետոյ հանդարտութիւն եկաւ վրան ,
բացաւ աչքերը , նշան ըրաւ որ քովն երթամ , վասն զի
ինք երեքալու անդամ կարողութիւն չունէր , և « Քոյր
« իմ , ըսաւ ինձի , կզգամ որ իմ վերջին ժամս հասած
« է . ես պիտի մեռնիմ . սակայն դիտցած ըլլաս որ Յակո-
« բը սիրելով պիտի մեռնիմ . թէպէտ նա իմ մահուանս
« պատճառ կըլլայ , սակայն ես անոր ներելով ու երկար
օրեր մաղթելով պիտի մեռնիմ : « Ա՛հ Վարդուհի , ըսի
իրեն ես ետ երթալով և օտկումս չկրնալով բռնել , նե-
րել մի , անանկ հրէջի մը , անանկ դազանի մը , որ քո
սիրոյդ այնչափ դառնութեամբ պատասխանեց :

« Հոգ չէ , ըսաւ ինձի ժպտելով , ի՞նչ օգուտ որ ես
« զինքը սիրեցի , եթէ դիտնաս թէ ի՞նչ է սէրը :

« Ես կապրիմ այս խեղճ դատիկովս , պահէ զանի և
« ինամք ունեցիր վրան իմ վրաս ունեցածի պէս : Ա՛վ
« դիտէ , դուցէ օր մը կհանդիպիս Յակոբայ , այն ատեն
« դիտցուր իւր աղջիկն ըլլալը . նաև դիտցուր որ իմ վեր-
« ջին կտակս եղած է ինդրել իրմէ որ հայր անունը չըր-
« շանայ այս խեղճին , թերևս սրտին մէջ սիրոյ մնացորդ-
« մը ունենայ ինձի համար . վասն զի ամենէն չոր բնու-
« թիւններն անդամ իրենց հանդարտ վայրկեաններն ու-
« նին . դուցէ զթայ այս խեղճ արարածին վրայ : Առ
« սա մանեակը , աղջիկս թող միշտ կուրծքը կրէ զայն »
ըսաւ և առանց խօսքն աւարտել կարենալու խեղճ քոյ-
րըս հոգին տուաւ բազկացս մէջ : Տասնեկնը տարեկան
ժաղիկ հասակին մէջ քու վայրագութեանդ զո՛հ եղաւ
Վարդուհի . յարեց Մաքրիկ ոտք ելնելով , և կատաղի
նայուածք մը պատցունելով Յակոբայ երեսը , որ կարծեա

թէ յրասեր մնացեր էր բանբէն վրայ, դէմքը մեղրամուս
 մի գոյն, մէկ կողմանէ կսկիծով, միւս կողմանէ խոզի
 խայթերով անուայեալ. ոչ միայն քոյրս, այլ ասոր մեռ-
 նելէն բանի մը ժամ յետոյ հայրս իմացեր էր ամեն բան
 և այսպիսի անպատուութեան զազաւարին չկրնարով հան-
 դուրժել, յուսահատութենէն և կսկիծէն ատրճանակով
 ինքզինքը վարկաւ, և զանի սենեակին մէջ անկենդան
 դռանը: Բանի մը օր յետոյ մայրս զերեզման իջաւ այս-
 չափ սրտայոյզերու չկրնարով դիմանալ: Կտեսնե՞ս, Յա-
 կոր, ի՞նչ տխուր հետեանք ունեցաւ քու մէկ դժոխային
 վարմունքդ:

— Ա՛հ, Տիկին, կրնէ Յակոր նուազելով ինչո՞ չբաց-
 ուիր գետինն ու դիւ կենդանւոյն կուլ տար:

— Ոչ, Յակոր, ապրէ դու, ըսաւ Տ. Մարտիկ վեհ
 միանդամայն զաժան եղանակաւ բառերը շեշտելով, դու
 ապրէ որ մեր ընտանեաց պատճառաւ չարեացդ փոխա-
 րէնը կրես: Գու մեր գերդաստանին մէջ մահ ու սուղ-
 ողբ ու կոծ սերմանցիր, ահաւասիկ այսօր քու տունդ
 ալ մահ ու սուղ, ողբ ու կոծ սերմանուեցաւ, կըսէ Մար-
 րիկ Չարեհի դիակը ցոյց տալով, թէպէտ Վարդուհի նե-
 րեց ըրածիդ, բայց Սպտուած ոչ. Սպտուած ի՞՞ բազուկ-
 ներս զինեց փառաւոր վրէժխնդրութիւն մը հաներու հա-
 մար: Սակայն անմեղը զոհուեցաւ, ա՛հ, Յակոր, ես ալ
 կալուստսամ քեզի հետ, բայց խոստովանէ որ Նախաինա-
 մութեան մատը կայ այս ամեն բանի մէջ, և որ Նա յա-
 խտենանկան արդարութիւնը և անգաճնայի վճիռը գոր-
 ծագրերու համար երբեմն անմեղներու ալ չկանայէր: Այն
 մանեակը զոր քոյրս հողին փչած վայրկեանին ինծի տը-
 ւառ լախ, և զոր մինչև այսօր անջիկ կուրծքին վրայ կը
 կըրէ . . .

— Աղջիկս, ո՞ւր է աղջիկդ գոնէ անով միտիթարուէի:

— Այն մանեակին գաղանիքն ինձ ըլլալը յետոյ հաս-

կրցայ : Անոր մէկ կողմը քու մանրանկար կենդանագի-
րըդ կայ . ետին փոքրիկ խորշ մը կայ պահարանի պէս
ոսկի դուռով գոցուած , այս դուռը զսպանակով մը կը
բացուի , մէջը բարակ թուղթի կտոր մը դտայ որոյ վրայ
իւր կտակն է դրած , և զոր հիմա աղջիկանդ վրայ պիտի
տեսնես :

Մաքրիկ դէպ ի դուռը կերթայ և հետը բերած աղ-
ջիկը ներս կանչելով Յակոբին առջին կկայնեցնէ , կառնէ
կուրծքէն մանեակը , վրայի մանրանկարը ցոյց կուտայ
ըսելով ,

— Ահաւասիկ պատկերդ , զոր դու ինքնին տուեր ես
իրեն 1845 յուլիս 7 ին ահաւասիկ վրայի թուականը ,
կըսէ Մաքրիկ մանեակին ետև զնդատելի դիտու չափ
զսպանակի մը կոխելով փոքր դուռ մը կբանայ , դուրս
կհանէ մանրանկարը , կուտայ Յակոբին : Վրան ալ երկու
տող ոտանաւոր ունիս դրած , տուր կարդամ .

• Ոտայր ինձ կեալ ցմահ Վարդենուոյդ ընդ շքով ,

• Հոտաեւ սիրաբոյր թերթ ծաղկանցդ ի դորով :

— Վարը ստորագրութիւնդ գրեք ես ահա կտակա-
դիրն ալ .

Մաքրիկ մանր ծալքով բարակ թուղթի կտոր մը բա-
նալով կկտրդայ .

• Սիրելիդ իմ Յակոբ

• Եթէ երբէք այս տողերը ձեռքդ հասնին , գիտնաս
որ ես արդէն շատոնց դադրած եմ ապրելէ , և քու
սրտիդ պէս անտարբեր տատասկներ հող կտրած մար-
մինս ամիսօրող գերեզմանին շաւիղն անդամ ծածկած
եմ : Ահաւասիկ վերջին կամքս , այս գիրը կուրծքը կը-
րող դժբաղդ արարածին զաւակ անունը տաս և հրա-
ման ընես իրեն ալ որ գրեղ հայր յորջորջէ :

• Զքեզ գերեզմանին մէջ անդամ սիրող
• Վարդուհիդ .

— Ո՛հ, ըրաւ Յակոբ այս անգամ արտասուք բղխելով ցամքած աչքերէն, կճանչեմ, զԺբաղդ Վարդուհւոյն գիրն է այն : Աղջիկս ալ ճիշդ իրեն պատկերն ունի, յարեց Յակոբ նուազեալ աչքերը Զարուհւոյն (վարն զի Զարուհի ինքն էր այն) սքանչելատիպ դէմքին վրայ ուղղելով :

— Ուրեմն, կհարցնէ Մաքրիկ, Վարդուհւոյն վերջին կամքը կկատարե՞ս :

— Այո՛, Տիկին, Զարուհիս պիտի ըլլայ վերջին օրերուն միխթարութիւն :

— Ահաւասիկ հայրդ, Զարուհի, կըսէ ասոր, պագ ձեռքը :

Յակոբ լալազին աչօք աղջիկը գրկելով վայելչագեղ ճակատը կհամբուրէ :

— Առ սա հեծե՛քը, կըսէ Մաքրիկ Զարուհիին, որ հայրենի ժառանգութիւնս Իզմիրի մէջ աղարակ մը և տուն մը քեզի կսեպհականէ, ահաւասիկ երկու հազար անգղիական ոսկիի պանֆօն. ասոնք մօրդ իրաւունքն էին եթէ կենդանի ըլլար :

Մաքրիկ այս թուղթերը Զարուհւոյն տալէ յետոյ, անոր գեղանի այտերը կհամբուրէ, և Յակոբին առջե գլխու շարժում մը ընելէ յետոյ, անցայտ կըլլայ սենեակէն նոյն արագութեամբ ինչ արագութեամբ որ եկեր էր, և այն օրէն այս զարմանալի կնոջ վրայ ոչ ոք կրցատեղեկութիւն տալ :

Պաղտնիքը պարզուեցաւ Յակոբի համար, Տ. Մաքրիկ էր այս ամեն շարեաց պատճառ. այս կինը քսան տարիէ ի վեր այս սոսկալի վրէժխնդրութիւնը կտած էր իրեն դէմ, և վերջապէս յաջողած էր գրուի հանելու : Զանազան սրտայոյզերով կծփար Յակոբ, երբ Մկրր ներս կմտնէ, և իրեն յատուկ եղած կասկածօտ նայուածք մը Զարուհւոյն վրայ դարցունելէ յետոյ :

— Կարծեմ հետի կինն ալ Տ. Մաքրիկ ըլլալու էր , կըսէ , դուքսը սրահը դիմացս ելաւ հիմա . թէպէտ երեւսը քող ծածկեր էր : Յակոբ Սղա , խնդիրը լուծուեցաւ , հարկ է որ անսխալէս պէտք եղած տեղն իմաց տամ , երկու օրէ ի վեր անստոյգ կասկած մը ունեի այս չար կընոյ վրայ :

Սրդէն Մկրը սենեակէն դուրս կելնէր երբ ,

— Կեցիր տղաս , կըսէ Յակոբ թեկէն բռնելով , այս ամեն քաշածս իմ երիտասարդութեանս մէջ դորձած մէկ անխոհեմութեանս հետեանքն է , և այս Զարուհին իմ հարալատ աղջիկն է . այսչափ կըսեմ քեզի , կյուսամ որ իմ սիրոյս համար ասկէ աւելին գիտնալու հետամուտ չես ըլլար :

— Զարուհին քու աղջիկդ . . . կընէ Մկրը հինգ վեց քայլ մը ետե կոխելով , և աչքին սև շիջերը ծաւալելով , Զարուհին քու աղջիկդ . . .

Եւ թիկնաթուռն մը վրայ ինկաւ մտածելով ինքրինն ,

— Ես . . . արդէն ես կկասկածէի որ այս բռնեցունն մէջ դաղանիք կայ :

Զարուհի սպանութեան պատճառն ալ դաղանիքը մարդչիկացաւ

. Իսկ Տիկին Մաքրիկ Ստեփան իշխանի հետ որ Հնդկաստանցի քաջասամիկ հայազգի մ'էր , և իւր ամուսնը , Յակոբայ հետ ունեցած տեսակցութեան հետ տեւեալ առաժառնաւ նստաւ , ձալա կզգին ուղևորելու համար :

Քիչ ատենէն հեռացաւ Յակոբ այս տեղերէն որ արևոտը դաղափարներ կարթնցունէին մտքին մէջ , և ուր իրեն անանկ կթուէր որ իւր մէկ անխոհեմութեան լուսեղած անմեղ տղան արիւնը դեռ կծիտէ և Մկրըին հետ Իզմիր աղջիկանը ագարակը առանձնացաւ :

Մկրրի սիրտը որ սիրոյ զդայման ամենեկին անժառանգելի կերակէր, Զարուհւոյն հրապոյրներէն կպարտուի : Ապառմեն թէ այսօր Մկրր մանչ զաւակ մը ունի չորս տարեկան, ասի ամեն անգամ որ հօրը դիրկն կէնէ :

— Հայրիկ :

ըսելով, Մկրր, զանի համբուրելէ յառաջ

— Զաւակս, կրտէ եղբր անոր, ամեն ժամանակ կապկածոտ եղիր, և երբեք չըլլայ որ մարդու վրայ վատահիս :



ՎԵՐՉԱՒԱՆ

Բայց իրաւունք չէ, ընթերցող, խեղճ Սքրահամ Աշայն Ենթակտի ուսիկանութեան բանար թողուլ, որ արդէն քսան օրի շափ ժամանակ անեցաւ Պարոն դնդաւ պետին հետ ըրած անտուային խնճոյքը մարսելու :

Վերջապէս կարող կըլլայ Սքրահամ անմեղութիւնը հաստատելու, և կորուսած ստակները ձեռք ձգելու յոյսեր հետև առնելով կգառնայ Եւսկիւտարս : Տունը ոտք կրկնած վայրկեանին դեռ կնոջը և աղջիկանը երեքը չնայած :

— Ա՛ր է Պօտոս Սղան, կհարցունէ :

Մարիամ յարասուհին չստելու զարնելով դէպի պարտեզ կնայի, Սղանի Տունդին վրայ նստած սև կատուն կսկսի շօյել, իսկ Տիկին Հեղինէ, բերնին միջակէտի ձեւ մը տալէ յետոյ յայտնուի ինչպէս ինչպէս մանկած միտայի :

— Պօտոս Սղան Աղեքսանդրիս դնայ, կրտէ արտեանը նուկը ստէպ շարժելով :

— Որչա՞նէ ե՞րբ ո՞վ դայ :

— Չգիտեմ :

Աբրահամ Աղա կսկսի խորհիլ , թէպէտ վերջին անց-
քերուն համար փետին սոքին բազդաւորութեանը վրայ
սակաւ ինչ դայթաղներ էր : Բայց հաշիւ կընէ որ Պը-
րուսայէն ելած օրը այն ճախորդ պատահմունքն ճիշդ այն
ժամանակ ունեցած էր , երբ ասդին Պօտոս Աղա շողե-
նաւ կնստէր Ափրիկէ երթալու համար : Այս հաշիւը
փետին վրայ ունեցած առջի համարումը տեղը կըբերէ , և
որպէս զի այս ամեն բան ի բարին դառնան , իսկոյն նամակ
կգրէ որ դայ , ըսելով որ « Աղանի կարօտցեր է զինքը ,
« իսկ Տիկին Հեղինէ և ինք սրտերնին իրեն կարօտութենէն
« չը գիտեմ ինչ եղած , ժամ յառաջ դառնալուն կապասն
« ճակատը համբուրելու համար : »

Պօտոս Աղա այս նամակն առնելուն պէս ճամբայ կենէ
ինքիրեն ըսելով ,

— Աներս ճամբորդութենէն դարձեր է , ալ կյաջողիմ
բերդը ներսէն առնելու :

Սակայն խեղճ մարդը Պօլոյ նաւահանդիստին մէջ նա-
ւէն մակոյթ իջած ժամանակ սանդուղքին վրայ ոտքը կա-
հի (ոմանք կպատմեն թէ մէկը ետեէն հրած ըլլայ) և կկո-
նայ ծով , ուր զօրաւոր յորձանք մը ի քթթեւ սական ան-
յայտ կընէ զանի :

Այսպէս կորաւ խեղճ Պօտոս Աղա , որ կենացը քառ-
սունակինը տարին ստակ շահիլ և շահած տաւիլը պահելէ
զատ բան չէր սովորած , և յիսուներորդին մէջ կարծեր էր որ
Աղանիի պէս զգայուն , սիրող , դատարարակեալ , և տաս-
նուվեց տարեկան ծաղիկ հասակին մէջ աղջիկ մը կրնայ
երբէք իրեն վրայ սէր ունենալ :

Վերստին երևան կենէ Արշակ . բայց այս անգամ
դԱբրահամ համոզելու համար երկու հօջօր փաստ ունի
ձեռքը . նախ որ իւր ազգահամարին մէջ ակնյի ճիւղ

մը դտած էր . ուստի ինքն ալ անուղղակի Աբրահամ Ա. զային հայրենակից կհամարուէր , երկրորդ և մանաւանդ որ Արշակ այն օրերը իւր մէկ մերձաւոր ազգականէն մեծագումար ժառանգութիւն ունեցեր էր . Աբրահամ այս երկրորդ փաստը չլսելու բերելով ,

— Իճէնօրի՜ «եջէնէ՛» , ըսաւ . քանի որ այդպէս ի՞նչ , «բիւնէ որէ՞» չի րի տամ աղջիկս :

Եւ մեր երկու անյողգողգ սիրահարներուն սէրն ու միութիւնը օրհնուեցաւ :

Իսկ բաղմահմուտ Պ . Մակարին դալով , ժամանակակից պատմադիրք կըսեն որ մամէն լսած մէկ աւանդական պատմութիւնը Մկրտիչին լսելի ընելէ յուսահատ , սենեակը կըբաշուի , դուռը կգոցէ և պատմելու փափազը դահայնելու համար պատերուն կպատմէ զայն : Մեր ընթերցողին բարի բաղդէն անոր սենեակին պատերն ականջ ունեցող տեսակէն չեն եղեր :



« Ազգային գրադարան



NL0109848

